«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
# 12 (1)

Երևան 2024

ISSN 1829-3980

# Ցեղասպանագիտական հանդես

*Գլխավոր խմբագիր*
**Հարություն Մարության**, պ.գ.դ.,
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

*Գլխավոր խմբագրի տեղակալ*
**Նարինե Մարգարյան**, պ.գ.թ.,
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

*Խմբագրական խորհուրդ*

**Մելինե Անումյան**, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն, Հայաստան

**Արսեն Ավագյան**, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

**Ռայմոնդ Գևորգյան**, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

**Անդրանիկ Դաքեսյան**, քաղաքագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան, Լիբանան

**Ռոբերտ Թաթոյան**, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

**Վահե Թաշճյան**, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր,Գերմանիա

**Վալերի Թունյան**, պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

**Անահիտ Խոսրոևա**, պ.գ.թ., Միջին Արևելքի ուսումնասիրությունների կենտրոն, Չիկագոյի համալսարան, ԱՄՆ

**Աշոտ Հայրունի**, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

**Էլկե Հարթման**, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Բեռլինի ազատ համալսարան, Գերմանիա

**Սևանե Ղարիբյան**, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան, Շվեյցարիա

**Հայկ Մարտիրոսյան**, պ.գ.թ., Լեփսիուսհաուս, Պոտսդամ, Գերմանիա

**Վահրամ Շեմմասյան**, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

**Պետրոս Տեր-Մաթոսյան**, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

**Ռուբինա Փիրումյան**, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

## *Ts'eghaspanagitakan handes* ("Journal of Genocide Studies")

*Editor in Chief:*
**Dr. Harutyun Marutyan**, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

*Associate Editor:*
**Dr. Narine Margaryan**, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

### *Editorial Board*

**Dr. Meline Anumyan**, Research Center on Western Armenian Studies, Armenia

**Dr., Prof. Arsen Avagyan**, Yerevan State University, Armenia

**Dr. Antranik Dakessian**, Haigazian University, Lebanon

**Dr., Prof. Bedross Der Matossian**, University of Nebraska-Lincoln, USA

**Dr., Prof. Elke Hartmann**, Free University Berlin, Germany

**Dr., Prof. Ashot Hayruni**, Yerevan State University, Armenia

**Dr., Prof. Sévane Garibian**, University of Geneva, Switzerland

**Dr., Prof. Raymond Kevorkian**, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

**Dr. Anahit Khosroeva**, Center for Middle Eastern Studies, University of Chicago, USA

**Dr. Hayk Martirosyan**, Lepsiushaus, Potsdam, Germany

**Dr., Prof. Rubina Peroomian**, University of California, Los Angeles (UCLA), USA

**Dr., Prof. Vahram Shemmassian**, California State University, Northridge, USA

**Dr. Vahé Tachjian**, Houshamadyan Project, Germany

**Dr. Robert Tatoyan**, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

**Dr. Valery Tunyan**, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

## *Цехаспанагитакан андес* (“Журнал исследований геноцида”)

*Главный редактор*
**Арутюн Марутян**, доктор ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения
*Заместитель главного редактора*
**Нарине Маргарян**, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

*Редакционная коллегия*

**Арсен Авагян**, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

**Ашот Айруни**, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

**Мелине Анумян**, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов, Армения

**Элке Артманн**, доктор истории, профессор, Свободный университет Берлина, Германия

**Севанэ Гарибян**, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

**Раймонд Геворгян**, доктор истории, профессор, иностранный член Национальной академии наук Республики Армения, Франция

**Андраник Дакесян**, доктор политологии, Айказян университет, Ливан

**Айк Мартиросян**, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусхаус), Потсдам, Германия

**Рубина Пирумян**, доктор филологии, профессор, Калифорнийский университет в Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

**Роберт Татоян**, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

**Ваге Ташчян**, доктор истории, проект “Ушамадян,” Германия

**Петрос Тер-Матосян**, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна, Соединённые Штаты Америки

**Валерий Тунян**, доктор ист. наук, профессор, Институт истории Национальной академии наук Республики Армения

**Анаит Хосроева**, канд. ист. наук, Центр ближневосточных исследований, Чикагский университет, США

**Ваграм Шеммассян**, доктор филологии, профессор, Калифорнийский государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

*Ցեղասպանագիտական հանդեսը* (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ:
*Ցեղասպանագիտական հանդեսում* տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մոտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար:
*Ցեղասպանագիտական հանդեսն* ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցչի (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում:
Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

*Ts'eghaspanagitakan handes* ("Journal of Genocide Studies") (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tstitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide.
Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors.
*Journal of Genocide Studies* is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI).
Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

*Цехаспанагитакан андес* ("Журнал исследований геноцида") (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом "Музей-институт Геноцида армян" (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян.
Статьи, обзоры и другие материалы, опубликованные в "Журнале исследований геноцида," отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда "Музей-институт Геноцида армян." Фонд "Музей-институт Геноцида армян" не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами.
"Журнал исследований геноцида" индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

**Ռոբերտ Ա. Թաթոյան**
*Աքսորյալ զեյթունցիների զինված դիմադրության փորձը Դեր Զորի անապատում*........ 9

**Վերժինե Գ. Սվազլյան**
*Հայ կինը ցեղասպանության և ինքնապաշտպանական հերոսամարտերի ընթացքում. դրվագներ* ......................................................................................49

**Աննա Ա. Կազարյան**
*Էրզրումի նահանգի Քղի գավառակի հայության տեղահանությունը. Քղիից դեպի Դեր Զոր* ......................................................................................63

**Նարեկ Մ. Պողոսյան**
*Ցեղասպանության իրագործման արդի սպառնալիքները* .........................................76

*Էթիկայի կանոններ* ......................................................................................103

*Ցուցումներ հեղինակներին* ...................................................................... 104

# CONTENT

## ARTICLES

**Robert A. Tatoyan**
*Armed Resistance Attempt of Deported Armenians from Zeitun in Der Zor Desert* ....... 9

**Verjine G. Svazlian**
*The Tragic and Heroic Events of the Armenian Genocide According to the Testimonies of the Women Eyewitness Survivors. Episodes.* ..............49

**Anna A. Kazaryan**
*Deportation of Armenians from the Sub-District of Keghi, Erzerum Province: From Keghi to Der Zor* ..........63

**Narek M. Poghosyan**
*Modern Threats of Genocide* ..........76

*Ethical Guidelines* ..........103

*Instruction for Authors* .......... 104

# СОДЕРЖАНИЕ

## СТАТЬИ

**Роберт А. Татоян**
*Попытка вооруженного сопротивления депортированных армян из Зейтуна в пустыне Дер Зор* ........ 9

**Вержине Г. Свазлян**
*Армянская женщина во время геноцида и героических самооборонительных сражениях. Эпизоды.* ........ 49

**Анна А. Казарян**
*Депортация армянского населения района Кегы Эрзерумской провинции: от Кегы до Дер Зора* ........ 63

**Нарек М. Погосян**
*Современные угрозы геноцида* ........ 76

*Правила этики* ........ 103

*Руководство для авторов* ........ 104

https://doi.org/10.51442/jgs.0051

# ԱՔՍՈՐՅԱԼ ԶԵՅԹՈՒՆՑԻՆԵՐԻ ԶԻՆՎԱԾ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ ԴԵՐ ԶՈՐԻ ԱՆԱՊԱՏՈՒՄ

*Ռոբերտ Ա. Թաթոյան*
*«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ*

Հոդվածում լուսաբանվում է Հայոց ցեղասպանության երկրորդ փուլի ընթացքում հայերի ինքնապաշտպանության բացառիկ դրվագի՝ 1916 թ. ամռանը Դեր Զորի համակենտրոնացման ճամբարի լուծարումից հետո հայ աքսորյալների՝ անապատ քշված քարավաններից մեկում զեյթունցիների զինված դիմադրության պատմությունը:

Աշխատանքի աղբյուրագիտական հիմքը ականատես-վերապրածների վկայություն-հուշագրություններն են, հատկապես Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդերում պահվող՝ Տիգրան Մակարյանի անտիպ հուշագրությունը:

Համաձայն աղբյուրների տեղեկությունների՝

1. դիմադրությունը տեղի է ունեցել 1916 թ. օգոստոսի առաջին կեսին Շեդադիեի համակենտրոնացման ճամբարում,
2. դիմադրության անմիջական պատճառն աշխատանքային գումարտակներում տղամարդկանց բռնի հավաքագրման փորձն էր,
3. դիմադրությունը տևել է երկու-երեք օր և դաժանորեն ճնշվել է,
4. դիմադրությանն անմիջականորեն մասնակցած հայ տղամարդկանց թիվը եղել է 100-120, որոնց մոտ մեկ երրորդն ունեցել է հրազեն,
5. դիմադրության ճնշմանը մասնակցել են 200 հեծելազորային ժանդարմներ, նաև արաբների ու չերքեզների օժանդակ զորաջոկատներ. ջարդարարներից սպանվել է առնվազն 8 հոգի,
6. դիմադրության ճնշման գործողությունները ղեկավարել է անձամբ Դեր Զորի գավառապետ Սալիհ Զեքին:

**Բանալի բառեր՝** Հայոց ցեղասպանություն, Դեր Զոր, Շեդադիե, Զեյթուն, դիմադրություն, բռնագաղթ, համակենտրոնացման ճամբար:

Հոդվածը ներկայացվել է՝ 10.01.2024: Ընդունվել է տպագրության 18.04.2024:
The article was submitted on 10.01.2024 and accepted for publication on 18.04.2024.
Статья поступила 10.01.2024 и была принята к публикации 18.04.2024.

**Ինչպես հղել՝** Ռոբերտ Ա. Թաթոյան, «Աքսորյալ զեյթունցիների զինված դիմադրության փորձը Դեր Զորի անապատում», *Ցեղասպանագիտական հանդես* 12, no. 1 (2024), 9-48:
**How to cite:** Robert A. Tatoyan, “Armed Resistance Attempt of Deported Armenians from Zeitun in Der Zor Desert,” *Ts’eghaspanagitakan handes* 12, no. 1 (2024): 9-48.
**Как ссылаться:** Роберт А. Татоян, “Попытка вооруженного сопротивления депортированных армян из Зейтуна в пустыне Дер Зор,” *Цехаспанагитакан андес* 12, no. 1 (2024): 9-48.

## Ա. Աղբյուրներ

Սույն աշխատանքը նվիրված է Հայոց ցեղասպանության երկրորդ փուլի[1] ընթացքում հայերի ինքնապաշտպանության բացառիկ դրվագի՝ 1916 թ. ամռանը Դեր Զորի համակենտրոնացման ճամբարի[2] լուծարումից հետո հայ աքսորյալների՝ անապատ քշված քարավաններից մեկում զեյթունցիների զինված դիմադրության պատմությանը[3]:

Աշխատանքի աղբյուրագիտական հիմքը ականատես-վերապրածների վկայություն-հուշագրություններն են, հատկապես Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտու-

---

1 Ընդունված է Հայոց ցեղասպանության «երկրորդ փուլ» անվանել 1915-1916 թթ. Սիրիայի և Միջագետքի տարածքներում ստեղծված համակենտրոնացման ճամբարներում հայերի զանգվածային բնաջնջման շրջանը: Երկրորդ փուլի մասին տե՛ս մասնավորապես ֆրանսահայ ուսումնասիրող Ռայմոն (Հարություն) Գևորգյանի պատրաստած «Հայ աքսորյալների բնաջնջումը Սիրիա-Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում (1915-1916). ցեղասպանության երկրորդ փուլ» ֆրանսերեն աշխատությունը (“L’Extermination des déportés arméniens ottomans dans les camps de concentration de Syrie - Mésopotamie (1915-1916): La deuxième phase du génocide,”*Revue d’histoire arménienne contemporaire 2* (1998), volume prepare par Raymond H. Kevorkian, 336 pp.), որը պարունակում է բազմաթիվ վերապրածների վկայություններ, և նույն հեղինակի «Հայոց ցեղասպանությունը. ամբողջական պատմություն» ուսումնասիրության «Ցեղասպանության երկրորդ փուլը. 1915 թ. աշուն – 1916 թ. դեկտեմբեր» բաժինը (Raymond Kévorkian, *The Armenian Genocide. A Complete History* (London-New York: I.B.Tauris & Co Ltd, 2011), 625-696):

Նշված ուսումնասիրությունների համատեքստում կարևորվում է նաև աքսորակայաններում հայ տարագիրների ընդհանուր կացության, նրանց օգնության տրամադրմանն ու փրկության կազմակերպմանն առնչվող հարցերի լուսաբանումը (տե՛ս հատկապես Խաչիկ Մուրադյանի (Khatchig Mouradian, *The Resistance Network. The Armenian Genocide and Humanitarianism in Ottoman Syria, 1915-1918* (East Lansing, Michigan: Michigan State University Press, 2021), 236 էջ) և Հիլմար Կայզերի (Հիլմար Կայզեր, *Դեյր Էզ-Զորի խաչուղիներում: Մահ, վերապրում և ընդհապակյա մարդասիրական դիմադրություն Հալեպում 1915-1917 թթ.* (Երևան, 2015), 118 էջ) աշխատությունները):

Ուսումնասիրողներն անգամ շրջանառության մեջ են դրել «հումանիտար (մարդասիրական) դիմադրություն» եզրույթը՝ նկատի ունենալով Հայոց ցեղասպանության տարիներին հայ և օտարերկրացի անհատների ու կառույցների գործադրած այն բոլոր մարդասիրական ջանքերն ու գործողությունները, որոնք ուղղված էին հայ գաղթականների վիճակի բարելավմանը և հայերի փրկությանը (եզրույթի բնորոշումը տե՛ս Հիլմար Կայզերի արդեն հիշատակված աշխատության մեջ, ինչպես նաև Խաչիկ Մուրադյանի «Ցեղասպանություն և հումանիտար դիմադրությունը Օսմանյան Սիրիայում 1915-1916 թթ.» հոդվածում (Khatchig Mouradian, “Genocide and Humanitarian Resistance in Ottoman Syria, 1915-1916,” *Études arméniennes contemporaines* [Online], 7 (2016), http://journals.openedition.org/eac/1023, դիտվել է՝ 30.06.2023), որոնցում եզրույթը կիրառված է վերնագրում):

2 Ուսումնասիրության մեջ *համակենտրոնացման ճամբար, համակենտրոնացման կայան, աքսորակայան* և *գաղթակայան* եզրույթները գործածվում են որպես հոմանիշներ:

3 Այս դրվագը, չնայած իր եզակիությանը, պատմագիտական գրականության մեջ շատ հպանցիկ է ուշադրության արժանացել, ինչը, ըստ երևույթին, պայմանավորված է հետազոտողներին հասանելի սկզբնաղբյուրների՝ դրվագի մասին սուղ տեղեկություններ պարունակելու հանգամանքով: Այսպես, Ռայմոն (Հարություն) Գևորգյանն իր «Հայոց ցեղասպանությունը. ամբողջական պատմություն» մենագրության մեջ հաղորդում է, որ 550 հայ տղամարդու սկզբնապես հավաքել են Դեր Զորի Ղըշլա թաղամասի զորանոցում, որոնք այնտեղ մնացել են յոթ օր առանց բավարար սննդի և ջրի: Բանտարկությունը վերապրածներին այնուհետ շղթայված տարել են դեպի Սուվար (Եփրատի վտակ Խաբուր գետի ափին ընկած բնակավայր՝ Դեր Զորից մոտ 45 կմ դեպի արևելք) և խումբ առ խումբ սպանել՝ չնայած դիմադրությանը (դիմադրության մանրամասնությունները չեն ներկայացվում) (տե՛ս Kévorkian, *The Armenian Genocide. A Complete History*, 665): Իսկ Խաչիկ Մուրադյանը հաղորդում է, որ դիմադրությունը տեղի է ունեցել Սուվարից հյուսիս ընկած Շեդադիե բնակավայրի մոտակայքում: Մի խումբ տարագիրներ, գիտակցելով, թե ինչ ճակատագիր է սպասվում իրենց, վրանների ձողերով գրոհել են քարավանն ուղեկցող չեչենների վրա: «Ընդվզումը», սակայն, անմիջապես ճնշվել է (տե՛ս Mouradian, *The Resistance Network,* 137):

տի (ՀՑԹԻ) գիտական ֆոնդերում պահվող՝ ծնունդով ալբիստանցի Տիգրան Մակարյանի անտիպ հուշագրությունը[4]: Լինելով զեյթունցիների քարավանում՝ Տ. Մակարյանը եղել է դեպքերի ականատեսը՝ թողնելով դրանց մանրամասն նկարագրությունը: Նրա հուշագրությունը վերոնշյալ դրվագի մասին պատմող հիմնական աղբյուրն է[5]:

Տիգրան Մակարյանը, սակայն, իր հուշերը թղթին է հանձնել 1964 թ.՝ դեպքերից մոտ 50 տարի անց, ինչը հանգեցրել է դրվագին առնչվող որոշ կարևոր իրողությունների ու փաստերի բացթողմանը, թերի ու թյուր ներկայացմանը: Ուստի հուշագրի հաղորդած տեղեկությունների վավերականությունը ստուգելու, դրանք լրացնելու, ինչպես նաև պատմական առավել լայն համայնապատկերում ներկայացնելու նպատակով ներառել ենք այլ աղբյուրներից քաղված տվյալներ (այլ ականատես-վերապրածների վկայություններ, դիվանագիտական փաստաթղթեր, պատմագիտական ուսումնասիրություններ ևն):

Բացի Տիգրան Մակարյանի հուշագրությունից՝ տեղի ունեցածի մասին հիշատակություններ ենք գտնում նաև ծնունդով սիվրիհիսարցի Գարեգին Հովհաննեսյանի[6] և ծնունդով զեյթունցի Նազարեթ Մուրադյանի[7] վկայություններում, ծնունդով մարաշցի Սամվել Սահակի[8], ծնունդով զեյթունցի Հարություն Գալայջյանի[9] և ծնունդով այնթապցի Տիգրան Ճեպեճյանի[10] հուշերում: Դրվագի մասին տեղեկություններ կան նաև արևմտահայ անվանի մտավորական Արամ Անտոնյանի գրառումներում[11]: Հարկ

---

4 «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտական ֆոնդեր (այսուհետ՝ ՀՑԹԻ ԳՖ), բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160 (հուշագրությունը մեքենագիր է՝ տպված A4 ձևաչափի թղթի վրա):

5 Դեպքերի նկարագրությունն ամփոփված է հուշագրության 112-118-րդ թերթերում:

6 Գարեգին Հովհաննեսյանի վկայությունն առաջին անգամ հրատարակվել է ֆրանսերեն՝ թարգմանությամբ Ռայմոն (Հարություն) Գևորգյանի (տե՛ս “L’Extermination des déportés arméniens ottomans dans les camps de concentration de Syrie – Mésopotamie (1915-1916),” 195-198): Վկայության հայերեն բնագիր տեքստը, որը պահվում է Փարիզի Նուբարյան գրադարանում (տե՛ս BNu/Fonds A. Andonian, Matériaux pour l’histoire du génocide, P.J.1/3, liasse 52, Der Zor/Տէր Զօր, ff. 1-11), մեզ է տրամադրել ՀՑԹԻ տնօրենի խորհրդական Միհրան Մինասյանը:

7 *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, Edited by Wolfgang Gust (New York – Oxford: Berghahn Books, 2014), 676-677:.

8 Սամուէլ Սահակ, «Յուշեր Տէր Զօրի սպանդանոցէն», *Յառաջ օրաթերթ՝ ազգային, քաղաքական, գրական* (Փարիզ), 16 մարտ 1934, 2 (Սամվել Սահակը հեղինակի գրական կեղծանունն է, իսկական անունը պարզել մեզ չի հաջողվել):

9 Յարութիւն Գալայճեան, *Միլիոնէն Մէկը: Ցեղասպանութեան Ականատես Զէյթունցի Պատանիի Մը Յուշերը* (Պէյրութ, 2018), 40-42:

10 Տիգրան Ճէպէճեան, «Տէր Զօրի Սպանդը», *Հայ Անթէպ 6*, թիւ 2 (18) (1965), 15-16, որոշ փոփոխություններով և լրացումներով՝ Տիգրան Ճեպեճեան, *Ապրուած օրեր հայասպանութենէն (Տէր Զօր, 1915)* (Հալէպ, 2001), 16-17:

11 Արամ Անտոնյանի գրառումներից որոշ հատվածներ, այդ թվում՝ այս դրվագը, առաջին անգամ հրատարակվել են ֆրանսերեն՝ թարգմանությամբ Ռայմոն (Հարություն) Գևորգյանի (տե՛ս “L’Extermination des déportés arméniens ottomans dans les camps de concentration de Syrie – Mésopotamie (1915-1916),” 175-180): Հայերեն բնագիր տեքստը պահվում է Փարիզի Նուբարյան գրադարանում (տե՛ս BNu/Fonds A. Andonian, Matériaux pour l’histoire du génocide, P.J.1/3, liasse 52, Der Zor/Տէր Զօր, ff. 53-58): Այն մեզ տրամադրել է ՀՑԹԻ տնօրենի խորհրդական Միհրան Մինասյանը: Արամ Անտոնյանի՝ Մեծ եղեռնի պատմագրման ու վավերագրման աշխատանքների մասին մանրամասն տե՛ս Միհրան Մինասեան, «Արամ Անտոնեան եւ Հայոց ցեղասպանութեան վաւերագրումի իր հաւաքչական աշխատանքը Հալէպի մէջ», *Սիրիահայերի հիմնահարցեր. պատմություն և արդիականություն:*

է արձանագրել, որ վերոնշյալ հեղինակները, ի տարբերություն Տիգրան Մակարյանի, անմիջականորեն չեն առերեսվել դեպքերին. նրանք իմացել են դրվագի մասին ականատեսներից և վերապատմել իրենց լսածը[12]: Այդ պատճառով դեպքերի մասին նրանց վկայությունները, Տ. Մակարյանի պատմածի համեմատությամբ, շատ ավելի հակիրճ են: Այդուհանդերձ, դրանք որոշակի մանրամասնություններ են պարունակում, որոնք բացակայում են Տ. Մակարյանի հուշերում[13]:

Ն. Մուրադյանի, Գ. Հովհաննեսյանի և Ա. Անտոնյանի վկայությունները հավաքվել են դեպքերից շատ չանցած: Մուրադյանի վկայությունը գրի է առել շվեյցարացի միսիոներուհի Բեատրիս Ռոները[14] 1916 թ. աշնանը Հալեպում և անմիջապես փոխանցել Հալեպում Գերմանիայի հյուպատոս Վալտեր Ռյոսլերին: Հովհաննեսյանն անձամբ է գրել իր վկայությունը և հանձնել Արամ Անտոնյանին 1918--1919 թթ. Հալեպում. նշված շրջանին են վերաբերում նաև դրվագի մասին անանուն աղբյուրից Արամ Անտոնյանի ստացած տեղեկությունները: Սամվել Սահակի հուշերը հրապարակվել են մաս առ մաս 1934 թ. «Յառաջ» օրաթերթում: Տիգրան Ճեպեճյանն իր վկայությունը սկզբնապես ներկայացրել է որպես զեկուցում՝ ընթերցելով այն 1955 թ. Մեծ եղեռնի ոգեկոչման արարողության ժամանակ Հալեպի Կրթասիրաց վարժարանում:

Արժանահիշատակ են դրվագի մասին խիստ համառոտ և աղավաղված տեղեկությունները հայ տարագիրների քարավանների բնաջնջմանը մասնակցած ոչ կանոնավոր զորաջոկատներից մեկի ղեկավար չեչեն (չերքեզ)[15] Մահմուդ բեկի պատմածներում, որոնք գրի է առել Նշան Մաթոսյանը 1918 թ. մարտին[16]:

---

*Գիտաժողովի նյութերի ժողովածու* (Երևան, 2021), 139-158, տե՛ս նաև Միհրան Մինասեան, «Արամ Անտոնեանի անտիպ գրառումները Տէր Զօրի կոտորածներուն մասին», *Հայկազեան հայագիտական հանդէս, ԼԵ* (Պէյրութ, 2015), 685-724:

12 Գարեգին Հովհաննեսյանը, Սամվել Սահակը և Նազարեթ Մուրադյանը չեն նշում իրենց տեղեկություններ հաղորդած անձանց անունները. առաջինը որպես աղբյուր նշում է «Խասըրճայէն փախչող երիտասարդ մը», մյուսները՝ քարավանից վերապրած վիրավոր զեյթունցիների: Արամ Անտոնյանը ևս չի նշում իրեն տեղեկություններ հաղորդած անձի անունը: Տիգրան Ճեպեճյանի աղբյուրը այնթապցի Հարություն Սըլզըտջյանն էր, Հարություն Գալայջյանինը՝ ծնունդով զեյթունցի Գրիգոր Ալեքսանյանը:

13 Նշենք, որ դրվագի հիշատակումը նման համեմատաբար մեծ թվով ոչ անմիջական վկաների կողմից ինքնին տեղի ունեցածի նշանակալիության ցուցիչ է:

14 Բեատրիս Ռոները 1915-1917 թթ. աշխատանք է տարել Հալեպի նահանգում հայ տարագիրների փրկության ուղղությամբ: Նրա գործունեության մասին մանրամասն տե՛ս Hans-Lukas Kieser, “Beatrice Rohner’s Work in the Death Camps of Armenians in 1916.” In: Jacques Sémelin, Claire Andrieu, Sarah Gensburger (eds.), *Resisting Genocide: The Multiple Forms of Rescue* (London: C. Hurst, 2014), 367-382:

15 *Չերքեզներ* հավաքական անվանումով էին հայտնի ռուսական զորքերի կողմից 1864 թ. Կովկասի վերջնական նվաճումից հետո Օսմանյան կայսրություն գաղթած իսլամադավան կովկասյան ժողովուրդների ներկայացուցիչները, այդ թվում՝ *չեչենները*: Հայոց ցեղասպանության տարիներին չերքեզներն ակտիվորեն ընդգրկված էին ժանդարմերիայի ջոկատներում, որոնց վրա էր դրված հատկապես Դեր Զորում հայ տարագիրների քարավանների ոչնչացումը: Ականատես-վերապրածների վկայություններում *չեչեններ* և *չերքեզներ* անվանումները հաճախ գործածվում են որպես հոմանիշներ: Հայոց ցեղասպանությանը չերքեզների մասնակցության մասին տե՛ս մասնավորապես Արսեն Ավագյան, «Չերքեզական ջոկատների մասնակցությունը 1915 թ. հայերի ցեղասպանությանը», *Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր,* 4 (2001), 29-35, հմմտ. Арсен Авакян, *Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.)* (Ереван: Музей-институт Геноцида армян, 2001), 238-243:

16 Այն ժամանակ Հալեպի երկաթգծի սպասարկման ծառայությունում փոքր պաշտոն վարելով՝

### Բ. Զեյթունցիների և ալբիստանցիների բռնագաղթը 1915 թ. Դեր Զոր և հայ աքսորյալների կացությունը Դեր Զորում մինչև 1916 թ. ամառ

Տիգրան Մակարյանը ծնունդով Մարաշի գավառի Ալբիստան գյուղաքաղաքից էր (Մեծ եղեռնի նախօրյակին ուներ մոտ 4 000 հայ բնակչություն[17]): Ծնվել է 1901 թ., այսինքն՝ 1915 թ. 14 տ. էր: Հեղինակի հայրը՝ Հովհաննես Մակարյանը, մասնագիտությամբ բժիշկ էր, Ալբիստան էր տեղափոխվել հարևան Սեբաստիայի գավառի Կյուրին բնակավայրից[18] և կարճ ժամանակում հասել հաջողությունների՝ բացելով սեփական փոքր կլինիկան և դեղատունը[19]: Ինչպես և ժամանակի շատ հայ ընտանիքներ, Մակարյանների ընտանիքը ևս բազմանդամ էր: Տիգրանը տան կրտսեր զավակն էր. ուներ երկու եղբայր և երեք քույր[20]:

1915 թ. սկզբին Տիգրանի եղբայրները սովորում էին Բեյրութի բժշկական ուսումնական հաստատություններում, քույրերից մեկն ամուսնացած էր, մյուս երկուսն ուսանում էին Մարաշի բողոքական աղջկանց վարժարանում: Ծնողների հետ էր մնացել և հետևաբար նրանց հետ բռնագաղթի ենթարկվել միայն Տիգրանը:

Ինչպես հայտնի է, Հայոց ցեղասպանության ընթացքում արևմտահայության տեղահանության առաջին զանգվածային գործողությունը տեղի է ունեցել 1915 թ. մարտմայիս ամիսներին Զեյթունում և նրան հարակից Ալբիստանի և Գյոքսունի (Կոկիսոն) գավառակներում: Աղբյուրների վկայությամբ՝ նշված գործողության շրջանակում աքսորվել է մոտ 26 500 հայ, որից 5 000-ն ուղարկվել են Կոնիա, 5 500-ը՝ Հալեպ, իսկ մնացած 16 000-ը՝ Եփրատ գետի երկայնքով ձգվող բնակավայրեր՝ Ռաքքա, Սաբղա և Դեր Զոր, որոնց կից հետագայում ստեղծվել են բռնագաղթյալ հայերի համակենտրոնացման ճամբարներ[21]: 1915 թ. ապրիլի 8-ին, 11-ին և 13-ին բռնագաղթի են ենթարկ-

---

տեսակցություն է ունեցել ջարդարարի հետ, խոսեցրել նրան Դեր Զորում հայերի բնաջնջման գործողության մասին և գրի առել պատմածները (Մահմուդ բեկի պատմածն ամբողջությամբ տե՛ս *Տէր Զօր: Հեղինակ՝ Աղէտէն վերապրողներ* (Փարիզ, տպ. Պ. Էլէկեան, 1955), 228-239, դիմադրության դրվագի մասին տե՛ս նույն տեղում, 231):

17 Գրիգոր Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն* (Բ. Տպագրութիւն, Լոնկ Այլընտ Սիթի, Ն.Ե., 1988), 70, տե՛ս նաև Ռոբերտ Թաթոյան, *Կիլիկիահայության թիվը Հայոց ցեղասպանության նախօրյակին* (Երևան, ՀՑԹԻ հիմնադրամ, 2021), 132-133: Հուշագրության հեղինակի տվյալներով՝ Ալբիստանում բնակվում էր 3 700–3 800 հայ (տե՛ս ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 5):

18 Ընկած է Ալբիստանից մոտ 80 կմ դեպի հյուսիս:

19 ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 5:

20 Նույն տեղում, թերթ 57:

21 Տեղեկությունը՝ դեպքերի ականատես ամերիկացի բժիշկ-միսիոներ, դոկտոր Ֆրեդ Շեպարդի (*The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16. Documents Presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs by Viscount Brice. With a Preface by Viscount Brice* (London: HM Stationery Office, 1916), 472) (վերցված է փաստաթուղթ № 120-ից (Cilicia: Letter, dated 20th June, 1915, from Dr. L., a foreign resident in Turkey; communicated by the American Committee for Armenian and Syrian Relief)): Հեղինակի անունը՝ ըստ ժողովածուի չգրաքննված տարբերակի՝ Արա Սարաֆյանի հրատարակության (James Bryce and Arnold Toynbee, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916*, edited and with an introduction by Ara Sarafian (Gomidas Institute: Taderon Press, Princeton, New Jersey, 2000), 482-483):
Հալեպում ԱՄՆ հյուպատոս Ջեսի Ջեքսոնի տվյալներով՝ մայիսի 12-ի դրությամբ Զեյթունից ու

վել բուն Զեյթունի հայերը[22], նրանցից անմիջապես հետո՝ Ալբիստանի և Գյոքսունի հայերը[23]: Սիրիա ուղևորվող ալբիստանցի հայերի քարավանի հետ ճամփա է ընկել նաև Մակարյանների ընտանիքը[24]:

Հուշագրի վկայությամբ՝ դեպի Դեր Զոր քշվող ալբիստանցի հայերի քարավանի միջանկյալ հիմնական հանգրվաններն էին Մարաշը, Բիրեջիկը, Ուրֆան (Եդեսիա), Ռաքքան և Սաբղան: Հեղինակը չի հաղորդում քարավանի ընթացքի հստակ ժամանակագրությունը, սակայն արձանագրում է հիմնական հանգրվանից հանգրվան ուղու տևողությունը. Մարաշում հանգիստը՝ առնվազն հինգ օր[25], Մարաշից Բիրեջիկ ճանապարհը՝ հինգ օր, Բիրեջիկում հանգիստը՝ երեք օր, Բիրեջիկից Ուրֆա ճանապարհը՝ երեք օր, Ուրֆայում հանգիստը՝ վեց օր, Ուրֆայից Ռաքքա ճանապարհը՝ 11 օր, Ռաքքայում հանգիստը՝ երկու օր, և Ռաքքայից Սաբղա ճանապարհը՝ հինգ օր[26]: Վերոնշյալից կարելի է ենթադրել, որ Ալբիստանից մինչև Սաբղա քարավանի ուղու ընդհանուր տևողությունը պետք է կազմեր 47-50 օր[27]: Այսպիսով, եթե ալբիստանցիների ուղևորության մեկնակետ ընդունենք ապրիլի երկրորդ կեսը, ապա նրանք

---

Մարաշի գավառի այլ շրջաններից տեղահանվել էր 4 300-4 500 ընտանիք՝ 28 000 հայ (տե՛ս *United States Official Documents on the Armenian Genocide. Volume I: The Lower Euphrates*, Compiled and introduced by Ara Sarafian (Watertown, Mass.: Armenian review, 1993), 14): Այլ տեղեկություններով՝ 1915 թ. ապրիլ-մայիս ամիսներին տեղահանված հայերի թիվն ավելի մեծ է եղել: Այսպես, 1915 թ. հունիսի սկզբին Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հանս ֆոն Վանգենհայմին փոխանցված Սսի կաթողիկոս Սահակ Բ Խապայանի տվյալներով, տեղահանվել էր մոտ 30 000 հայ Զեյթունից, Ալաբաշից, Ալբիստանից, Դորթ-Յոլից և Հասանբեյլիից (տե՛ս *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, 211): Մեկ այլ վիճակագրությամբ, որը, ըստ էության, ավելի ամբողջական է՝ ներառելով նաև Դորթ-Յոլի ու Հասանբեյլիի տեղահանված հայերի թիվը, աքսորվել էր մոտ 32 000 մարդ, որից մոտ 8 000-ը (հիմնականում կանայք և երեխաներ) տարվել էին Կոնիա, մոտ 5 000-ը՝ Հալեպ, և 19 000-ը՝ Միջագետք (տե՛ս Սեպուհ Ակունի, *Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը* (Կ. Պոլիս, տպագր. Յ. Ասատուրեան և որդիք, 1920), 52):

22 Լեւոն Վարդան, *Ժամանակագրութիւն հայկական պաանիինգի* (Պէյրութ, տպարան «Ատլաս», 1975), 33 և 69 (ծանոթագրություն), տե՛ս նաև Kévorkian, *The Armenian Genocide. A Complete History,* 587:

23 Kévorkian, *The Armenian Genocide. A Complete History,* 588: Զեյթունի հայերի տեղահանության մասին մանրամասն տե՛ս Հայկազ Պողոսյան, *Զեյթունի պատմությունը 1409-1921 թթ.* (Երևան, «Հայաստան» հրատ., 1969), 396-402:

24 Նախքան քարավանների շարժվելը հնարավոր դիմադրության վտանգը չեզոքացնելու նպատակով օսմանյան իշխանությունները Մարաշ էին տեղափոխել ու բանտարկել զեյթունցի և ալբիստանցի հայ երևելիներից շատերին, այդ թվում՝ հուշագրության հեղինակի հորը՝ Հովհաննես Մակարյանին: Հուշագրության հեղինակը նշում է, որ Հովհաննես Մակարյանը բանտից ազատվել և միացել է ալբիստանցիների քարավանին դրա՝ Մարաշ հասնելուց (1915 թ. ապրիլի 25) չորս օր հետո (տե՛ս ՀՅԴԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 61):

25 Տիգրան Մակարյանը ծնողներին միացել էր Մարաշում, ուստի չի նկարագրում Ալբիստանից Մարաշ ճանապարհը, սակայն այլ աղբյուրներից հայտնի է, որ այդ ուղու տևողությունը մոտ յոթ օր էր (տե՛ս Kévorkian, *The Armenian Genocide. A Complete History,* 588):

26 Մարաշից Սաբղա ճանապարհի նկարագրությունը տե՛ս ՀՅԴԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթեր 61-80:

27 Նաև նույն քարավանով աքսորված, ականատես-վերապրած ալբիստանցի Միհրան Աղազարյանի վկայությունը, ըստ որի՝ քարավանի՝ *անապատում* (ըստ երևույթին՝ Մարաշից մինչև Դեր Զոր) ճամփորդությունը տևել է 47 օր (տե՛ս Միհրան Աղազարեան, *Աքսորականի յուշեր* (Ատանա, Տպարան «Հայ ձայն»-ի, թիւ 5, 1919), 3):

պետք է Սաբղա հասած լինեին 1915 թ. հունիսի կեսերին: Նրանցից առաջ (մայիսի վերջ – հունիսի սկիզբ) Դեր Զորի գավառ էր հասել զեյթունցիների առաջին քարավանը[28]: Մակարյանների հետ նույն քարավանով Միջագետք տեղափոխված և մինչև Դեր Զոր հասած ալբիստանցի Միհրան Աղազարյանը վկայում է, որ այնտեղ «յունիսի անապատային խիստ տաքին, գլուխնին միայն շուքի տակ պահելով կ'ապրէին աւելի քան 3000 Զէյթունցի հայեր»[29]:

Ի տարբերություն Արևմտյան Հայաստանի տարածքից դեպի Սիրիա և Միջագետք աքսորվող հայերի, որոնց մեծ մասը բնաջնջվել էր մինչև տեղ հասնելը, կիլիկիահայերի այս և հետագա այլ քարավաններ ճանապարհի ընթացքում մարդկային ավելի փոքր կորուստներ են ունեցել: Դա պայմանավորված էր Սիրիայի և Միջագետքի աքսորակայանների՝ Կիլիկիային համեմատաբար մոտ գտնվելու, ճանապարհին չեթեական ջոկատների գրոհներից, քրդական և այլ ցեղերի հարձակումներից զերծ մնալու հանգամանքներով[30]: Մասնավորապես ալբիստանցիների քարավանի պարագայում որոշակի դեր է խաղացել նաև Մարաշի, Բիրեջիկի և Ուրֆայի դեռևս չաքսորված տեղացի հայ բնակչության՝ նրանց ցուցաբերած օգնությունը[31]:

Ալբիստանցիների քարավանի մի մասը, այդ թվում՝ Մակարյանների ընտանիքը, առժամանակ տեղավորվել է Սաբղայում, իսկ մյուս մասը շարունակել է ճանապարհը դեպի Դեր Զոր[32]: 1915 թ. հուլիսի երկրորդ կեսին վերաբերող տվյալներով՝ Դեր Զոր հասած զեյթունցի և ալբիստանցի հայերի թիվը մոտ 10 000 էր, իսկ հայ աքսորականների ընդհանուր թիվը՝ 15 328[33]: Օգոստոսի երկրորդ կեսին Դեր Զորում հավաքված կիլիկիահայերի թիվն արդեն մոտ 15 000 էր. զեյթունցիներին էին միացել Այնթապից, Մարաշից, Տարսոնից, Ադանայից և Մերսինից տեղահանված հայեր[34]:

Սաբղայում Հովհաննես Մակարյանին թույլատրվել է զբաղվել բժշկությամբ. կայմակամը (գավառակապետ) նրան սենյակ է հատկացրել հիվանդներին ընդունելու համար[35]: Որոշ ժամանակ անց, հավանաբար 1915 թ. հուլիսի կեսերին, Հալեպ գնալու ճանապարհին Սաբղայում է իջևանել Դեր Զորի մութեսարիֆ (գավառապետ) Ալի Սուադը, որը հայտնի էր հայերի նկատմամբ իր բարյացակամ վերաբերմունքով[36]:

---

28 Mouradian, *The Resistance Network,* 123.

29 Աղազարեան, *Աքսորականի յուշեր*, 3:

30 Թաթոյան, *Կիլիկիահայության թիվը Հայոց ցեղասպանության նախօրյակին,* 172: Կորուստների փոքր լինելու մասին նշում ունի նաև հուշագրության հեղինակը (տե՛ս ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 88):

31 Հուշագրության հեղինակը հաղորդում է, որ Բիրեջիկի 25 հայ երիտասարդներից կազմված ջոկատը ձիերով և ջորիներով ուղեկցել է քարավանը մինչև Ուրֆա (տե՛ս նույն տեղում, թերթ 64):

32 Միհրան Աղազարյանի վկայությամբ՝ քարավանը Դեր Զոր էր հասել հունիսի 24-ին (տե՛ս Աղազարեան, *Աքսորականի յուշեր*, 3):

33 *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, 275.

34 Նույն տեղում, 348:

35 ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 82:

36 Ալի Սուադը հիմնականում դրական բնութագիր ունի հայ վերապրածների վկայություններում ու հուշերում, և Տիգրան Մակարյանն այստեղ բացառություն չէ: Ահա նրա վկայությունը. «Իթիլաֆական (թագավորական, սակայն ոչ Համիդի կողմնակից), առաջադիմասեր և հայերի հանդեպ բավական

Տեղեկանալով Հովհաննես Մակարյանի մասին՝ գավառապետն առաջարկել է նրան տեղափոխվել Դեր Զոր քաղաք[37]: Հովհաննես Մակարյանն ընդունել է գավառապետի առաջարկը՝ ստանձնելով հայ բռնագաղթյալների ընդհանուր քննիչ բժշկի պաշտոնը[38]:

Հովհաննես Մակարյանի՝ Դեր Զոր տեղափոխվելը և իր պարտականությունների կատարմանն անցնելը[39] հնարավորություն են տվել հուշագրության հեղինակին մոտիկից ծանոթանալու և վկայություններ թողնելու տեղի հայ բռնագաղթյալների կացության վերաբերյալ: Հեղինակի հաղորդմամբ, բացի բուն քաղաքից, հայերը տեղավորվել էին նրա հարևանությամբ ստեղծված համակենտրոնացման երկու ճամբարներում: Դրանցից առաջինն ընկած էր քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք՝ ճանապարհի ձախ կողմում՝ Եփրատ գետի ափին (աղբյուրներում հաճախ հիշատակվում է որպես Սալիհիեի ճամբար. անվանումը ծագում է Դեր Զորի համապատասխան թաղի անունից, որտեղ այն գտնվել է), իսկ երկրորդը՝ քաղաքից դեպի արևելք՝ գետի հանդիպակաց ափին (հիշատակվում է որպես Ջեզիրեի ճամբար. Ջեզիրեն Եփրատի ձախ ափին ընկած տարածաշրջանի ընդհանուր անվանումն է)[40]: Բուն քաղաքում հաստատվել

---

բարյացակամ: Նա մտածում էր Տեր-Զորի անապատային շրջանը շենացնել, ինչի լավագույն միջոցն էր համարում հայերին օգտագործել, որոնք մութեսարիֆի հույսերը արդարացնում էին: Նրա մութեսարիֆության շրջանում հայերը Տեր-Զորում խաղաղ ապրեցին, և նա, համոզված լինելով, որ տեղացիների միջոցով իր փայփայած նպատակներին չէր կարող հասնել, նույնիսկ հովանավորում էր հայերի շինարար գործունեությունը» (նույն տեղում, թերթ 96): Այն, որ Ալի Սուադը երիտթուրքերին ընդդիմադիր «Իթիլաֆ» (ծագում է կուսակցության թուրքերեն «Hürriyet ve İtilâf» («Ազատություն և համաձայնություն») անվանումից) կուսակցության անդամ էր, հասանելի աղբյուրներում և ուսումնասիրություններում չի հիշատակվում: Հայ գաղթականներին օգնելու համար Ալի Սուադի գործադրած ջանքերը թույլ են տվել որոշ ուսումնասիրողների նրան անգամ դասել Հայոց ցեղասպանության «արդարների», այսինքն՝ Հայոց ցեղասպանության ընթացքում հայերին օգնած օտարազգի գործիչների շարքը (տե՛ս Gérard Dédéyan, Ago Demirdjian, Nabil Sale, *The Righteous and People of Conscience of the Armenian Genocide* (London: C. Hurst & Co., 2023), 93-96):

37 ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 83: Հուշագրության հեղինակն այստեղ բաց է թողել գավառապետի անունը, ինչպես նաև գավառապետի՝ Սաբղա այցելությունը թվագրել մայիսով, ինչը սխալ է:

38 Հովհաննես Մակարյանի՝ Դեր Զոր տեղափոխվելու մասին Միհրան Աղազարյանի հուշերում պահպանվել են հետևյալ ուշագրավ տեղեկությունները. «Ալի Սուատ բեյ Հալէպ երթալու առթիւ Սապխայի մէջ տեսած էր մաս մը ընտրեալ հայութիւն և խոստացած էր անոնցմէ մօտ քսան ընտանիք տեղաւորել Տէր Զօրի մէջ, որպէս մասնագէտ արհեստաւորներ: Ալպիստանցի Տքթ. Յովհաննէս էֆ. Մակարեան օգտուելով այս առիթէն, մասնաւոր արտօնագրով մը քսան ընտանիքներու հետ ինքն ալ Տէր Զօր կուգար» (Աղազարեան, *Աքսորականի յուշեր,* 17): Միհրան Աղազարյանն այնուհետ ավելացնում է, որ «Ալի Սուատ բեյ մասնաւոր համակրանք մը ցոյց կուտար այդ բանիմաց և ազգասէր հայուն հանդէպ» (նույն տեղում): Տիգրան Մակարյանն էլ հաղորդում է, որ իրենց հետ Դեր Զոր տեղափոխվելու հատուկ թույլտվություն էին ստացել իրենց բարեկամ-ազգական այլ ընտանիքներ՝ 68 հոգի (տե՛ս ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 83):

39 Մասնավորապես, Հովհաննես Մակարյանին էր հանձնվել Սալիհիեի համակենտրոնացման ճամբարում հայ աքսորական կանանց սնունդ բաշխելու գործը. «Յարգելի տօքթորը անմիջական բարօրութիւն մը յառաջացուցած էր ընդհանուր գաղթականութեան մէջ, մասնաւոր հոգածութիւն տածելով մանաւանդ Հայաստանցի տարագիր կիներուն նկատմամբ: Անոնց ցաւերուն կուտակուած ճնշումը կզգար իր սրտին վրայ երբեմն ջղային նոպա մը կունենար, ժամանակ մը խելագարածի վիճակ ստացաւ»,– հաղորդում է Միհրան Աղազարյանը (Աղազարեան, *Աքսորականի յուշեր,* 18):

40 Նույն տեղում: Ջեզիրեի ճամբարը տարանցիկ էր. այնտեղից հայ աքսորականներին տեղավորում

էին հիմնականում Կիլիկիայի և Միջերկրական ծովի առափնյա շրջանների հայերը, որոնք արևմտահայերից առաջինն էին ենթարկվել տեղահանության և ավելի շուտ էին հասել աքսորավայր: Քաղաքից դուրս ստեղծված համակենտրոնացման ճամբարները լցված էին հիմնականում բուն Արևմտյան Հայաստանի նահանգների (Էրզրում, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր և Սեբաստիա)՝ բռնագաղթը վերապրած հայերով[41]: Հուշագրության հեղինակը համակենտրոնացման վրանային ճամբարներում տեղավորվածների վիճակը որակում է «դժոխային»: Աքսորի ճանապարհը վերապրել էին գերազանցապես տարեց կանայք և երեխաները (նույնպես հիմնականում իգական սեռի), որոնք որևէ հնարավորություն չունեին աշխատանք գտնելու և ապրուստի թեկուզ սուղ միջոցներ հայթայթելու[42]:

Քաղաքում բնակություն հաստատած հայ աքսորյալների վիճակը, ի տարբերություն ճամբարներում տեղավորվածների, ավելի բարվոք էր: Հուշագրության հեղինակի վկայությամբ (գուցե որոշակիորեն չափազանցված)՝ բռնագաղթից դեռ երկու-երեք ամիս չանցած՝ 1915 թ. օգոստոս-սեպտեմբերին, Դեր Զորում գրեթե բոլոր նպարավաճառները, փերեզակներն ու խանութպանները հայեր էին[43]: Այս տեղեկությունը հաստատում է մեկ այլ ականատես՝ այնթապցի Տիգրան Ճեպեճյանը. «Իզմիրի, Թեքիրտաղի, Պրուսայի և Պոլսոյ կողմերէն եկած գաղթականներ, մեծ մասամբ վաճառականներ, Տէր Զօրի շուկան գրաւած էին. հրապարակի լաւագոյն խանութները անոնք վարձած էին սուղ գներով և բնիկները շատ գոհ էին»[44]:

Հայերը Դեր Զորում բացել էին նաև ճաշարաններ ու սրճարաններ: Դրանցից մեծ հռչակ էր վայելում հատկապես պոլսեցի Լևոն էֆենդիի ճաշարանը, որն առանձնանում էր բազմատեսակ ուտեստներով: Հայերը սեփական ուժերով հիմնել էին համերգային կատարումների հարթակ. դա ցանկապատված բացօթյա հրապարակ էր՝ խորքում 10-15 մ տարածություն ունեցող բեմով: Ծալապատիկ նստած հանդիսատեսին մատուցվում էին արևելյան երաժշտություն և պար[45]: Չէին անտեսվել նաև հայ աքսորյալների հոգևոր կարիքները. Դեր Զոր քաղաքում հայերը կարողացել էին մի մեծ սենյակ վարձել, որը վերածել էին եկեղեցու՝ անցկացնելով եկեղեցական հավաքներ, արարողություններ և ծեսեր[46]:

---

էին գավառի այլ շրջաններում կամ ուղարկում էին Մոսուլ (տե՛ս Kévorkian, *The Armenian Genocide. A Complete History,* 663):

41 ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 88: Կիլիկիահայերի՝ Դեր Զոր քաղաքում, Արևմտյան Հայաստանից հայ գաղթականների՝ քաղաքից դուրս ստեղծված վրանային ճամբարներում և բացօթյա վայրերում տեղավորվելու մասին հուշագրի այս վկայությունը երկրորդվում է այլ ականատես-վերապրածների հաղորդած տեղեկություններով (տե՛ս մասնավորապես *1915: Աղէտ եւ վերածնունդ: Հեղինակ՝ Աղէտէն վերապրողներ* (Փարիզ, տպ. Արաքս, 1952), 157):

42 ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 88: Հեղինակը՝ որպես ականատես, մանրամասն նկարագրում է նաև համակենտրոնացման ճամբարներում տիրող իրավիճակը (տե՛ս նույն տեղում, թերթեր 89-91):

43 Նույն տեղում, թերթ 89:

44 Ճէպէճեան, «Տէր Զօրի Սպանդը», 12:

45 ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 89:

46 Նույն տեղում, թերթ 105:

1915 թ. հոկտեմբերի վերջին Դեր Զորի համակենտրոնացման ճամբարներում բծավոր տիֆի համաճարակ է բռնկվել, որը շատ արագ տեղափոխվել է բուն քաղաք: Ըստ տարբեր վկայությունների՝ համաճարակին օրական զոհ էր գնում 150-200 մարդ[47]: Ըստ այդմ՝ համաճարակի տարածման ակտիվ շրջանում (1915 թ. նոյեմբեր-դեկտեմբեր) մոտ 10 000 մարդ է մահացել, այսինքն՝ բուն Դեր Զոր քաղաքում և ճամբարներում կենտրոնացած 22-23 հազ.[48] հայ աքսորյալների առնվազն մեկ երրորդը[49] (եթե ընդունենք, որ 1915 թ. սեպտեմբերից առ 1916 թ. ապրիլ՝ ութ ամսում, տարբեր հիվանդություններից և սովից Դեր Զոր քաղաքում և երկու ճամբարներում օրական մահանում էր, միջին հաշվով, 100 հայ աքսորյալ, ապա զոհերի ընդհանուր թիվը մինչև ճամբարների վերացումը և հայ աքսորյալների բնաջնջումը կլինի 25-30 հազար)[50]:

Չնայած մահացության այս բարձր ցուցանիշներին՝ հայերի թիվը Դեր Զորում և շրջակա գյուղերում մնում էր կայուն՝ 20-25 հազարի սահմաններում, քանի որ բռնագաղթյալների հոսքը չէր դադարում. մահացածներին փոխարինելու էին գալիս նորերը: Միհրան Աղազարյանի հավաստի տվյալներով (Դեր Զորում հայ տարագիրների հաշվառմամբ զբաղվող պաշտոնյաներից մեկն էր)՝ 1915 թ. հունիսից առ 1916 թ. մայիս Դեր Զորի գավառում հաշվառված հայ գաղթականության ընդհանուր թիվը կազմել է 180 000, որից Դեր Զոր քաղաքում և շրջակա գյուղերում՝ 80 000, Սաբղայում՝ 15 000[51]:

Տիգրան Մակարյանի վկայությամբ՝ հայրը համաճարակի ժամանակ «ամեն օր, ուրիշ երկու հայ բժիշկների հետ գնում էր համակենտրոնացման ճամբարները ժողովրդին «բուժելու», գուցե ավելի ճիշտ կլիներ ասել, իր ներկայությամբ «մխիթարելու», քանի որ անհրաժեշտ դեղորայք գրեթե չկար[52]: Տիֆով են հիվան-

---

47 Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռյոսլերի՝ կանցլեր Բեթման Հոլվեգին հասցեագրած 1915 թ. նոյեմբերի 16-ի նամակին կցված գերմանացի զինվորական բժիշկ Շախթի զեկուցագիրը (*The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives,* 463): Օրական հարյուրավոր զոհերի մասին է վկայում նաև ականատես-վերապրած Տիգրան Ճեպեճյանը (Ճէպէճեան, «Տէր Զօրի Սպանդը», 12): Իսկ Միհրան Աղազարյանը օրական զոհերի թիվը նշում է 300-350 (տե՛ս Աղազարեան, *Աքսորականի յուշեր,* 18):

48 Ըստ Հալեպում ԱՄՆ հյուպատոս Ջեքսոնի՝ 23 300 (այդ թվում՝ առաքելական՝ 22 100, բողոքական՝ 1 200) (տե՛ս *United States Official Documents on the Armenian Genocide. Volume I: The Lower Euphrates*, 100):

49 Դոկտոր Շախթը (1915 թ. նոյեմբերի կես) հաղորդում է, որ Դեր Զորում կար 15 000 հայ աքսորյալ (տե՛ս *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives,* 463), այսինքն՝ հայերի թիվը, 1915 թ. սեպտեմբերի համեմատությամբ, նվազել էր մոտ 7 հազարով:

50 Միհրան Աղազարյանի հաղորդմամբ՝ Դեր Զորի գավառի բոլոր աքսորակայաններում սովից և հիվանդություններից մահացածների թիվը մինչև 1916 թ. հուլիս մոտ 60 000 էր (տե՛ս Աղազարեան, *Աքսորականի յուշեր,* 39):

51 Նույն տեղում, 24: Տարագիրներ կային նաև գավառի Մեադին, Աբու Քեմալ և Անե գավառակներում (համապատասխանաբար՝ 33 000, 35 000 և 12 000), 5 000 հայ էլ Դեր Զորից տեղափոխվել էր Մոսուլ (տե՛ս նույն տեղում):

52 ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 92: Համաճարակի մոլեգնության շրջանում հոր հետ մի անգամ աքսորյալների ճամբար է գնացել նաև Տիգրան Մակարյանը, որն իր հուշերում հետևյալ կերպ է նկարագրում տեսածը. «Մինչ համաճարակը, ես շատ անգամներ

դացել և դժվարությամբ ապաքինվել նաև հայր և որդի Մակարյանները[53]:

## Գ. Դեր Զորի աքսորակայանի լուծարումը և հայ տարագիրների բնաջնջման գործողության մեկնարկը

Դեռևս Օսմանյան կայսրության հայ բնակչության տեղահանության մեկնարկի նախօրյակին՝ 1915 թ. մայիսի 26-ին, օսմանյան իշխանությունները սահմանել էին, որ տեղահանված հայերի վերաբնակեցման շրջաններում (Հալեպի նահանգի արևելյան և հարավային գավառները, Դեր Զորի գավառը, Դամասկոսի նահանգի արևելյան շրջանները, Մոսուլի նահանգը՝ բացառությամբ Վանի նահանգին սահմանակից շրջանների) նրանց թիվը չպետք է գերազանցի ընդհանուր ազգաբնակչության 10 %-ը[54]: 1916 թ. հունվարին, երբ հայ գաղթականների հոսքը Սիրիա և Միջագետք հիմնականում դադարել էր, երիտթուրքական իշխանությունները ձեռնամուխ են լինում նշված սկզբունքի ավելի հետևողական գործադրմանը: Որոշում է ընդունվում լուծարելու համակենտրոնացման ճամբարները և տեղափոխելու դրանցում հավաքված հայ աքսորյալներին այն շրջաններ, որտեղ նրանց թիվն ընդհանուր ազգաբնակչության հարաբերակցությամբ չպետք է գերազանցեր սահմանված 10 %-ը: Դրանով մեկնարկ է տրվում Հայոց ցեղասպանության երկրորդ փուլին՝ հայ աքսորյալների բնաջնջմանը:

Գործողությունն ի կատար է ածվում քայլ առ քայլ՝ հյուսիսից հարավ ուղղությամբ: 1916 թ. հունվար-փետրվար ամիսներին վերացվում են Հալեպ քաղաքի մոտակա բնակավայրերում (Մամուրա, Իսլահիե, Ռաժո, Քաթմա, Ազազ, Բաբ, Ախթերիմ, Մամ-

---

էի գնացել և հորս հետ եղել երկու ճամբարներում: Սակայն այն, ինչ տեսա այս անգամ, իմ վրա խիստ ցնցող տպավորություն թողեց: Այդ լայն տարածության վրա միայն ժողովրդի հազիվ կեսն էր ի վիճակի նստելու, իսկ մնացածները՝ չափահաս թե անչափահաս, ավազի վրա փռված էին, մի համատարած դիակների դաշտ ներկայացնելով աչքի առաջ: Ամենուրեք սևացած դեմքեր էին, ածխանման մերկ մարմիններ, որոնց բաց շրթների միջից սպիտակ ատամներն էին երևում: Հայկական սև խոշոր աչքերը կարմրած և կորցրած մարդկային ամեն մի արտահայտչականություն, սևեռված մի կետի վրա, և չգիտես, թե տեսողություն մնացել էր նրանց մեջ, թե ոչ: Կարմիր շրթները չորացած և ճաքճքված, նույնիսկ արյունոտած, իսկ մարմիններից ոսկորները այն աստիճան էին դուրս ցցված, իրենց անատոմիական ամբողջ էությամբ, որ կարծես նրանց վրա ոչ միս կար և ոչ էլ կաշի» (նույն տեղում, թերթ 93): Իսկ 1915 թ. նոյեմբերին Դեր Զոր այցելած գերմանացի զինվորական բժիշկ Շախթը հայ աքսորյալների վիճակը հետևյալ կերպ է նկարագրել. «Արդեն [քաղաքի] մուտքից երևում է հայ վերաբնակիչների հիմնական զբաղմունքը՝ մեռելներին թաղելը, մռայլ անտարբերությունը, դժվարին, տանջված, կիսամեռ շարժումները: Մնունդն անբավարար է... Երեք հիվանդանոց լեփ-լեցուն է հազարից ավելի հիվանդներով: Դեղատունը գրեթե դատարկ է: Մահացությունը կազմում է օրական 150-200 մարդ (տեղացի բժշկի խոսքերով): Միայն այդ կերպ է հնարավոր հազարավոր նոր հիվանդներ ընդունել: Գետի ձախ ափին՝ պոնտոնային կամրջի կողքին, մեռնող մարդկանց զանգվածները խմբված են այս տարածքին բնորոշ սաղարթներից պատրաստված հյուղակներում: Նրանք մոռացված են, նրանց միակ ազատարարը մահն է» (*The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives,* 463):

53 ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 93-94:

54 Taner Akçam, *The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire* (Princeton: Princeton University Press, 2012), 249: 1915 թ. նոյեմբերին Աhմեդ Ջեմալի միջնորդությամբ թույլատրվել է հայ աքսորյալներին տեղավորել նաև Հալեպ քաղաքում և հարակից շրջաններում այն պայմանով, որ նրանց թիվը չգերազանցի ընդհանուր ազգաբնակչության 2 %-ը (տե՛ս Fuat Dundar, *Crime of Numbers. The Role of Statistics in the Armenian Question (1878-1918)* (Transaction Publishers, 2011), 113):

բիջ, Մարա) հիմնված հայերի աքսորակայանները: Դրանցում հանգրվանած հայերը խումբ առ խումբ քշվում են դեպի հարավ՝ Մեսքենեի և Դեր Զորի կայաններ, ինչպես նաև դեպի արևելք՝ Ռաս-ուլ-Այնի համակենտրոնացման ճամբար: Նոր բռնագաղթի ճանապարհը, աքսորյալների նոր կուտակումները հանգեցնում են թերսնումից և վարակիչ հիվանդություններից զանգվածային մահացության դեպքերի կտրուկ աճին: Արամ Անտոնյանի վկայությամբ՝ 1916 թ. գարնանը միայն Մեսքենեում օրական մահանում էր 300-500 հայ բռնագաղթյալ[55]: Կայանից կայան, հանգրվանից հանգրվան հայ գաղթականների շարքերը նոսրանում էին: Մեսքենե հասած հայերը քշվում էին Դեր Զորի ուղղությամբ՝ ճանապարհին ենթարկվելով ավազակային հարձակումների, էլ ավելի հյուծվելով և պակասելով: Ռաս–ուլ-Այնի ճամբարի հայերին հրահանգվում է շարժվել Մոսուլի և Դեր Զորի ուղղությամբ: Հայ աքսորյալներից կազմված քարավանները անապատում մաս առ մաս բնաջնջվում էին[56]:

1916 թ. ամռանը հասնում է Դեր Զորում կենտրոնացած հայերի հերթը: Մինչև այդ՝ 1916 թ. մարտին, Դեր Զորի գավառապետի պաշտոնից ազատվում է Ալի Սուադը, և նոր գավառապետ է նշանակվում հայատյաց հայացքներով ու հակահայկական գործողություններով հայտնի Սալիհ Զեքին[57]: Նախքան Դեր Զոր հասնելը՝ 1916 թ. հունիսի վերջին, նա այցելում է Եփրատի երկայնքով մինչև Դեր Զոր ձգվող աքսորակայաններ, ինչպես նաև Դեր Զոր–Մարատ–Սուվար գծի վրա սփռված արաբական աշիրեթներ և Եփրատի վտակ Խաբուրի ափին գտնվող չեչենական բնակավայրեր (Սուվար, Հասըրճա (Խասըրճա), Շեդադիե են): Նման ճամփորդությունները երկու հիմնական նպատակ ունեին՝ այլ աքսորակայաններից հնարավորինս շատ հայերի՝ Դեր Զոր տեղափոխելը և չեչեններից ու արաբներից ջարդարար զորախմբեր ձևավորելը[58]: Սալիհ Զեքին Դեր Զորի կառավարման մարմիններում և ժանդարմերիայում բազմաթիվ պաշտոնյաների փոխարինում է չեչեններով[59]:

Դեր Զորի աքսորակայանի վերացման և հայ աքսորյալների բնաջնջման գործողությունը ծրագրվում և ի կատար է ածվում քայլերի նույն հաջորդականությամբ, ինչ հատկապես Արևմտյան Հայաստանի տարածքից դեպի Սիրիա և Միջագետք քշված շատ քարավանների դեպքում 1915 թ.: Աքսորակայանի հայերին հրահանգվել է մեկնել

---

55 Արամ Անտոնեան, *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալէաթ փաշա* (Պոսթըն, տպարան «Պահակ»ի, 1921), 19: Մեսքենեի և Եփրատի երկայնքով տեղակայված այլ համակենտրոնացման ճամբարների վերացման մասին մանրամասն տե՛ս Mouradian, *The Resistance Network,* 88-102 (Մեսքենե), 106-119 (Դիպսի, Աբուհարար, Համամ, Ռաքքա); Kévorkian, *The Armenian Genocide. A Complete History,* 655-662:

56 Ուսումնասիրող Խաչիկ Մուրադյանը Ռաս-ուլ-Այնի համակենտրոնացման ճամբարի հայերի բնաջնջումն անվանում է Դեր Զորի հայերի աղետի «գլխավոր փորձ» (dress rehersal) (տե՛ս Mouradian, *The Resistance Network. A Complete History,* 130, տե՛ս նաև Kévorkian, *The Armenian Genocide,* 649-652):

57 Մինչև Դեր Զոր տեղափոխվելը նա Էվերեկի գավառակի (Անգորայի վիլայեթ՝ Կեսարիայի գավառ) կառավարիչն էր և այնտեղ հայերի կոտորածների կազմակերպիչը (Սալիհ Զեքիի մասին մանրամասն տե՛ս Մինասեան, «Արամ Անտոնեանի անտիպ գրառումները Տէր Զօրի կոտորածներուն մասին», 700 (ծանոթագրություն 9)):

58 Mouradian, *The Resistance Network. A Complete History,* 133: Տրվում է ըստ Արամ Անտոնյանի հաղորդած տեղեկությունների (տե՛ս Մինասեան, «Արամ Անտոնեանի անտիպ գրառումները», 691):

59 Սամուէլ Սահակ, «Յուշեր Տէր Զօրի սպանդանոցէն», էջը ??:

նոր աքսորավայր՝ Մոսուլ քաղաք և Մոսուլի նահանգի այլ շրջաններ: Զուգահեռաբար ձերբակալվել են երևելի հայերը, բանտ նետվել, որտեղ շատերը գտել են իրենց վախճանը: Աքսորյալներին հավաքվելու համար տրվել է երեք օր. մեկնելու օրը նշված տեղում չներկայանալու դեպքում պատիժ է սահմանվել: Իրենց մեկնումից շատ չանցած՝ հենց Դեր Զորի գավառի տարածքում՝ Եփրատ և Խաբուր գետերի միախառնման եռանկյունում՝ Մարատ–Սուվար–Շեդադիե գծի վրա, աքսորյալների քարավանները մի քանի օրում հատված առ հատված ոչնչացվել են: Սկզբում խումբ առ խումբ առանձնացրել և սպանել են չափահաս տղամարդկանց, այնուհետև՝ սովի մատնել տարեցներին, կանանց ու երեխաներին[60]: Ջարդերն իրագործվել են ինչպես տարերայնորեն կազմավորված, այնպես էլ հատուկ այդ նպատակով ստեղծված չերքեզական և արաբական զինյալ խմբերի ձեռքով: Սալիհ Զեքին զինված ջոկատների ուղեկցությամբ շրջել է Մարատ–Սուվար–Շեդադիե գծի երկայնքով՝ համակարգելով քարավանների բնաջնջման գործողությունները: Սպանդից մազապուրծ են եղել միայն կանայք և երեխաները, որոնց տեղացի արաբներն ու չերքեզները փախցրել, առևանգել կամ գնել էին, ինչպես նաև փախուստի դիմածներից մի քանիսը[61]:

Դեր Զորի հայ տարագիրների «սևքըյաթ»-ի[62]՝ դեպի սպանդանոցներ քշելու գործողության մեկնարկը տրվել է 1916 թ. հուլիսի կեսերին: Հուլիսի 15-21-ն արձակած մի շարք հրամաններով Զեքին պահանջել է Դեր Զոր քաղաքում և շրջակայքում կենտրոնացած բոլոր հայերին հավաքվել Ջեզիրեի ճամբարում՝ նոր աքսորավայր մեկնելու համար[63]: Թաքնված հայերին հայտնաբերելու նպատակով քաղաքում զուգահեռաբար իրականացվել են խուզարկություններ: «Հանկարծ Տեր-Զորի փողոցներում հարյուրավոր արաբներ երևացին՝ ձեռքներին ունենալով իրենց հարազատ զենքերը՝ կապարյա գուրզեր: Նրանք մեծաթիվ և կամ 2-3 հոգուց բաղկացած խմբերով սկսեցին հարձակվել հայերի բնակարանների և խանութների վրա՝ կողոպտելով և այնտեղից դուրս հանելով մարդկանց: Փողոցներում ում որ հանդիպում էին՝ փոքր թե մեծ, միայն թե հայ լինեին, հրելով, ծեծելով քշում էին դեպի կամուրջ անընդհատ կրկնելով՝ «քյուլլի էրմեն գիդեջեք», այսինքն՝ «բոլոր հայերը գնալու են»»[64],– կարդում ենք Տիգրան Մակարյանի հուշերում:

Այս գործողությունների հետևանքով հուլիսի 22-23-ին քաղաքը հիմնականում դատարկվել է հայ աքսորյալներից. գրեթե բոլորը կենտրոնացվել էին Ջեզիրեի ճամբարում և ուղարկվել Մարատ (մոտ 10 կմ դեպի հարավ-արևելք)[65]: Առաջին քարավանի

---

60 Անտոնեան, *Մեծ ոճիրը*, 109:

61 Քայլերի հաջորդականության մասին տե՛ս Mouradian, *The Resistance Network. A Complete History,* 130, տե՛ս նաև Kévorkian, *The Armenian Genocide,* 663-664:

62 Սևքըյաթ (ուղարկել, ճանապարհել, ճանապարհ գցել) բառով են բնորոշում այս գործընթացը ականատես-վերապրածներից շատերը:

63 Ըստ Խաչիկ Մուրադյանի՝ որոշիչ հրամանն արձակվել է հուլիսի 21-ին (տե՛ս Mouradian, *The Resistance Network. A Complete History,* 135):

64 ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 104:

65 Ռայմոն (Հարություն) Գևորգյանը Դեր Զորից հայ գաղթականների առաջին քարավանի մեկնելու օրը նշում է հուլիսի 15-ը (տե՛ս Kévorkian, *The Armenian Genocide,* 665), Հիլմար Կայզերը (հղում անելով Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռյոսլերի զեկուցագրին)՝ հուլիսի 22-ը (տե՛ս Կայզեր, *Դեյր Էզ-Զորի խաչուղիներում,* 70): Կայզերի նշած օրը մեզ ավելի հավանական է թվում: Դեր Զորից Մա-

հիմնական մասը՝ մոտ 15 000 հոգի[66], Զեյթունից, Ալբիստանից, ինչպես նաև Կիլիկիայի այլ շրջաններից (Հաճըն, Մարաշ) էր (նրանք, բնակվելով բուն Դեր Զոր քաղաքում և շրջակա գյուղերում, հիմնականում կարողացել էին խուսափել սովի և հիվանդությունների պատճառած կորուստներից[67]): Կային նաև հայ աքսորյալներ Փոքր Ասիայի արևմտյան շրջաններից՝ Իզմիթից և Ադաբազարից[68]: Այդ քարավանում էր նաև ալբիստանցի Մակարյանների ընտանիքը:

Մարատում հայ տարագիրների բազմությունը տրոհվել է 5-7 հազար հոգուց բաղկացած խմբերի, որոնք իրար հետևից ուղարկվել են Սուվար[69]: Տիգրան Մակարյանը՝ որպես ականատես, թողել է քարավանի ընթացքի հետևյալ նկարագրությունը. «Միջագետքի անապատում մեզ քշում էին առաջ, խարազանների հարվածների և հրացաններից արձակված գնդակների սուլոցների ուղեկցությամբ: Ժողովրդի բերանից միայն անեծք էր լսվում, և քանի գնում տասնյակ հազարների հասնող կարավանը նոսրանում էր: Ով ընկնում էր, այլևս չէր կանգնում, որովհետև իր մարմինը կանգնած վիճակում պահելու ուժ և կարողություն չէր մնացել: Ընկնում էին և արձակում անեծքախառը մի հառաչ, որին և հաջորդում էր վերջին շունչը: Սկզբնական շրջանում չերքեզները[70] փորձում էին ոտքի հանել ընկածներին, սակայն մտրակի հարվածները և անպատկառ հայհոյանքները անզոր էին անկենդանին կենդանացնել, որին համոզվելուց հետո այլևս այդ փորձը չէին կատարում, այլ ընկնողի վրայից կոխկրտելով անցնում էին առաջ, կենդանի մնացողներին խարազանի հարվածներով շտապեցնելով»[71]:

Դեր Զորից դեպի Սուվար մոտ 40-45 կմ ճանապարհը քարավանն անցել է չորս օրում, այսինքն՝ օրական մոտ 10-12 կմ արագությամբ[72]: Սուվարում կարճ հանգիստ առնելուց հետո բռնագաղթյալները շարժվել են Շեդադիե: Այնտեղ քարավանի ըն-

---

րատ մեկնած հայերի առաջին քարավանի թվաքանակի վերաբերյալ տվյալները ևս տարբեր են. ըստ Ռ. Գևորգյանի՝ այն 18 000 էր (տե՛ս Kévorkian, *The Armenian Genocide,* 665-666), ըստ վերապրած Հ. Գալայջյանի՝ 30 000 (տե՛ս Գալայճեան, *Միլիոնէն մէկը,* 36): Տիգրան Մակարյանը կոնկրետ թիվ չի նշում՝ խոսելով«տասնյակ հազարների հասնող կարավանի» մասին (տե՛ս ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 104):

66 Ըստ ականատես-վերապրած Նազարեթ Մուրադյանի վկայության (տե՛ս *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives,* 677):

67 Տիգրան Մակարյանը հաղորդում է, որ Դեր Զորից տեղահանության թոհուբոհի պայմաններում ամենաբարվոք վիճակում զեյթունցիներն էին, որովհետև նրանցից շատերն ունեին գրաստներ՝ բարձված առաջին անհրաժեշտության պիտույքներով և ուտելիքով (տե՛ս ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 106):

68 Ըստ Արամ Անտոնյանի վկայության (տե՛ս "L'Extermination des déportés arméniens ottomans dans les camps de concentration de Syrie – Mésopotamie (1915-1916)," 176):

69 Kévorkian, *The Armenian Genocide,* 665: Մ. Աղազարյանի հաղորդմամբ՝ հայ տարագիրների խմբավորումը կատարվում էր դեռևս Ջեզիրեի ճամբարում (տե՛ս Աղազարեան, *Աքսորականի յուշեր,* 33):

70 Քարավանն ուղեկցող պահակախումբը, ինչպես արդեն նշել ենք, կազմված էր հիմնականում չերքեզներից:

71 ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 104:

72 Տիգրան Մակարյանը, հաղորդելով այս տեղեկությունը, որպես քարավանի կայանատեղ սխալմամբ նշում է Եփրատ և Խաբուր գետերի միախառնման վայրը՝ այնտեղ տեղակայելով Շեդադիեն (տե՛ս նույն տեղում, թղթապանակ 160, թերթ 108):

թացքը դադարեցվել է, և սկսվել է հայերին մաս առ մաս բնաջնջելու գործողությունը, որի ժամանակ և արձանագրվել է զեյթունցիների զինված դիմադրության դրվագը:

## Դ. Զեյթունցիների զինված դիմադրությունը Շեդադիեում և բռնագաղթյալների առաջին քարավանի բնաջնջումը

### 1. Դիմադրությանն անմիջապես նախորդած և այն պայմանավորած դեպքերն ու իրադարձությունները

Առաջին քարավանի տարբեր խմբեր Շեդադիե[73] են հասել հուլիսի 25-ից օգոստոսի 5-ն ընկած ժամանակահատվածում[74]: Բուն Շեդադիե հայ տարագիրները չեն մտել. քարավանը կայանել է բնակավայրի մատույցներում՝ Խաբուր գետի մոտ (հավանաբար համանուն Թել Շեդադիե բլուրի եզերքը)[75]: Հայերի կայանատեղիի մոտակայքում՝ մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա, եղել է զինվորական պահակատուն, որի մոտ վրան է խփել քարավանն ուղեկցած և հայ տարագիրների հետ մինչև Շեդադիե հասած Սալիհ Զեքին[76]: Տիգրան Մակարյանի պատկերավոր նկարագրությամբ՝ այդ պահակատունը ծառայում էր չերքեզ և թուրք եղեռնագործների համար որպես կենտրոն՝ հայերի բնաջնջման գործողությունների իրահանգավորման գլխավոր շտաբ[77]:

Նախքան քարավանի՝ Շեդադիե հասնելը կամ գուցե հասնելուց անմիջապես հետո Զեքին հրամայել է, որ նոր ճամբարում հայերը տեղավորվեն ըստ իրենց ծննդավայրերի՝ մարաշցի, հաճնցի, զեյթունցի, իզմիթցի, ադաբազարցի ևն: Այս զատման նպատակը, ըստ երևույթին, բնաջնջման գործընթացը հնարավորինս հեշտացնելն էր՝ «Բաժանի՛ր, որ ոչնչացնես» սկզբունքով նվազեցնելով հավաքական ընդվզման վտանգը[78]:

---

73 Գարեգին Հովհաննեսյանը որպես քարավանի բնաջնջման վայր նշում է Շեդադիեից հյուսիս ընկած Խասըրճա բնակավայրը (տե՛ս BNu/Fonds A. Andonian, Matériaux pour l'histoire du génocide, P.J.1/3, liasse 52, Der Zor/Տէր Զօր, f. 4, տե՛ս նաև "L'Extermination des déportés arméniens ottomans dans les camps de concentration de Syrie – Mésopotamie (1915-1916)," 196): Ականատես-վերապրած Հարություն Գալայջյանը առաջին քարավանի ընթացքը հասցնում է Աբդուլ Ազիզ լեռնաշղթա, որն ընկած է Շեդադիեից մոտ 60 կմ հյուսիս-արևմուտք: Ըստ հեղինակի՝ այդտեղ են բնաջնջվել տղամարդիկ, ինչից հետո քարավանը վերադարձել է Շեդադիե՝ տեղակայվելով Խաբուր գետի՝ բնակավայրին հանդիպակաց (ձախ) ափին (տե՛ս Գալայճեան, *Միլիոնէն մէկը,* 36-39):

74 Դեր Զորից Շեդադիե մոտ 120 կմ է (Դեր Զոր–Մարատ՝ 10 կմ, Մարատ–Սուվար՝ 50 կմ, Սուվար–Շեդադիե՝ 60 կմ): Դեր Զորից սկսած՝ քարավանը կանգառներով օրական անցել է, միջին հաշվով, 12-15 կմ: Վերոնշյալից ելնելով՝ քարավանի ճանապարհի տևողությունը, կարծում ենք, կազմել է 10-12 օր: Դեր Զորից առաջին քարավանի տարբեր խմբեր մեկնել են հուլիսի 15-25-ն ընկած ժամանակահատվածում և Շեդադիե են հասել հուլիսի 25-ից օգոստոսի 5-ն ընկած ժամանակամիջոցում:

75 Ըստ Տիգրան Ճեպեճյանի վկայության (տե՛ս Ճեպեճեան, *Ապրուած օրեր հայասպանութենէն,* 16): Տիգրան Մակարյանը ևս նշում է, որ բուն Շեդադիե բնակավայր քարավանը չի մտել (տե՛ս ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 111):

76 Ըստ Նազարեթ Մուրադյանի վկայության (տե՛ս *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives,* 677):

77 ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 111:

78 Ըստ Արամ Անտոնյանի գրառման (տե՛ս BNu/Fonds A. Andonian, Matériaux pour l'histoire du génocide, P.J.1/3, liasse 52, Der Zor/Տէր Զօր, f. 54, տե՛ս նաև "L'Extermination des déportés arméniens

Զեյթունցիները զբաղեցրել են կայանատեղիի խորքում՝ անմիջապես Խաբուր գետի մոտ ընկած մի տարածք[79]: Նրանք, գիտակցաբար թե ոչ, ընտրել էին հնարավոր հարձակումներից պաշտպանվելու համար բարենպաստ մի դիրք. գետն անհնարին էր դարձնում թիկունքից գրոհը՝ կրճատելով պաշտպանական գիծը: Կարևոր հանգամանք, որն իր ազդեցությունն է ունեցել հետագա դեպքերի ընթացքի վրա: Զեյթունցիներից շատերը Շեդադիե էին հասել գրաստներով, քանի որ, նախքան երկրորդ բռնագաղթը հաստատված լինելով Դեր Զորի շրջակա գյուղերում, հնարավորություն էին ունեցել հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվելու[80]:

Տիգրան Մակարյանի վկայությամբ՝ քարավանի՝ Շեդադիե հասնելու հաջորդ օրը՝ առավոտյան, ճամբար են մտել մի խումբ չերքեզներ՝ հայտարարելով, որ ճանապարհաշինական աշխատանքների համար տղամարդիկ են անհրաժեշտ: Ճամբարում շրջելով՝ առանձնացրել են թաքնվել չհասցրած տղամարդկանց և 155 հոգի հավաքելով՝ տարել իրենց հետ[81]:

Ճանապարհաշինության համար տղամարդկանց բռնի հավաքագրումները շարունակվել են նաև հաջորդող օրերին: Զինված խմբերն առավոտյան մտնում էին ճամբար և տանում 150, 160 կամ 200 հոգու: Ժողովրդի անհանգստությունը մեղմելու համար հայտարարվել է, որ ճանապարհաշինական աշխատանքները կարող են տևել մինչև մեկ ամիս, և դրանց մասնակցող տղամարդիկ կվերադառնան միայն գործն ամբողջությամբ ավարտելուց հետո[82]:

Տիգրան Մակարյանի հաղորդմամբ՝ տղամարդկանց հավաքելու այս գործընթացը շարունակվել է 12 օր: Իրականությունը բառացիորեն ջրի երես է դուրս եկել 13-րդ օրը: Վաղ առավոտյան Խաբուրից ջուր վերցնելու գնացած կանայք գետի արագահոս ջրերի մեջ նշմարել են տղամարդկանց դիակներ. նախ՝ վեցը՝ իրար կապված, ապա՝ տասը առանձին[83]: Այս իրողության բացահայտվելուց հետո չերքեզների պահվածքն ավելի սանձարձակ է դարձել: Սկիզբ են առել հատկապես իրենց ամուսիններին կորցրած ու անպաշտպան մնացած կանանց հանդեպ սեռական բռնության դեպքերը[84], որոնք ավելի են շիկացրել մթնոլորտը:

Ճամբարում երիտասարդ տղամարդկանց թիվը գնալով փոքրանում էր. շատերը

---

ottomans dans les camps de concentration de Syrie – Mésopotamie (1915-1916)," 176 («Բազմութեան համախռնումին վրայ, Զէքի՝ հասկնալով որ դժուար պիտի ըլլայ այդ մարդիկը խմբովին սպաննել, նոր հրաման մը կու տայ որ մարդիկ զատուին իրենց ծննդավայրերուն համեմատ,– մարաշցի, հաճընցի, զէյթունցի, իզմիտցի, ատաբազարցի, եւ այլն: Ժողովուրդէն՝ նոր եկողներն ալ կը հասկնան որ այլեւս ազատում չունին»)):

79 Ըստ Տիգրան Մակարյանի վկայության (տե՛ս ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 111):

80 Ըստ Տիգրան Մակարյանի վկայության (տե՛ս նույն տեղում, թերթ 106):

81 Նույն տեղում, թերթ 112:

82 Նույն տեղում:

83 Նույն տեղում, թերթ 113:

84 Մի օր չերքեզները կարգադրել են 12-15 երիտասարդ կանանց գնալ պահակատուն՝ սպիտակեղենը լվանալու. այնտեղ նրանք սեռական բռնության են ենթարկվել, ինչից հետո նրանցից շատերը, նետվելով Խաբուր գետը, վերջ են տվել իրենց կյանքին (տե՛ս նույն տեղում, թերթ 114):

փախուստի դիմելիս՝ գետն անցնելու ժամանակ, խեղդվում էին կամ ճանապարհին ընկնում չերքեզների գնդակներից[85]:

Սրանք էին, ըստ Տիգրան Մակարյանի, դիմադրությանն անմիջապես նախորդած դեպքերը, որոնք պայմանավորել են հետագա իրադարձությունները: Այլ աղբյուրներ փաստում են, որ հայերի դիմադրությանը հանգեցրել է աշխատանքային գումարտակում ընդգրկվելու կտրուկ պահանջը, և ամփոփ ներկայացնում դեպքերի ընթացքը: Այսպես, Տիգրան Ճեպեճյանը նշում է, որ պահանջը մերժվել է, և ժողովուրդը դիմել է զինված դիմադրության. «8-10 չեչէններ առաջարկած են հայերուն, որ Ռաս-ուլ-Այնի ճամբուն վրայ երկաթուղիի ճամբայ պիտի շինուի եւ իրենց 600 հատ կտրիճ երիտասարդ պէտք է որպէսզի երթան աշխատին: .... Բաւական խորհելէ ետք, կ՚որոշեն մերժել չեչէններուն առաջարկը եւ կռիւը կը սկսի չեչէններուն եւ հայերուն միջեւ»[86]: Իսկ Նազարեթ Մուրադյանի հաղորդմամբ՝ հայերի դժգոհությունն առաջ է բերել ոչ այնքան աշխատանքային գումարտակներում ընդգրկվելու պահանջը, որքան ընտանիքներից բաժանվելու հրամանը. «Տղամարդիկ պատասխանել են, որ նրանք բոլորը ցանկանում են աշխատանքների մեկնել իրենց կանանց ու երեխաների հետ և հրաժարվել են բաժանվել միմյանցից»[87]:

Վերոնշյալ հանգամանքի վրա է շեշտը դնում նաև Հարություն Գալայջյանը: Հուշագիրը նշում է. «... երեք օր շարունակ մարդասպանները ամէն միջոցի կը դիմեն գաղթակայանի հայերը համոզել ջանալու, որպէսզի հնազանդին կառավարութեան կտրուկ հրամանին, բայց չեն յաջողիր և վերջնական պատասխանին կը սպասեն չորրորդ օրը, այլապէս բռնի ուժով զատելու համար էրիկ մարդիկը կիներէն, չաղա-չոճուխներէն»[88]:

Հ. Գալայջյանի՝ հաղորդմամբ՝ երրորդ օրվա գիշերը ճամբարում ժողով է գումարվել, որին հրավիրվել և գումարտակներում ընդգրկվելու առաջարկը մերժելու հարցում որոշիչ դիրքորոշում են ունեցել կանայք. «Երրորդ օրուան գիշերը, գաղթակայանի բոլոր երևելի մեծերը, խելահասներն ու փորձառու մարդիկ, ազդեցիկ և աչքառու դէմքերը իրարու մօտիկ գալով ժողով կը գումարեն: Այդ ժողովին կը հրաւիրեն շատ մը մայրեր ու փորձառու տիկնայք փափկասունք և օրուայ ծանր ու դժնդակ կացութիւնը պարզելով բոլոր ներկաներուն կ՚ուզեն յաջորդ օրը վերջնական պատասխանը տալ արիւնկզակ ու արիւնռուշտ դահճապետերուն: Մինչ այդ արի ու բարի հայ մայրերը ընդոստ ոտքի կը կանգնին և բարձրաղաղակ ու խիզախ կը յայտարարեն. «Մենք չենք ուզեր մեր ամուսիններէն, մեր սիրելիներէն բաժնուիլ և սպաննուիլ, անարգուիլ ու անպատուիլ. կամ բոլորս միասին կը ջարդուինք կամ բոլորս միասին կ՚ազատուինք: Ոչ՛, չե՛նք ուզեր դահիճներու անարգ ու անպատւի լուծին ենթարկուիլ»: Այդպիսով խառն ժողովը կ՚որոշէ մերժել կառավարական վերջին կտրուկ վերջնագրին, և կը ցրուին ամէն մէկը իր սիրելիներուն, իր հարազատներուն մօտ»[89]:

---

85 Տիգրան Մակարյանը նշում է, որ ճամբարից հայերի փախուստը դժվարացնելու նպատակով չերքեզները հրդեհել էին մերձակա կորեկի արտերը (տե՛ս նույն տեղում, թերթ 116):

86 Ճեպեճեան, Ապրուած օրեր հայասպանութենէն, 16:

87 *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives,* 677.

88 Գալայճեան, *Միլիոնէն մէկը,* 41:

89 Նույն տեղում:

**2. Դիմադրության սկզբնական շրջանը**

Ինչպե՞ս է սկիզբ առել հայերի դիմադրությունը. այս հարցում ևս առավել մանրամասն տեղեկություններ է հաղորդում Տիգրան Մակարյանը: Խաբուր գետի հոսանքի երկայնքով սփռված դիակների հայտնաբերումից որոշ ժամանակ (ըստ երևույթին՝ 1-2 օր) անց տղամարդկանց հերթական հավաքագրման նպատակով չերքեզների խումբ է մտել ճամբար և հավաքել նրանց, ապա՝ խորացել դեպի ճամբարի հեռավոր անկյունը, որտեղ խմբվել էին զեյթունցիները: Կրակոցներ են լսվել. ամբողջ ճամբարը մի ակնթարթում սարսափահար վեր է թռել, շատերը (հուշագրության հեղինակը նույնպես) վազել են կրակոցների ձայների կողմը[90]:

Տիգրան Մակարյանը նկարագրում է իր առջև բացված տեսարանը «*անապասելի*» որակումով: Չերքեզներից ոչ ոք ողջ չէր մնացել. մոտ 25 զինված «բաշիբոզուկներ» փռված էին գետնին, իսկ զեյթունցիները դիակների վրայից սառնասրտորեն փամփուշտներն ու զենքերն էին հանում[91]:

Երկու-երեք ժամ անց ճամբարում հինգ զինված «բաշիբոզուկ» է հայտնվել, որոնք, դեպքից անտեղյակ, եկել էին փնտրելու իրենց ընկերներին: Մոտենալով այն վայրին, որտեղ փռված էին չերքեզների դիակները, և տեսնելով եղածը՝ նրանք անմիջապես վերադարձել են իրենց զորանոցը[92]: Այդ հինգ չերքեզների գնալուց հետո ճամբարում մթնոլորտը լարվել է: Մարդիկ սպասում էին ընդհարման արդյունքին: Կես ժամ չանցած՝ մոտեցել է զինված ձիավորների մի հոծ բազմություն (ավելի քան 100 հոգի), որը, սակայն, խուսափել է անմիջապես մուտք գործելուց՝ վարանոտ դոփելով ճամբարի շուրջը: Նրանց ընդառաջ է գնացել մի հայախոս զեյթունցի և թարգմանչի միջոցով պահանջել, որ հեռանան: Զեյթունցին թեև որևէ պատասխան չի ստացել, սակայն չերքեզներն անմիջապես հեռացել են իրենց եկած ճանապարհով[93]:

Այլ աղբյուրներ հիմնականում հաստատում են դիմադրության սկզբնական ընթացքի մասին Տիգրան Մակարյանի հաղորդածը: Այսպես, զեյթունցիների՝ որպես ինքնապաշտպանությունը կազմակերպած հիմնական ուժի մասին նշում կա Գարեգին Հովհաննեսյանի[94], Արամ Անտոնյանի[95], Նազարեթ Մուրադյանի[96] և Հարություն Գալայջյանի[97] վկայություններում:

---

90 ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթեր 116-117:

91 Նույն տեղում, թերթ 117:

92 Նույն տեղում:

93 Նույն տեղում:

94 «Քանի մը զէյթունցիներ եւ ուրիշ քաջ հայեր կը թելադրեն ժողովուրդին որ ձեռքը փայտ բռնել կրցողը դիմադրութեան պատրաստ պէտք է ըլլայ» (BNu/Fonds A. Andonian, Matériaux pour l'histoire du génocide, P.J.1/3, liasse 52, Der Zor/Տէր Զօր, f. 4):

95 «Զէյթունցի տէրտէր մը եւ քանի մը երիտասարդներ 3 չէչէն սպաննելով անոնց զէնքերը կ'առնեն» (նույն տեղում, f. 55):

96 Ինչպես արդեն նշել ենք, վերապրածները և ինքնապաշտպանության դրվագի մասին Նազարեթ Մուրադյանին պատմած ականատեսները զեյթունցիներ էին:

97 Ինչպես արդեն նշել ենք, ինքնապաշտպանության դրվագի առումով Հարություն Գալայջյանի աղբյուրը զեյթունցի Գրիգոր Ալեքսանյանն էր:

Գարեգին Հովհաննեսյանի փոխանցած տեղեկության միջոցով կարելի է լրացնել դեպքերի սկզբնական ընթացքի մասին փաստերը: Աշխատանքային գումարտակներում ընդգրկվելու պահանջի՝ զեյթունցիների մերժումից հետո չեչենները շրջապատել («պաշարել») են զեյթունցիների վրանները և հրամայել նրանց հանձնվել: Սակայն այդ հրամանը ևս մերժվել է. ժողովուրդը ներս է քաշվել՝ ավելի կուռ դարձնելով պաշտպանության օղակը: Չեչենները բոլորակի կրակ են բացել վրանների ուղղությամբ: Քիչ անց, տեսնելով, որ պաշարվածներին դուրս հանել չի հաջողվում, չեչենների մի փոքր ջոկատ մտել է ճամբար և սկսել ծեծել ժողովրդին: Զեյթունցիները բրերով, վրանների սյուներով և այլ գործիքներով հարձակվել են չեչենների վրա, սպանել նրանց և վերցրել զենքերը[98]:

Արամ Անտոնյանի վկայությամբ՝ դեպքի վայրում էր նաև մութեսարիֆը՝ Սալիհ Զեքին: Դիմադրության մասնակիցները փորձել են սպանել Զեքիին, սակայն նրան հաջողվել է փախչել: Արամ Անտոնյանը հաղորդում է, որ Զեքին հայերի ինքնապաշտպանության ճնշման գործում, բացի չեչեններից, ներգրավել էր նաև արաբների[99]:

Դեպքերի ընթացքին Զեքիի անմիջական մասնակցության մասին փաստում են նաև Տիգրան Ճեպեճյանը և Նազարեթ Մուրադյանը: Ըստ Տ. Ճեպեճյանի՝ Զեքին հեռվից, հեռադիտակը ձեռքին, հետևել է իրադարձությունների ընթացքին[100]: Ըստ Ն. Մուրադյանի՝ այն բանից հետո, երբ զեյթունցիները հրաժարվել են բաժանվել իրենց ընտանիքներից և մեկնել ճանապարհաշինական աշխատանքների, ժանդարմները սկսել են մտրակներով ծեծել տղամարդկանց, սակայն վերջիններս սաստել են նրանց ծեծելով և զենքերը խլելուց հետո վռնդել: Մի քանի ժամ անց երեք նոր ժանդարմներ են եկել մութեսարիֆից հրամանով, որ զենքերը պետք է անհապաղ վերադարձվեն, այլապես բոլորը կսպանվեն: Ժողովուրդը, հավատալով, որ դեռ կարող է ինչ-որ ձևով պաշտպանվել, սուրհանդակներին հետ է ուղարկել բացասական պատասխանով[101]:

Դիմադրության սկզբնական ընթացքի մասին Հարություն Գալայջյանի վկայությամբ՝ դիմադրելու նախաձեռնությունը պատկանել է հայերին: Նա հաղորդում է, որ մերժումից հետո՝ հաջորդ օրը՝ առավոտյան, գաղթակայանի «կարգ մը յանդուգն եւ խիզախ կտրիճներ», գավազաններով, մահակներով և բրերով զինված, հարձակվել են մոտակայքում ճամբարը հսկող ժանդարմների վրա, նրանց գետին տապալելով՝ իսկույն հավաքել զենքերն ու դիրք բռնել պաշարողների դիմաց: Հ. Գալայջյանի հաղորդմամբ՝ ինքնապաշտպանության օջախ էր ստեղծվել նաև գաղթակայանի մեկ այլ հատվածում. «Փոնուզի Ալաճաճեան քաջ ու անուանի գերդաստանէն քանի մը աչագեղ կտրիճներ եւ մէկքանի հատ ալ հաճընցի խիզախ երիտասարդներ» գետին են տապալել չերքեզների և, նրանց զենքերը վերցնելով, դիրքավորվել են իրենց պա-

98 BNu/Fonds A. Andonian, Matériaux pour l'histoire du génocide, P.J.1/3, liasse 52, Der Zor/Տէր Զօր, f. 4:

99 Հեղինակի պատկերավոր խոսքով՝ «ագռաւներու պէս իջած եւ իրենց որսին սպասող արաբներուն» (նույն տեղում, f. 55):

100 Ճեպեճեան, *Ապրուած օրեր հայասպանութենէն,* 16:

101 *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives,* 677.

շարող «դաhիճներին» դեմ հանդիման[102]: Սրանից ենթադրելի է, որ դիմադրությունը թերևս ինքնաբուխ չէր[103]:

### 3. Դիմադրության հետագա ընթացքն ու վախճանը

Տիգրան Մակարյանի հաղորդմամբ՝ այն բանից հետո, երբ զեյթունցիներին հաջողվում է հետ մղել չերքեզների առաջին գրոհը, 14 օր ճամբար ոչ ոք չի մտնում: Չերքեզները ցամաքի կողմից ճամբարի պաշարման օղակը փոքր-ինչ հեռացրել էին՝ խմբվելով պահակակետի շուրջը: Անցնում էին օրեր առանց նոր պատահարի, և բռնագաղթյալները մնացել էին «*անտեր և անմխաս*»: Գաղթականները «*խանձվում*» էին արևի տակ՝ գիտակցելով, որ այդ վիճակը չէր կարող երկար տևել[104]:

Այստեղ Տիգրան Մակարյանը նպատակահարմար է գտնում ընդհատել դեպքերի շարադրանքը հետևյալ հարցադրմամբ. «Զեյթունցիները որտեղի՞ց էին ձեռք բերել այն զենքերը, որոնցով սատկացրին մոտ 25 բաշիբոզուկ և մեզ համար էլ ապահովեցին 14 օրվա «խաղաղ» կյանք»: Այս հարցի պատասխանը, ըստ հեղինակի, այն է, որ այդ զենքերը հայերը վերցրել էին իրենց հետ Զեյթունից հեռանալու ժամանակ՝ թաքցնելով ջորիների փալանների մեջ[105]:

Տիգրան Մակարյանը գրում է, որ գաղթակայանի այդ «անտեր» և «սպասողական» վիճակին վերջ է տրվել ինքնապաշտպանության 14-րդ օրը, երբ բազմաթիվ զինված «բաշիբոզուկներ», ժանդարմներ և նույնիսկ կանոնավոր բանակի մի ստորաբաժանում ներխուժել են ճամբար, դիմադրության չհանդիպելով՝ երկու մասի բաժանվել, գետի ափերով մոտեցել զեյթունցիների զբաղեցրած տարածքին և սկսել ուժեղ գնդակոծության ենթարկել նրանց վրանները[106]: «Կռվի վախճանը պարզ էր,– գրում է հեղինակը,– որովհետև զինված ուժերի հարաբերակցությունը խիստ անհամաչափ էր: Կիսազինված մի բուռ զեյթունցիներ դիմադրելու էին մինչև ատամները զինված կանոնավոր և անկանոն բանակի ստորաբաժանումներին, որոնք քանակով էլ խիստ գերազանցում էին հայ քաջերին»[107]:

Զեյթունցիները մարտն ընդունել են սառնասրտորեն: Սկզբում, չնայած կարկուտի նման տեղացող գնդակներին, նրանք պատասխան կրակ չեն բացել՝ թողնելով, որ գրոհողները մոտենան: Դրանից հետո, իրենց գրաստների փալանները որպես պատ-

---

102 Գալայճեան, *Միլիոնէն մէկը,* 41:

103 Հայերի ավելի նախաձեռնողական լինելու մասին ակնարկվում է նաև Տիգրան Ճեպեճյանի վկայության հետևյալ հատվածում. «Հայերէն մի քանի կտրիճ երիտասարդներ ժողովուրդին կ'ըսեն, թէ ալ մեզի համար ապրելու յոյս չկայ, ուստի նախընտրելի է կռուիլ: Կը քաշեն վրաններուն ցիցերը եւ մի քանի չէչէններուն վրայ կը յարձակին 2 հատը վիրաւորելով» (Ճեպեճեան, *Ապրուած օրեր հայապատութենէն,* 16): Սամվել Սահակը ևս դիմադրության նախաձեռնությունը վերագրում է հայերին՝ նշելով, որ երբ զեյթունցիների քարավանը հասնում է կայանատեղ,«կը հասկնան թէ պիտի խողխողուին, գիշերանց կը յարձակին ոստիկան-Չէչէններուն վրայ, կը խլեն անոնց հրացանները եւ կը սկսին կրակ տեղալ» (Սամուէլ Սահակ, «Յուշեր Տէր Զօրի սպանդանոցէն», էջը ??):

104 ՀԶԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 117:

105 Նույն տեղում, թերթեր 117-118:

106 Նույն տեղում, թերթ 118:

107 Նույն տեղում:

նեշ օգտագործելով, սկսել են կրակել՝ ձգտելով իզուր չարձակելու և ոչ մի փամփուշտ: Այսպես նրանք կովել են մինչև վերջին փամփուշտը, որից հետո արյունլվա, դաշույնները ձեռքներին, հերոսաբար նահատակվել են[108]:

«Երբ մութն ընկավ, ճամբարում ամեն ինչ խաղաղվել էր, քանի որ այլևս չէր մնացել դիմադրությունը շարունակելու ունակ ոչ մի զեյթունցի»,– ամփոփում է հուշագրության հեղինակը՝ հետևյալ կերպ գնահատելով տեղի ունեցածը. «Այս հերոսական դիմադրությունը զեյթունցիների համար նախավերջին պոռթկումն էր ընդդեմ թուրքական յաթաղանի[109], որտեղ նրանք ցույց տվեցին իրենց անընկճելի լեռնային ազատատենչ բնավորությունն ու հոգին, ոխերիմ թշնամուց խլելով տասնյակ կյանքեր»[110]:

Ինքնապաշտպանության՝ 14 օր տևելու մասին հաղորդում է միայն Տիգրան Մակարյանը: Այլ աղբյուրների ամփոփ ու ժլատ տեղեկություններից տպավորություն է ստեղծվում, որ հայերի դիմադրությունը ճնշվել է նույն կամ հաջորդ օրը: Այլ հեղինակներ որևէ տեղեկություն չեն հաղորդում նաև զեյթունցիների՝ սեփական զենքերով կովելու հանգամանքի վերաբերյալ. նշվում է միայն չերքեզներից խլած հրացաններով (Գարեգին Հովհաննեսյան՝ 5-6 զենք, Արամ Անտոնյան՝ 3 սպանված չեչենի, Տիգրան Ճեպեճյան՝ 8-10 չեչենի, Նազարեթ Մուրադյան՝ 3 ձիավոր չեչենի զենք) և սառը զենքերով կռիվ վարելու մասին: Ակնհայտ է, որ միայն 3-5, նույնիսկ 25 չեչեններից (եթե հիմք ընդունենք Տիգրան Մակարյանի վկայությունը) խլած զենքերով անհնար կլիներ դիմադրություն ցույց տալ գրոհող չեչենական և արաբական ջոկատներին, հատկապես որ, ինչպես վկայում են որոշ աղբյուրներ, այդ դիմադրությունը միանգամայն ինքնաբուխ չէր: Բացի այդ՝ հայերի՝ սեփական հրազեն ունենալու մասին վկայում է նաև չեչեն ջարդարար Մահմուդ բեկը[111]: Վերոնշյալ փաստարկներից ելնելով՝ միանգամայն հավանական ենք համարում զենքի ծագման վերաբերյալ Տիգրան Մակարյանի հաղորդած տեղեկությունը:

Դիմադրության՝ 14 օր տևելու մասին տեղեկությունն ավելի խնդրահարույց է: Կարծես թե ավելի տրամաբանական է թվում դիմադրության՝ նույն կամ հաջորդ օրը ճնշված լինելը, բայց և այնպես չի կարելի բացառել, որ ջարդարարներին ավելի երկար ժամանակ էր անհրաժեշտ ուժեր կուտակելու համար, հատկապես որ, ինչպես արդեն նշեցինք, ըստ աղբյուրների, դիմադրության ճնշմանը մասնակցել էին նաև արաբներից կազմված ջոկատներ: Գրոհի համար հնարավորինս մեծ թվով ուժեր ապահովելը տրամաբանական է, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ զեյթունցիները կռվել են ոչ միայն խլած, այլև սեփական հրազենով:

Այժմ ներկայացնենք դիմադրության ճնշման մասին այլ աղբյուրներից քաղված տեղեկությունները, որոնք լրացնում են Տիգրան Մակարյանի պատմածը: Արամ Ան-

---

108 Նույն տեղում:

109 Առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի պարտությունից հետո Զեյթուն էին վերադարձել մոտ 1 500 վերապրած հայեր, որոնք 1919-1921 թթ. դիմադրել են Զեյթունի նկատմամբ լիակատար վերահսկողություն հաստատելու քեմալական ուժերի ոտնձգություններին: Ըստ երևույթին, հենց այդ դիմադրությունը նկատի ունենալով է հեղինակը 1916 թ. դրվագը որակել որպես «նախավերջին» (1919-1921 թթ. դիմադրության մասին մանրամասն տե՛ս Պողոսյան, *Զեյթունի պատմությունը 1409-1921 թթ.*, 408-414):

110 ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթ 118:

111 *Տէր Զօր: Հեղինակ՝ Աղէտէն վերապրողներ*, 231:

տոնյանի հաղորդմամբ՝ դիմադրության ճնշումից հետո չեչենական ու արաբական ջոկատներն անցել են բռնագաղթյալների կոտորածին: Աիաբեկված ժողովուրդը ցրվել է՝ փախչելով ճամբարի տարածքից: Դա տեսնելով և մտահոգվելով, որ խառնաշփոթի մեջ շատերի փախուստը կարող է հաջողվել, Զեքին իսկույն հրամայել է դադարեցնել ջարդը: Ողջ մնացած հայերին հրամայվել է երեք անգամ «Փատիշահըմ չոք յաշա» («Թագավորն ապրած կենա») գոռալ: Ա. Անտոնյանն ավելացնում է, որ ինքնապաշտպանության ժամանակ ճամբարում կար մոտ 20 000 հայ գաղթական[112]:

Տիգրան Ճեպեճյանի վկայության մեջ նշվում է զեյթունցիների դիմադրության ճնշմանը մասնակցած ջարդարարների թիվը՝ 200 հեծելազորային, ինչպես նաև օժանդակ ջոկատներ[113]: Հեղինակի հաղորդմամբ՝ ճամբարի պաշարումն ու դրան հետևած գրոհն անձամբ ղեկավարել է Սալիհ Զեքին: Գրոհը սկսվել է առավոտյան և տևել մինչև երեկո: Դիմադրությունը ճնշելուց հետո Զեքին, մոտենալով զոհված հայերի դիակների կույտերին, իբր ասել է. «Գառնուկներս շատ կը ցաւիմ, որ ձեր գլխուն այս աղէտը պատահեցաւ. հիմա Պոլսէն հեռագիր առի, որ ալ ջարդը պէտք է վերջ գտնէ, երանի թէ այս հրամանը առտուն գար, ամէնքդ ալ կ'ազատուէիք: Եթէ ձեր մէջ ողջ մնացողներ կան, թող ելլեն եւ այս ներումին արժանանան»[114]: Այս խոսքերին հավատալով՝ 10-15 մարդ, որոնք թաքնվել էին դիակների տակ, ոտքի են կանգնել, և Զեքին հրամայել է գնդակահարել նրանց: Չգոհանալով դրանով՝ նա ձիավորներին հրամայել է 3-4 անգամ կոխկրտելով անցնել դիակների վրայով, որպեսզի ողջ մնացածները մեռնեն[115]:

Նազարեթ Մուրադյանի վկայությամբ՝ ջարդարարների գրոհի օրը՝ առավոտյան, գաղթականներից շատերն աղքատներին են բաժանել իրենց սննդի մնացորդները, զեյթունցիները մորթել են իրենց լծկան անասունները՝ ընդհանուր մատաղի ճաշի համար: Քահանաները պատարագ են մատուցել և հաղորդություն տվել: Կեսօրին 200 ժանդարմ արաբների և չերքեզների ուղեկցությամբ շրջապատել է ճամբարը: Նրանք սկսել են բոլոր կողմերից կրակել մարդկանց վրա: Երբ ժանդարմներն ավելի են մոտեցել զեյթունցիների դիրքերին, պաշտպանվողները պատասխան կրակ են բացել: Ժանդարմները նահանջել են, ապա՝ նորից առաջ գնացել և կոտրել հայերի դիմադրությունը՝ կողքից ճանապարհ թողնելով դեպի գետ: Հայերից շատերն իրենց մահն են գտել ջրի մեջ, ոմանց էլ հաջողվել է լողալով անցնել գետը և փախուստի դիմել[116]:

---

112 BNu/Fonds A. Andonian, Matériaux pour l'histoire du génocide, P.J.1/3, liasse 52, Der Zor/Տէր Զօր, ff. 55-56:

113 Գրոհողների նշված թվաքանակը երկրորդվում է նաև Նազարեթ Մուրադյանի և Մահմուդ բեկի վկայություններում:

114 Ճեպեճեան, *Ապրուած օրեր հայաապանութեանէն*, 16-17:

115 Նույն տեղում: Զեյթունցիների ջարդին անձամբ Սալիհ Զեքիի ներկայությունը հաստատում է նաև Սամուել Սահակը (տե՛ս Սամուէլ Սահակ, «Յուշեր Տէր Զօրի սպանդանոցէն»):

116 *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives,* 677: Համեմատի՛ր դիմադրության ճնշման՝ Հարություն Գալայջյանի նկարագրությունը. «Աիռելի ջարդը կը սկսի: Պաշարուողներէն դէպի Խապուր գետը նետուողները տեղն ու տեղը կը գնդակահարուին, դէպի անապատի խորերը փախչողները արաբական ձիաւորները կը հալածեն եւ իրենց կեռ թուրերով անոնց գլուխները կը հնձեն, միշտ հետապնդելով ուրիշ փախչող մը, ուրիշ ճողոպրող մը» (Գալայճեան, *Միլիոնէն մէկը,* 42):

**4. Դիմադրության մասնակիցների թիվն ու կորուստները: Եզրակացություններ**

Ինքնապաշտպանական դրվագի պատմության ներկայացումը չենք կարող լիարժեք համարել առանց դիմադրությանն անմիջականորեն մասնակցած հայ տղամարդկանց թվաքանակի, ինչպես նաև կողմերի կորուստների դիտարկման: Հարկ է արձանագրել, որ աղբյուրները որևէ ուղղակի տվյալ չեն պարունակում առաջինի վերաբերյալ: Ըստ Տիգրան Մակարյանի՝ դիմադրությունը նախաձեռնել են «կիսազինված մի բուռ զեյթունցիներ», ըստ Արամ Անտոնյանի՝ «Զէյթունցի տէրտէր մը եւ քանի մը երիտասարդներ», ըստ Տիգրան Ճեպեճյանի՝ «մի քանի կտրիճ երիտասարդներ», ըստ Հարություն Գալայջյանի՝ «կարգ մը յանդուգն եւ խիզախ կտրիճներ»: Անշուշտ, վերջին մարտին մասնակցած հայ տղամարդկանց թիվն ավելի մեծ է եղել, սակայն, մեր կարծիքով, չի գերազանցել 100-120-ը, որից սեփական կամ չերքեզներից խլած հրազեն է ունեցել առավելագույնը մեկ երրորդը: Նշված եզրակացությանը հանգելու համար հիմք է ծառայել աղբյուրների այն վկայությունը, ըստ որի՝ ինքնապաշտպանության ճնշմանը նետված 200 ժանդարմների հեծելազորը և արաբների ու չերքեզների օժանդակ ուժերը, որոնք միասին պետք է կազմեին միջին հաշվարկով 300-400 մարդ, թվաքանակով խիստ գերազանցում էին հայկական ուժերին: Դրանով հանդերձ՝ տարբերությունն այդքան էլ մեծ չի եղել, քանի որ հայերը կարողացել են մի քանի ժամ դիմադրել՝ նույնիսկ հետ մղելով ջարդարարների առաջին գրոհը: Այսինքն, մեր կարծիքով, հարձակվող և պաշտպանվող ուժերի հարաբերակցությունը եղել է մեկը երեքի կամ մեկը չորսի սահմաններում:

Կողմերի կորուստների հարցն ուսումնասիրելիս նույնպես բախվում ենք որոշակի դժվարությունների: Հայկական աղբյուրները հաղորդում են հակառակորդի՝ միայն նախքան վերջին գրոհը արձանագրած կորուստները (ըստ Տիգրան Մակարյանի՝ 25 սպանված,ըստ Գարեգին Հովհաննեսյանի՝ 5-6 սպանված և/կամ վիրավոր, ըստ Արամ Անտոնյանի՝ առնվազն 3 սպանված, ըստ Տիգրան Ճեպեճյանի՝ առնվազն 2 վիրավոր,, ըստ Նազարեթ Մուրադյանի՝ առնվազն 3 սպանված և/կամ վիրավոր): Դիմադրության ճնշմանը մասնակցած ջոկատի հրամանատար Մահմուդ բեկը, իր վկայությամբ, կորցրել է 4-5 մարդու, նաև իր եղբորորդուն, այսինքն՝ 5-6 հոգի: Եթե հիմք ընդունենք վերոնշյալ տվյալները, ապա ինքնապաշտպանության ժամանակ ջարդարարները նվազագույնը ունեցել են 8-10 զոհ, իսկ առավելագույնը՝ 30-32: Հայկական կողմից զոհվել են դիմադրությանն անմիջականորեն մասնակցած գրեթե բոլոր տղամարդիկ՝ 100-120 հոգի, իսկ առավել լայն դիտարկմամբ՝ աքսորակայանում կենտրոնացած գրեթե բոլոր չափահաս տղամարդիկ (եթե աքսորակայանում 1916 թ. օգոստոսի կեսերի դրությամբ հանգրվանած առաջին քարավանի հայերի ընդհանուր թիվը ընդունենք 15-20 հազար (Նազարեթ Մուրադյան, Արամ Անտոնյան), ապա նրանցից չափահաս էր 4-5 հազարը): Կորուստների նշված թվաքանակը մեր աղբյուրներում երկրորդվում է. Արամ Անտոնյանի հաղորդմամբ՝ 1916 թ. օգոստոսի վերջին զանազան պատրվակներով սպանվել էր առաջին քարավանով Սուվար և Շեդադիե հասած մոտ 5 000 տղամարդ[117]:

117 BNu/Fonds A. Andonian, Matériaux pour l'histoire du génocide, P.J.1/3, liasse 52, Der Zor/Տէր Զօր, f. 55:

Այսպիսով, ի մի բերելով զեյթունցիների դիմադրության դրվագի մասին Տիգրան Մակարյանի և այլ ականատես-վերապրածների հաղորդած տեղեկությունները, հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Դիմադրությունը տեղի է ունեցել 1916 թ. օգոստոսի առաջին կեսին Շեդադիեի համակենտրոնացման ճամբարում:
2. Դիմադրության հիմնական մասնակիցներն էին Դեր Զորից քշված հայ աքսորյալների առաջին քարավանում ընդգրկված զեյթունցիները:
3. Դիմադրության պատճառն աշխատանքային գումարտակներում տղամարդկանց բռնի հավաքագրումն ու բնաջնջումն էր:
4. Դիմադրության մասնակիցների հրազենի մի մասը նրանց սեփականությունն էր, մյուս մասը խլված էր ժանդարմներից:
5. Դիմադրությունը տևել է 2-3, առավելագույնը՝ 14 օր:
6. Դիմադրությանն անմիջականորեն մասնակցել է 100-120 հայ տղամարդ, որոնց մոտ մեկ երրորդն է ունեցել հրազեն:
7. Դիմադրության ճնշմանը մասնակցել են 200 հեծելազորային ժանդարմներ, ինչպես նաև արաբների ու չերքեզների օժանդակ զորաջոկատներ:
8. Դիմադրության ճնշման գործողություններն անձամբ ղեկավարել է Դեր Զորի գավառապետ Սալիհ Զեքին:
9. Զարդարարներն ունեցել են առնվազն 8-10 զոհ[118]:

Ահա այսպիսի սկզբնավորում, ընթացք և վախճան է ունեցել, ըստ աղբյուրների համահավաք տեղեկությունների, զեյթունցիների դիմադրությունը: Ինքնապաշտպանության ճնշումից հետո սկսվել է ճամբարում դեռևս ողջ մնացած և թաքնված տղամարդկանց «որսը»: Տիգրան Մակարյանի մայրը, քաջ գիտակցելով, որ եթե որդին մնա Շեդադիեում, անխուսափելիորեն սպանվելու է, հորդորել է նրան մեկ այլ թաքնվող գաղթականի՝ Միհրան Աղազարյանի ուղեկցությամբ փախուստի դիմել: Տիգրան Մակարյանին և Միհրան Աղազարյանին հաջողվել է ճողոպրել ճամբարից, երկար դեգերումներից հետո՝ հասնել Հալեպ ու փրկվել: Շեդադիեում հանգրվանած առաջին քարավանի 15-20 հազար հայ աքսորյալների մեծ մասին, այդ թվում՝ Տիգրան Մակարյանի ծնողներին, այլ բախտ է վիճակվել. Դեր Զորի անապատը դարձել է նրանց հավաքական գերեզմանը[119]:

---

118 *Հավելված Բ. Զեյթունցիների զինված դիմադրության մասին հիմնական տեղեկությունները՝ ըստ աղբյուրների*:

119 Միհրան Աղազարյանի հաղորդմամբ՝ 1916 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին Սուվար–Շեդադիե–Հասըրճա հատվածում ջարդված հայության ընդհանուր թիվը 110 000 էր (տե՛ս Աղազարեան, *Աքսորականի յուշեր*, 39): 1917 թ. փետրվարին օսմանյան կառավարության անցկացրած հաշվառման տվյալներով՝ Դեր Զորի գավառում մնացել էր ընդամենը 6 778 հայ գաղթական: Մոսուլում հաստատված հայ գաղթականների թիվը 7 033 էր (տե՛ս Ara Sarafian, *Talaat Pasha's Report on the Armenian Genocide, 1917* (London: Taderon Press by Arrangement with the Gomidas Institute, 2011), 21):

## Հավելված Ա. Զեյթունցիների դիմադրության դրվագի մասին ականատես-վերապրածների վկայությունները

### 1. Տիգրան Մակարյանի վկայությունը

Շեռադիե մեր հասնելու հաջորդ օրն իսկ առավոտյան մի խումբ չերքեզներ՝ մոտ 20 հոգի, մտնելով մեր ճամբարը, հայտարարեցին, թե Օսման աղայի հրամանով մեզ հետ պետք է գա 150 տղամարդ, որոնք իրենց օրապահիկը ստանալուց հետո պետք է գնան աշխատելու ճանապարհաշինության[120] վրա: Պահանջը կարծես շատ տրամաբանական և բնական էր, որով ենթադրվում էր, թե մեզ այնտեղ բերել են ոչ թե անգործ թողնելու, այլ մեր մեջ գտնված աշխատունակ ուժը օգտագործելու համար:

Ինչևիցե, դա մեզ համոզելու համար ոչ ոք քարոզ չկարդաց և ոչ էլ հաշիվ տվեց, այլ ուղղակի մի տեսակ բռնի կերպով ում հանդիպեցին, մեկուսացրին և 155 հոգի լրացնելուց հետո հսկողության տակ տարան:

Այդ խումբը գնաց և երեկոյան չվերադարձավ: Հաջորդ առավոտյան չերքեզների ավելի հոծ խումբ եկավ և նույն պահանջը ներկայացրեց, հայտարարելով, թե խճուղանորոգման աշխատանքները կարող են մինչև մեկ ամիս տևել, որով գնացողները հետ են վերադառնալու միայն աշխատանքը լրիվ վերջացնելուց հետո:

Այդ օրը 100 հոգի տարան, նույն սիստեմով, ինչպես տարել էին առաջին օրը: Նույն պատրվակի տակ զինված խմբեր ամեն առավոտ գալիս և տանում էին՝ 150, 160 կամ 200 հոգի, ինչքան որ հարմար էին համարում, իսկ ժողովուրդը համոզվել էր, որ մի նոր խճուղի էր կառուցվում, որի վրա աշխատելու էին տանում իրենց տղամարդկանց: Մեկուսացման կանխամտածված մի թակարդ էր: Այսպես շարունակվեց 13 օր: Ամեն օր տղամարդկանց տանում էին, հայտարարելով, թե ճանապարհաշինարարությունը շարունակվում է:

Ինչքան հիշում եմ, 13-րդ օրն էր, երբ ճամբարում մի իրարանցում սկսվեց, և ժողովուրդը, նամանավանդ՝ «ճանապարհաշինության» տարված տղամարդկանց կանայք և հարազատները, սահմռկած վազում էին դեպի Խաբուր գետը: Պարզվեց, որ առավոտյան կանուխ կանայք գնացել են գետը ջուր բերելու և գետի մեջ տեսել են դիակներ՝ իրար կապված, նախ՝ վեց դիակից բաղկացած մի խումբ, ապա՝ տասը դիակից, հանձնված Խաբուրի արագընթաց ջրերին:

Ամեն ինչ պարզ էր: Ճանապարհաշինության անվան տակ գնացող տղամարդկանց ճակատագիրը հար և նման պետք է եղած լիներ, ինչ առավոտյան կանայք տեսել էին Խաբուրի ջրերում: Մի խոսքով, ոչնչացնում էին այն տղամարդկանց, որոնք երկու տարի առաջ խուսափել էին զինակոչման պատրվակի տակ կատարվող ոչնչացումից:

Լաց ու ողբ էր տիրում ամբողջ ճամբարում: Որբացած երեխաներ, այրիացած կանայք, որդեկորույս ծնողներ անեծք էին թափում այն մարդկանց հասցեին, որոնք կազմակերպել և իրագործում էին այդ եղեռնը:

Այդ օրը, մեզ անհայտ պատճառներով, ճանապարհաշինության համար տղամար-

---

120 Տաճկաստանում «ճանապարհաշինության գնալ» ասելով հասկանում էին «սպանդանոց գնալ» (ծանոթագրությունը՝ հեղինակի):

դիկ չպահանջվեցին մեզանից: Շատ հավանական է, որ դահիճները իրենց դիտակետից տեսել էին ճամբարում տիրող իրարանցումը և տեղեկացել էին իրենց գործած ոճիրների բացահայտման մասին: Մի խոսքով, վարագույրը բացված էր, և զգացել էին, որ ճանապարհաշինության վերաբերող հորինվածքը հայտնի էր դարձել ժողովրդին, որով գուցե մտածում էին նոր թակարդ լարել:

Այդ օրվա ամբողջ տևողության ընթացքում, խումբ-խումբ չերքեզներ, յուրաքանչյուր խումբը՝ երկու թուրք ժանդարմների առաջնորդությամբ, անընդհատ շրջում էին ճամբարի մեջ, կարծես ինչ-որ բան էին փնտրում: Այդ արտասովոր շարժումը ժողովուրդը վերագրեց այն բանին, թե դահիճները, իմանալով իրենց գործի բացվելը, եկել էին ճամբար, ցանկանալով շոշափել ժողովրդի տրամադրությունը:

Երեկոյան, երբ դեռ մութը լրիվ չէր իջել, ճամբար եկան մի խումբ զինված մարդիկ և, շրջելով ճամբարի մեջ, կարծես տեղը իմացողների նման, ջոկեցին 12-15 երիտասարդ կանանց և աղջիկների, որոնց կարգադրեցին գնալ իրենց հետ, հայտարարելով, թե իրենց սպիտակեղենը պետք է լվանան…

Կանանց տանելով պահակատուն, ո՜վ գիտե՝ ամբողջ գիշեր ինչպիսի լլկումների էին ենթարկել, որ անհնար է թղթին հանձնել, իսկ այդ բոլորի «գլուխգործոցը» համարել էին այն, որ հաջորդ առավոտ նրանց բոլորովին մերկ վիճակում առաջարկել էին գնալ ճամբար: Սակայն նրանցից ոչ մեկը չեկավ ճամբար: Բոլորն էլ, այլևս ավելորդ համարելով իրենց ապրելը այդպիսի եղելություններից հետո, իրենց գցել էին Խաբուր գետը և խեղդվել:

Վերոհիշյալ դեպքերի թողած տպավորությունը ժողովրդի վրա այնքան խորն էր և անջնջելի, որ մարդիկ այլևս առանց լրացուցիչ բացատրությունների կարիք զգալու, շատ որոշակիորեն տեսնում էին իրենց համար նախատեսված և սահմանված մահը իր ամբողջ ահավորությամբ և, փաստորեն, հաշվում էին իրենց վերջին օրերը: Ոչ մի ուժ այլևս ի վիճակի չէր նրանց հոգեպես կենդանացնելու և նրանց մեջ դեպի կյանք մղող ձգտում առաջացնելու:

Ճամբարում երիտասարդ տղամարդկանց թիվը շատ էր պակասել: Երիտասարդներից ոմանք փորձեցին փախչել և ազատվել այդ դժոխքից, սակայն նրանց մեծամասնությունը զոհվեց կամ չերքեզների գնդակներից կամ էլ խեղդվեց գետը անցնելու ժամանակ: Մայրերը այլևս իրենց մասին չէին մտածում. համակերպված լինելով իրենց այդ դրությանը, մահը նրանց համար ազատություն էր: Նրանց միակ ձգտումն էր համոզել իրենց զավակներին, եթե նրանք իրենց մոտ էին, որ փախչեն, և խրատում էին գետը լողանալով անցնել և գնալ դեպի Մոսուլ, դեպի Սինջար՝ քրդերի մեջ:

Որդին երբ հիշեցնում էր, թե՝ «Ա՛յ մայր, ես լողալ չգիտեմ», մայրը պատասխանում էր՝ «Որդի՛ս, այս շները ուշ թե շուտ քո գլուխը ուտելու են. լավ է փորձել և խեղդվել ջրի մեջ, քան թե այս գազանների ձեռքով սպանվել»:

Ինչպես ասել ենք, մեր ճամբարի մի կողմը՝ այն էլ լայն կողմը, ջրային պատնեշ չկար, այլ կային ցանված կորեկի արտեր, որոնց մեջ թաքնվելով, շատերը փորձեցին փախչել, որոնցից մի քանիսին հաջողվեց ազատվել: Այդ նկատելով, մեզ հսկող չերքեզները, առանց խղճահարվելու վառեցին կորեկի լայն տարածություն գրավող ամբողջ ցանքսերը:

Ժողովրդի մեջ հուսահատությունը այնքան ծայրահեղության էր հասել, որ որպես մի ցայտուն օրինակ կարող եմ հետևյալը պատմել: Չեմ հիշում՝ ո՞ր օրն էր, բայց մի բան եմ հիշում, որ դրանից մի քանի օր հետո սկսվեցին սանձարձակ կոտորածները: Առավոտ էր, երբ հանդիսատես եղանք հետևյալ դեպքին: Մեր մեջ կար 60-ամյա մի ծերունի, որը հայտնի հարուստ յարփուզցի Կարապետ Գույումջյանն էր: Սա, առավոտյան մի տոպրակ ոսկի վերցնելով, ուղղակի ցանեց գետինը՝ նստած ժողովրդի մեջ, ասելով՝ փոխանակ թուրքերին մնալու՝ վերցրեք: Տարօրինակ երևույթ. ոչ ոք տեղից չշարժվեց և չհավաքեց այդ հարյուրավոր ոսկիները, միայն մի քիչ հետո կանայք հավաքեցին այդ մետաղյա դրամները և թափեցին գետի մեջ:

***

Մի օր՝ նույնպես վաղ առավոտյան, չերքեզների մի խումբ մտավ ճամբար տղամարդկանց հերթական հավաքը կատարելու: Նրանք անարգել բռնեցին բոլոր տղամարդկանց, ում որ հանդիպեցին, սակայն դա քիչ համարելով, խորացան դեպի ճամբարի հեռավոր անկյունը, ուր զեյթունցիներն էին տեղավորվել, որոնք, բոլորից շուտ գալով Ծետտադիե, զբաղեցրել էին երկու գետերի միացման միջև գտնվող ցամաքի հեռավոր անկյունը և համեմատաբար քիչ զոհ էին տվել այստեղ:

Երբ չերքեզների զինված խումբը մոտեցավ զեյթունցիներին, հանկարծ մի քանի համազարկ լսվեց, որից հետո լռություն տիրեց: Ամբողջ ճամբարը մի ակնթարթում սարսափահար վեր թռավ, և շատերը վազեցին դեպի կրակոցի ձայնի կողմը, որոնց թվում և ես:

Տեսարանը անսպասելի էր, չերքեզներից ոչ ոք չէր մնացել, մոտ 25 զինված բաշիբոզուկներ փռված էին գետնին, իսկ զեյթունցիները, սառնասրտությամբ մոտենալով դիակներին, նրանց վրայից փամփուշտներն ու զենքերն էին հանում: Այդ դեպքից երկու կամ երեք ժամ հետո վերջապես հինգ զինված բաշիբոզուկներ երևացին, որոնք, ըստ երևույթին, դեպքին անտեղյակ, եկել էին փնտրելու իրենց ընկերներին:

Մոտենալով այն վայրին, որտեղ փռված էին այդ սատակները, և տեսնելով եղելությունը, նրանք մի րոպե սահմռկած մնացին, ապա անմիջապես հետդարձ անելով, «հերոսները» առանց ծպտուն հանելու վերադարձան իրենց զորանոցը, ըստ երևույթին, հաղորդելու համար այդ անակնկալը:

Այդ հինգ չերքեզների գնալուց հետո ճամբարում ստեղծվեց լարված դրություն, և մարդիկ սպասում էին այդ ընդհարման արդյունքին: Դեռ կես ժամ չէր անցել, երբ զինված ձիավորների մի հոծ բազմություն մոտեցավ ճամբարին: Նրանք, չնայած իրենց թվականապես 100-ից ավելի լինելուն, խուսափեցին անմիջապես ճամբար մտցնելուց, այլ վարանոտ թափառեցին ճամբարի շուրջը: Նրանց ընդառաջ եկավ մի հայախոս զեյթունցի և որպես պատվիրակ մի թարգմանի միջոցով յուրայինների անունից պահանջեց այդ խմբից հեռանալ և այլևս չմոտենալ, ժողովրդին թողնելով իր բախտին: Զեյթունցին թեև ոչ մի պատասխան չստացավ, սակայն նրանք, ձիերի գլուխներն անմիջապես շուռ տալով, հեռացան իրենց եկած ճանապարհով:

Այդ օրվանից սկսած ճիշտ 14 օր մենք մնացինք անտեր և անվնաս: Ոչ ոք մեզանով չէր հետաքրքրվում կարծես: Անցնում էին օրեր առանց նոր պատահարի, և մենք փաստորեն խանձվում էինք արևի տակ, գիտակցելով հանդերձ, որ այդ երկար չէր կարող շարունակվել: Միակ նորությունը այն էր, որ չերքեզները ցամաքի կողմից մեր ճամբարի պաշարման օղակը ավելի հեռացրին, ստվարացնելով պահակախումբը, որը մեզ էր հսկում: Հետաքրքիրը միայն այն էր, թե զեյթունցիները որտեղից էին ձեռք բերել այն զենքերը, որոնցով սատկացրին մոտ 25 բաշիբոզուկ և մեզ համար էլ ապահովեցին 14 օրվա «խաղաղ» կյանք:

Պարզվեց, որ Զեյթունից հեռանալու ժամանակ իրենց ջորիների փալանների մեջ թաքցրել էին զանազան տրամաչափի զենքեր և փամփուշտ: Տարի ու կես պահելուց հետո, Շեռտադիեում չերքեզների դեմ օգտագործեցին այն գնդակները, որոնք Զեյթունում գտնված ժամանակ հատկացրել էին թուրքերի դեմ կովելու:

Համենայն դեպս, մեր այդ անտեր և սպասողական վիճակը ընդհատվեց նրանով, որ 14-րդ օրը բազմաթիվ զինված բաշիբոզուկներ, ժանդարմներ և նույնիսկ կանոնավոր բանակի մի ստորաբաժանում ներխուժեցին մեր ճամբարը, դիմադրության չհանդիպելով, երկու մասի բաժանվեցին և գետերի ափերով մոտեցան զեյթունցիների զբաղեցրած վայրին, այսինքն՝ երկու գետերի միացման անկյունը, ուժեղ գնդակոծության ենթարկելով նրանց:

Կովի վախճանը պարզ էր, որովհետև զինված ուժերի հարաբերությունը խիստ անհամաչափ էր: Կիսազինված մի բուռ զեյթունցիներ դիմադրելու էին մինչև ատամները զինված կանոնավոր և անկանոն բանակի ստորաբաժանումների, որոնք քանակով էլ խիստ գերազանցում էին հայ քաջերին:

Զեյթունցիները մարտը ընդունեցին սառնարյուն կերպով: Սկզբնական շրջանում, հակառակ կարկուտի նման տեղացող գնդակներին, զեյթունցիները չպատասխանեցին, այլ թողեցին, որ նրանք մոտենան, ինչից հետո իրենց գրաստների փալանները օգտագործելով որպես պատնեշ, սկսեցին կրակել, ձգտելով ոչ մի փամփուշտ իզուր չարձակել:

Այսպես կովեցին մինչև վերջին փամփուշտը, ինչից հետո, արյունլվա խանչալները ձեռքներին, հերոսաբար նահատակվեցին: Այս հերոսական դիմադրությունը զեյթունցիների համար նախավերջին պոռթկումն էր ընդդեմ թուրքական յաթաղանին, որտեղ իրենց անընկճելի լեռնային ազատատենչ բնավորությունն ու հոգին ցույց տվեցին, ոխերիմ թշնամուց խլելով տասնյակ կյանքեր:

Այսպիսով, վերջացավ Շեռտադիեում 14 օր տևած մեր հարաբերական խաղաղ կյանքը, և երբ մութն ընկավ, ճամբարում ամեն ինչ խաղաղվել էր, քանի որ չէր մնացել ոչ մի զեյթունցի՝ դիմադրությունը շարունակելու:

Աղբյուրը՝ ՀՑԹԻ ԳՖ, բաժին 8, ֆոնդային համար 261, թղթապանակ 160, թերթեր 112-118:

**2. Գարեգին Հովհաննեսյանի վկայությունը**[121]

Քանի մը օր վերջ Խասըրճայէն փախչող երիտասարդի մը պատմածին համաձայն մենէ առաջ գացողները ամբողջ սպաննուեր էին: Երբ կ'երթան Խասըրճա, կը տեսնեն թէ անհամար արապներ մեծերով պզտիկներով իրենց կը սպասեն ոչնչացնելու համար: Քանի մը զէյթունցիներ եւ ուրիշ քաջ հայեր կը թելադրեն ժողովուրդին որ ձեռքը փայտ բռնել կրցողը դիմադրութեան պատրաստ պէտք է ըլլայ: Վրանները կը պաշարուին եւ չէչէններուն պետը հրաման կ'ընէ որ ժողովուրդը դուրս ելնէ վրաններէն: Բայց ժողովուրդը համոզուած ըլլալով որ եթէ դուրս ելնէ մահը անխուսափելի է իրեն, չ'անսար հրամանին եւ աւելի ներս կը քաշուի: Չէչէնները կը սկսին բոլորակի կրակ ընել վրաններուն վրայ, բայց տեսնելով որ անկարելի պիտի ըլլայ այդ կերպով դուրս հանել, քանի մը հոգիներ վրաններուն մէջ կը մտնեն եւ ժողովուրդին վրայ յարձակելով կը սկսին ծեծել դուրս հանելու համար: Ահա այն ատեն հայերը պոռ ու գոչով կը յարձակին անոնց վրայ, ոմանք բիրերով, ուրիշներ վրաններուն սիւներովը կամ այլ գործիքներով: Զէնքերնին կ'առնեն ու կը սկսին պատերազմի: Բայց 5-6 զէնքով ի՞նչ կրնային ընել հարիւրաւոր զինեալներու: Վերջապէս ամբողջովին կը փճանան: Խասըրճայէն եկող երիտասարդին այս պատմութիւնը սարսափեցուց մեզ:

Աղբյուրը՝ BNu/Fonds A. Andonian, Matériaux pour l'histoire du génocide, P.J.1/3, liasse 52, Der Zor/Տէր Զօր, ff. 1-11: Ֆրանսերեն թարգմանությամբ՝ "L'Extermination des déportés arméniens ottomans dans les camps de concentration de Syrie – Mésopotamie (1915-1916): La deuxième phase du génocide,"*Revue d'histoire arménienne contemporaire, 2* (1998), volume prepare par Raymond H. Kevorkian, 195-198:

**3. Արամ Անտոնյանի գրառումներից քաղված տեղեկությունը**[122]

Ա. սէվքիյաթը այսպէսով ատեն մը կը յամենայ Սուարի մէջ, վրայ կը հասնի երկրորդը: Բայց ան չհասած, զանազան պատրուակներով աւելի քան 5 000 տղամարդիկ սպաննուած էին արդէն: Բազմութեան համախռնումին վրայ, Զէքի՝ հասկնալով որ դժուար պիտի ըլլայ այդ մարդիկը խմբովին սպաննել, նոր հրաման մը կու տայ որ մարդիկ զատուին իրենց ծննդավայրերուն համեմատ,– մարաշցի, հաճընցի, զէյթունցի, իզմիտցի, ատաբազարցի, և այլն: Ժողովուրդէն՝ նոր եկողներն ալ կը հասկնան որ այլևս ազատում չունին: Զէյթունցի տէրտէր մը և քանի մը երիտասարդներ 3 չէչէն սպաննելով անոնց զէնքերը կ'առնեն: Փորձ կ'ըլլայ նաև միւթէսարֆը սպաննելու, բայց ան կը փախչի չէչէններուն մօտ: Ցետոյ իսկոյն լուր կը ղրկեն մօտերը՝ ազոաւներու պէս իջած և իրենց որսին սպասող արաբներուն: Ինք ու չէչէնները անոնց գլուխը կ'անցնին, կը շրջապատեն գաղթականներու բազմութիւնը, կը սկսին կրակել: Արաբները բազմու-

121 Փաստաթուղթը մեզ տրամադրել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենի խորհրդական Միհրան Մինասյանը: Ձեռագրի մուտքագրումը՝ Միհրան Մինասյանի:

122 Փաստաթուղթը մեզ տրամադրել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենի խորհրդական Միհրան Մինասյանը: Ձեռագրի մուտքագրումը՝ Միհրան Մինասյանի:

թեան մէջ կը մտնեն և իրենց գնդաձայր ճոկաններով կը սկսին կոտորել: Ժողովուրդը, թէ հրացանաձգութենէն և թէ այդ յարձակումէն ահաբեկ, կը ցրուի ամէն կողմ: Շատեր կը սկսին փախիլ: Զէքի՝ անոնց ցրուումը տեսնելով, իսկոյն սպանդը կը դադրեցնէ, լուր կը հանէ ամէն կողմ որ ջարդը դադրած է: Մնացողներուն երեք անգամ «Փատիշահըմ չօք եաշա»[123] պոռալ կու տայ: Ասոր վրայ, ժողովուրդը կը վստահի ու ետ կը դառնայ: Մօտ 20 000 ժողովուրդ կար այդ միջոցին հոն:

Աղբյուրը՝ BNu/Fonds A. Andonian, Matériaux pour l'histoire du génocide, P.J.1/3, liasse 52, Der Zor/Տէր Զօր, ff. 53-58: Ֆրանսերեն թարգմանությամբ՝ "L'Extermination des déportés arméniens ottomans dans les camps de concentration de Syrie – Mésopotamie (1915-1916): La deuxième phase du génocide,"*Revue d'histoire arménienne contemporaire, 2* (1998), volume prepare par Raymond H. Kevorkian, 176-180:

**4. Տիգրան Ճեպեճյանի վկայությունը**

27 օր յետոյ առտու մը կանուխ դեռ չլուսցած, վրաններէն քիչ մը հեռուն տեսայ, որ հազիւ 20 տարեկան երիտասարդ մը, բոլորովին մերկ, դէպի վրանները կու գար՝ զիս ճանչնալով անունս կանչեց: Երբ մօտեցաւ, գիտցայ որ այնթապցի Սրլքըտճեան Յարութիւնն էր: Այս տղան զինուորականութեան փարթիին[124] յարած մեզ նախորդող կարաւանով գացած էր: Տղան պատմելու սկսաւ.– Տէր-Զորէն անցնող բոլոր հայութեան այրերը զատելով մաս առ մաս տարած են անապատները ջարդելու: Իրենց կարաւանը՝ 4 000 հոգի, տարած եմ Շետտէտէ ըսուած բլուրի մը եզերքը զինուորական կէտի մը առջեւ: Այստեղ, 8-10 չեչէններ առաջարկած են հայերուն, որ Ռաս-ուլ-Այնի ճամբուն վրայ երկաթուղիի ճամբայ պիտի շինուի եւ իրենց 600 հատ կտրիճ երիտասարդ պէտք է որպէսզի երթան աշխատին: Ժողովուրդը շուարած կը մնայ, ոմանք կը նախընտրեն մերժել, ոմանք հաճոյ կ'ըլլան: Բաւական խորհելէ ետք, կ'որոշեն մերժել չեչէններուն առաջարկը եւ կռիւը կը սկսի չեչէններուն եւ հայերուն միջեւ: Հայերէն մի քանի կտրիճ երիտասարդներ ժողովուրդին կ'ըսեն, թէ ալ մեզի համար ապրելու յոյս չկայ, ուստի նախընտրելի է կռուիլ: Կը քաշեն վրաններուն ցիցերը եւ մի քանի չեչէններուն վրայ կը յարձակին 2 հատը վիրաւորելով: Զէքի փաշան հեռուն հեռադիտակը ձեռքին իր արբանեակներով կազմ պատրաստ կը սպասէր արդիւնքին: Երբ եղելութիւնը կը ստուգէ՝ հրաման կ'ըսե 200 ձիաւոր զինուորներուն եւ իր արբանեակներուն ու իր առաջնորդութեամբ ամէն կողմէն պաշարել կու տայ հայերը: Հրացանաձգութիւնը կը սկսի առտուընէ մինչեւ իրիկուն: Իրիկուան դէմ, լռութիւնը կը տիրէր, դիակներ արիւններու մէջ փռուած անապատին մէջ: Անխիղճ փաշան, մեռելներու քովը գալով այսպէս կ'ըսէր. «Գառնուկներս շատ կը ցաւիմ, որ ձեր գլխուն այս աղէտը պատահեցաւ: Հիմա Պոլսէն հեռագիր առի, որ ալ ջարդը պէտք է վերջ գտնէ, երանի թէ

123 «Թագաւորս շատ ապրի» (թուրքերեն): Սուլթանին հղված արևշատության մաղթանք, որը կրկնվում էր պաշտոնական հանդիսությունների ընթացքում և զանազան առիթներով (ծանոթագրությունը՝ Միհրան Մինասյանի):

124 Խումբ (անգլ. *party* բառից):

այս հրամանը առտուն գար, ամէնքդ ալ կ'ազատուէիք: Եթէ ձեր մէջ ողջ մնացողներ կան, թող ելլեն եւ այս ներումին արժանանան»: Այս խօսքերուն վրայ միամտաբար հաւատացող 10-15 մարդիկ, որոնք դիակներուն տակ պահուըտած էին, ոտքի կ'ելլեն: Արիւնարբու գազանը բոլորն ալ կը գնդակահարէ: Ասով եւս չի գոհանար, ձիաւորնե- րուն կը հրամայէ, մեռեալներուն վրայէն 3-4 անգամ կոխկրտելով անցնին, որպէսզի եթէ ողջ մնացողներ կան, բոլորն ալ ոչնչանան: Մի միայն չորս երիտասարդներ չհա- ւատալով փաշային խարդախ խօսքերուն, մեռելներուն տակ պահուըտած գիշերանց կը յաջողին փախչիլ Սուար՝ մեր քովը եւ եղելութիւնը պատմել: Այս խումբէն մի միայն չորս հոգի ազատուած էին:

Աղբյուրը՝ Տիգրան Ճէպէճեան, *Ապրուած օրեր հայասպանութենէն (Տէր Զօր, 1915)* (Հալէպ, 2001), 16-17:

Առտու մը մեր վրաններէն քիչ մը հեռու, երիտասարդ մը տեսայ, հազիւ քսանա- մեայ, բոլորովին մերկ. մօտեցայ ինձի. զիս ճանչցաւ, անունս տուաւ. ես ալ զինք ճան- չըցայ. Այնթապցի Յարութիւն Սըյգըտճեանն էր, զինուորականութեան փարթիով Րաս-իւլ-Այն գացողներէն: Ու պատմեց թէ ինչպէս 4 000 հոգի տարած են Շէտտատիէ ըսուած բլուրին մօտ զինուորական կայան մը եւ առաջարկած որ 500 երիտասարդներ Րաս-իւլ-Այն երթան երկաթուղիի շինութեան համար. թէ ինչպէս քանի մը քաջորդի- ներ ընդվզած են եւ կռիւ բռնուած խաբեբայ *չէչէն*ներու հետ. թէ ինչպէս վրաններու ցիցերը զէնք ըրած դիմած են ինքնապաշտպանութեան, ի վերջոյ պաշարուելով երկու հարիւրէ աւելի ձիաւոր *չէչէն*ներէ, նոյնինքն Զէքիի հրամանատարութեան տակ, եւ գն- դակահարուած համազարկային կրակով. թէ ինչպէս սրիկայ Զէքի շրջած է դիակներու մէջ ու ողջ պահուըտածները եւ վիրաւորները ոտքի կոխան ըրած ձիերու:

Օր մը յետոյ երեք երիտասարդներ եւս, դիակներու տակ մնալով ազատուածներ, եկան Սուվար եւ կրկնեցին նոյն պատմութիւնը: Չորս հազարէ միայն չորս հոգի էին վերապրողները...

Աղբյուրը՝ Տիգրան Ճէպէճեան, «Տէր Զօրի Սպանդը», *Հայ Անթէպ 6*, թիւ 2 (18) (1965), 15-16:

### 5. Նազարեթ Մուրադյանի վկայությունը

Մերադից (Մարատ) վերջին քարավանով գնացել եմ Սուվար: Երբ իմացել եմ մյուդիրի հետ բանակցությունների մասին, որոշել եմ փախչել, և մեր գալուց հետո երրորդ օրը ինձ դա հաջողվել է: Այնտեղ իմ կարճատև գտնվելու ընթացքում եկել էր 20 վիրավոր, որոնք նախորդ քարավանի մաս էին կազմում: Նրանցից մի քանիսը իմ հայրենի Զեյ- թուն քաղաքից էին: Այդ քարավանը՝ հիմնականում Մարաշի շրջակայքի բնակիչներ՝ ընդհանուր մոտ 15 000 մարդ, Սուվարից բերվել էր Շեդադիե: Քարավանին հետևել է Դեր էլ Զորի մութեսարիֆը՝ վրան խփելով նրանից մոտ մեկ ժամ հեռավորության վրա: Այնտեղից երեք ձիավոր ժանդարմի է ուղարկել՝ բանվորների հատուկ գումար-

տակ կազմավորելու և այդ նպատակով տղամարդկանց իրենց ընտանիքներից բաժանելու հրամանով: Տղամարդիկ պատասխանել են, որ իրենք բոլորը ցանկանում են հողային աշխատանքների մեկնել իրենց կանանց ու երեխաների հետ և հրաժարվել են բաժանվել միմյանցից: Երկու կողմերն էլ պնդել են իրենց պահանջները, և երբ ժանդարմները սկսել են մտրակներով ծեծել տղամարդկանց, տղամարդիկ սաստել են նրանց՝ ուժեղ ծեծելով և առանց զենքի հետ քշելով: Մի քանի ժամ անց երեք նոր ժանդարմներ են եկել մութեսարիֆի հրամանով, որ զենքերը պետք է անհապաղ վերադարձվեն, այլապես բոլորը մահվան կենթարկվեն: Ժողովուրդն արդեն կորցրել էր հույսը և, հավատալով, որ դեռ կարող է ինչ-որ կերպ պաշտպանվել, սուրհանդակների հետ է ուղարկել բացասական պատասխանով: Գիշերն անցել է: Հաջորդ առավոտ ժողովուրդը նշել է իր վերջին օրը. մարդիկ աղքատներին են բաժանել իրենց սննդի մնացորդները և մորթել լծկան անասունները ընդհանուր մատաղի ճաշի համար: Քահանաները պատարագ են մատուցել և հաղորդություն տվել: Կեսօրին 200 ժանդարմ՝ արաբների և չերքեզների ուղեկցությամբ, շրջապատել է ճամբարը: Սկսել են բոլոր կողմերից կրակել մարդկանց վրա: Սկզբում մարդիկ պաշտպանության չեն դիմել. շատերն ընկել են: Բայց երբ նրանք ավելի են մոտեցել, հայերը սկսել են օգտագործել ժանդարմներից խլած զենքը: Ժանդարմները նահանջել են, ապա նորից առաջ գնացել և հետ մղել հայերին: Հայերը իրար մոտ էին կանգած՝ թույլ տալով, որ փամփուշտների կարկուտը լցվի իրենց վրա: Ժանդարմները կողքից ճանապարհ են թողել դեպի գետ, և շատերն իրենց մահն են գտել ջրի մեջ, ոմանց էլ հաջողվել է գետը լողալով անցնել և փախուստի դիմել:

Աղբյուրը՝ *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, Edited by Wolfgang Gust (New York-Oxford: Berghahn Books, 2014), 676-677:

**6. Հարություն Գալայջյանի վկայությունը**

Դահիճներու զանազան խորամանկութիւնները, հնարքները եւ սպառնալիքները անզօր կը մնան այր մարդիկը կիներէն զատելու եւ ճամփայ շինել տալու ղրկելու: Երեք օր շարունակ մարդասպանները ամէն միջոցի կը դիմեն գաղթակայանի հայերը համոզել ջանալու, որպէսզի հնազանդին կառավարութեան կտրուկ հրամանին, բայց չեն յաջողիր եւ վերջնական պատասխանին կը սպասեն չորրորդ օրը, այլապէս բռնի ուժով զատելու համար էրիկ մարդիկը կիներէն, չաղա-չոճուխներէն:

Միեւնոյն երրորդ օրուան գիշերը, գաղթակայանի բոլոր երեւելի մեծերը, խելահասներն ու փորձառու մարդիկ, ազդեցիկ եւ աչքառու դէմքերը իրարու մօտիկ գալով ժողով կը գումարեն: Այդ ժողովին կը հրաւիրեն շատ մը մայրեր ու փորձառու տիկնայք փափկասունք եւ օրուայ ծանր ու դժնդակ կացութիւնը պարզելով բոլոր ներկաներուն կ'ուզեն յաջորդ օրը վերջնական պատասխանը տալ արիւնկզակ ու արիւնռուշտ դահճապետերուն: Մինչ այդ արի ու բարի հայ մայրերը ընդոստ ոտքի կը կանգնին եւ բարձրաղաղակ ու խիզախ կը յայտարարեն. «Մենք չենք ուզեր մեր ամուսիններէն, մեր սիրելիներէն բաժնուիլ եւ սպաննուիլ, անարգուիլ ու անպատուիլ. կամ բոլորս

միասին կը ջարդուինք կամ բոլորս միասին կ'ազատինք: Չէ՛, չէ՛նք ուզեր դահիճներու անարգ ու անպատիւ լուծին ենթարկուիլ»:

Այդպիսով խառն ժողովը կ'որոշէ մերժել կառավարական վերջին կտրուկ վերջնագրին, եւ կը ցրուին ամէն մէկը իր սիրելիներուն, իր հարազատներուն մօտ:

Չորրորդ օրը, առտուն կանուխ, դահճապետերը երեւնալէն առաջ, գաղթակայանին մէջէն կարգ մը յանդուգն եւ խիզախ կտրիճներ գաւազաններով, մահակներով եւ բիրերով զինուած անմիջապէս կը յարձակին իրենց մօտիկը պահակ եղող ժանտարմաններուն վրայ եւ լախտի ու գաւազանի հարուածներով անոնց գետին տապալելով իսկոյն անոնց զէնքերը կը գրաւեն եւ դիրք կը բռնեն զիրենք պաշարողներուն դիմաց: Գաղթակայանի ուրիշ մէկ մասին վրայ Փօնուզի Ալաճաճեան քաջ ու անուանի գերդաստանէն քանի մը աջագեղ կտրիճներ եւ մէկքանի հատ ալ հաճընցի խիզախ երիտասարդներ, նոյն սիստէմով քանի մը չերքէզներ գետին կը տապալեն եւ անոնց զէնքերը կողոպտելով անոնք ալ դիրք կը բռնեն, իրենց պաշարող դահիճներուն դիմացը եւ կը դիմեն ինքնապաշտպանութեան:

Արիւնածարաւ դահճապետերը այլեւս տեղեակ ըլլալով գաղթականներու ինքնապաշտպանութեան, ընդվզումի վճիռին՝ անմիջապէս հրաման կ'արձակեն յարձակիլ գաղթակայանին վրայ: Եւ հազարներով ու հազարաւորներով զինուած, անօթի ու ալան թալանի սպասող անկանոն ուժերը կը յարձակին գաղթականներու վրայ եւ անխնայ կը կոտորեն, կը սպանեն, կը ջարդեն ծեր թէ մանուկ, կին թէ նորածին եւ չեն ձգեր ոչ մէկը ողջ, որ ճողոպրի, ազատի:

Ահռելի ջարդը կը սկսի: Պաշարուողներէն դէպի Խապուր գետը նետուողները տեղն ու տեղը կը գնդակահարուին, դէպի անապատի խորերը փախչողները արաբական ձիաւորները կը հալածեն եւ իրենց կեռ թուրերով անոնց գլուխները կը հնձեն, միշտ հետապնդելով ուրիշ փախչող մը, ուրիշ ճողոպրող մը:

Աղբյուրը՝ Յարութիւն Գալայճեան, *Միլիոնէն մէկը: Ցեղասպանութեան Ականատես Զէյթունցի Պապանիի Մը Յուշերը* (Պէյրութ, 2018), 40-42:

### 7. Սամվել Սահակի վկայություն

Որքան կը յիշեմ, երկու օր յետոյ հասանք Սիւվար գաւառակը եւ մեր վրանները զարկինք այս անգամ Խապուրի (Խապուր գետ) եզերքը: Երբ հոն հասանք, արդէն շատշատեր «հայրենի օճախը վերադարձողներէն» մեզմէ առաջ իրենց վրանները զարկած էին: 7-8 օրուան ընթացքին արդէն 70-80 հազար հոգիներ.... Վրանաքաղաք մը դարձեր էր Սիւվարի անապատը, բոլորն ալ անշուշտ «վերադարձողներ»: Ո՞ւր արդեօք, դէպի... հող: Չէ՞ որ հող էինք եւ հող պիտի դառնայինք: Մեր առաջին ճամբորդութենէն տարբերութիւնը այս էր որ մեր արդի «պահապանները» Չէչէններ[125] էին, որոնցմէ

125 Չէչէնները չէրքէզանման են եւ իրենց քրտախառն բարբառ մըն է: Տէր Զօրի կուսակալն ալ Չէչէն էր, որ նախ քան կոտորածը բոլոր պաշտօնեաները եւ զինուորները Չէչէններով փոխարինեց: Լսածիս համաձայն, Զէյթունցիներուն ջարդին ինք անձամբ ներկայ գտնուած է, բայց դժբախտաբար, Զէյթունցիները զէնք չեն կրցած ձեռք անցընել եւ այդ ըմբոստութեան ծագումին անմիջապէս յաջողեր է կծիկը դնել:

շատերը աղճատ թուրքերէն մը կը խօսէին: Գիշերը մինչեւ ուշ ատեն արթուն էինք: Արդէն երեխաներու ճիչերը խառնուած մեզմէ ոչ հեռու գտնուող ջրհանին ճռինչին եւ մեր սարսափի նախազգացումին, կը վանէին մեր աչքերէն հանգստաբեր քունը: Ինչո՞ւ քնանալ, չէ որ հեռու չէր այն ժամը երբ յաւիտեան պիտի քնանայինք եւ պիտի արժանանայինք «ընդ արդարսն դասուելու»...

Եւ ահա զարհուրելի գիշերը: Այդ գիշեր ջրհանին ձայնը յանկարծ դադրեցաւ: Երբ առաւօտուն մեզմէ կ'երթան քանի մը հոգի հետաքրքրութեան համար, կը տեսնեն որ 3-4 դիակներ կառչած են ջրհանին մեծ անիւին, կարծես *վայրկեան մը լռութիւն* պարտադրելու համար: Ջրհանը ժամերէ ի վեր լուռ կանգ էր առած:....

Կը հանեն դիակները եւ կը տեսնեն զարհուրելին, անպատմելին,– յօշոտուած դիակներ: Մեր Սիվար եղած ժամանակ նոյն ճանապարհէն անցած էր Զէյթունցիներուն կարաւանը: Երբ կը հասին Պուէրա (բուն գողգոթան), կը հասկնան թէ պիտի խողխողուին, գիշերանց կը յարձակին ոստիկան-Չէչէններուն վրայ, կը խլեն անոնց հրացանները եւ կը սկսին կրակ տեղալ: Բայց քիչ յետոյ օգնական ուժեր հասնելով կը յաջողի բնաջնջել կարաւանը:

Այդ միեւնոյն օրը Զէյթունցիներէն վիրաւոր մը կը ճողոպրի սպանդանոցէն եւ կը հասնի Սիվար եւ կը պատմէ եղելութիւնը քանի մը հայերու: Դժբախտութիւնը հոն էր որ Չէչէնները անմիջապէս ձիաւոր կը ղրկեն Սիվար եւ հարիւրեակ մը Չէչէններ եւս կ'աւելցուին ոստիկանական ուժին վրայ: Բայց վրանակայանը տակն ու վրայ եղած էր, շատեր բարերար մթութեան կը սպասէին: Երբ մութը կոխեց, շատերը փախան: Այդ գիշեր մինչեւ լոյս հրացանաձգութիւնը շարունակուեցաւ: Ցարդ ոչ ոք գիտէ թէ հազարաւոր փախչողներէն քանի հոգի ազատեցան:

Աղբյուրը՝ Սամուէլ Սահակ, «Յուշեր Տէր Զօրի սպանդանոցէն», *Յառաջ օրաթերթ՝ ազգային, քաղաքական, գրական* (Փարիզ), 16 մարտ 1934, 2:

### 8. Չեչեն ջարդարար Մահմուդ բեկի պատմածները[126]

.... Րէս-իւլ-Այնի մեր ցեղակից Գայմագամը մասնաւորապէս զիս կանչել տուաւ եւ ըսաւ թէ ժամանակն է գործի սկսելու, ահաւասիկ ասպարէզը բաց է, պաշտօնապէս հրահանգ ընդունած եմ կեավուրները բնաջինջ ընելու, վստահելի անձ մըն ես, հաւաքէ քաջերդ, ահաւասիկ քեզի նամակ մը Տէր Զօրի Մութասարըֆին ուղղեալ, հրամաններն անկից կը ստանաս: .... Անմիջապէս պատրաստուեցայ երկու հարիւր հեծեալներով ու յաջորդ օրը ճամբայ ինկայ Տէր Զօր: .... Կեավուրները հետապնդուիլ սկսան: Առաջին անգամ ըլլալով՝ սկսանք քաղաքէն դուրս վրաններու տակ ապրող կեավուրները ջարդել: Ոստիկանութիւնը տուաւ ինձի ամէն լիազօրութիւն, կրնայի ընել ամէն ինչ: Անմիջապէս կամուրջէն անցայ, պաշարեցի տասը հազարանոց վրաններու հայութիւնը իմ 200 հեծեալներով: Կեավուրները կրնային զէնք ունենալ: Անմիջապէս խուզարկութեան սկսանք: Խուզարկութիւնը նպատակ ունէր զէնք, դրամ, ամէն տեսակ ապրանք, գեղանի կիներ յափշտակել:

126 Գրի է առել Նշան Մաթոսյանը 1918 թ. մարտի 18-ին:

Խուզարկութեան սկսանք, ատրճանակներով կրակ բացին մեր վրայ: Եղբօրորդիս, Ապտ էլ Քէրիմ եւ իմ ամենահաւատարիմ ծառաներէս 4-5ը զարնուեցան: Այս պատճառաւ էր որ ոխերիմ թշնամինին ըլլալ երդուեցայ այս կեավուրներուն: Զէնքի դիմեցինք ու անոնց վրայ կրակ բացինք չորս կողմէ: Հոն ներկայացան Միւթասարըֆը, ոստիկանութեան պետը եւ ժանտարմներ, որոնք մեզի օգնեցին: Աղաղակներ, վայնասուններ: Չորս ժամ անընդհատ կրակէ վերջ սուրերով, թուրերով իջանք: Այդքան հարստութիւն, այդքան շքեղութիւն երբեք չէինք տեսած: Ծերեր, երիտասարդներ, կիներ, մանուկներ ամէնքը մեր ոտքին տակն էին, մին կ'աղաղակէր, մին կու լար, մին հոգեվարքի մէջ, միւսը արդէն իսկ անշնչացած: Այս աշխատանքը մեզի շատ սուղ արժեց, որովհետեւ դժուարին գործ էր մէկ առ մէկ կողոպտել, խուզարկել եւ գիշերուան մութին մէջ գեղանի կիներ փնտռել: Բայց ամէն ինչ կատարեցինք յաջողութեամբ: Կէս գիշերը անցեր էր, երբ քաշուեցանք:...

Աղբյուրը՝ *Տէր Զօր: Հեղինակ՝ Աղէպէն վերապրողներ* (Փարիզ, տպ. Պ. Էլէկեան, 1955), 230-232:

**Հավելված Բ. Զեյթունցիների զինված դիմադրության մասին հիմնական տեղեկությունները՝ ըստ աղբյուրների**

| Դրվագ | Տիգրան Մակարյան | Գարեգին Հովհաննեսյան | Արամ Անտոնյան | Տիգրան Ճեպեճյան | Նազարեթ Մուրադյան | Հարություն Գալայջյան | Սամվել Սահակ | Մահմուդ բեկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դեր Զորից մեկնած առաջին քարավանի աքսորյալների թիվը | Տասնյակ հազարներ | –[127] | 20 000 | 4 000 | 15 000 | 30 000 | – | – |
| Դիմադրության նախաձեռնողներն ու հիմնական մասնակիցները | Զեյթունցիներ | Զեյթունցիներ | Զեյթունցիներ | – | Զեյթունցիներ | Զեյթունցիներ | Զեյթունցիներ | – |
| Դիմադրության վայրը | Շեդադիե | Խասըրճա | Սուվար | Շեդադիե | Շեդադիե | Շեդադիե | Բուսեյրա | Դեր Զորի շրջակայք |
| Դիմադրության պատճառը | Աշխատանքային գումարտակներում տղամարդկանց հավաքագրումը | – | – | Աշխատանքային գումարտակներում տղամարդկանց հավաքագրումը | Աշխատանքային գումարտակներում տղամարդկանց հավաքագրումը | Աշխատանքային գումարտակներում տղամարդկանց հավաքագրումը | – | – |
| Դիմադրության ճնշմանը գավառապետ Սալիհ Զեքիի մասնակցությունը | – | – | Հիշատակվում է: | Հիշատակվում է: | Հիշատակվում է: | – | Հիշատակվում է: | Հիշատակվում է: |

127 Աղբյուրը տեղեկություն չի հաղորդում:

| Դրվագ | Տիգրան Մակարյան | Գարեգին Հովհաննեսյան | Արամ Անտոնյան | Տիգրան Ճեպեճյան | Նազարեթ Մուրադյան | Հարություն Գալայջյան | Սամվել Սաhակ | Մաhմուդ բեկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Զեյթունցիների ունեցած հրազենի ծագումը | Բերվել է Զեյթունից, խլվել է ժանդարմներից: | Խլվել է ժանդարմներից: | Խլվել է ժանդարմներից: | – | Խլվել է ժանդարմներից: | Խլվել է ժանդարմներից: | Խլվել է ժանդարմներից: | Դիմադրողներն ունեցել են ատրճանակներ, որոնց ծագման մասին աղբյուրը տեղեկություն չի հաղորդում: |
| Դիմադրության տևողությունը | 14 օր | – | – | Առնվազն 2 օր | Առնվազն 2 օր | Առնվազն 4 օր | – | – |
| Դիմադրության ճնշմանը մասնակցած զինվորական ուժերի թիվը | – | «Հարիւրաւոր զինեալներ» | – | 200 հեծելազորային ժանդարմներ, նաև օգնական զորաջոկատներ | 200 հեծելազորային ժանդարմներ, նաև արաբների ու չերքեզների օգնական զորաջոկատներ | «Հազարներով և հազարաւորներով զինուած, անօթի ու ալան թալանի սպասող անկանոն ուժեր» | – | 200 հեծելազորայիններ |
| Ջարդարարների կորուստները[128] | 25 զոհ | 5-6 զոհ և/կամ վիրավոր[129] | Առնվազն 3 զոհ | Առնվազն 2 վիրավոր | Առնվազն 3 զոհ և/կամ վիրավոր | – | – | 5-6 զոհ |
| Հայերի կորուստները[130] | 3-4 հազարից ոչ պակաս | – | 5 000 | 4 000 | – | – | – | – |

128 Նախքան վերջին մարտը, որի ընթացքում սպանված ջարդարարների թվի մասին մեզ հասանելի աղբյուրներում հիշատակում չկա:

129 Աղբյուրը նշում է խլված զենքի քանակը. ենթադրում ենք, որ ջարդարարների կորուստները պետք է համապատասխանեն այդ թվին:

130 Դիմադրությունից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո բոլոր սպանված տղամարդկանց թիվը:

## ARMED RESISTANCE ATTEMPT OF DEPORTED ARMENIANS FROM ZEITUN IN DER ZOR DESERT

*Robert A. Tatoyan*
*Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia*

The article covers the history of an exceptional episode of self-defense of Armenians during the second stage of the Armenian Genocide, the armed resistance of Armenians from Zeitun in one of the caravans of Armenian exiles driven to the desert after the liquidation of the Der Zor concentration camp in the summer of 1916.

The sources of the work are the testimonies of survivors, who witnessed the events, especially the unpublished memoirs of Tigran Makaryan kept in the scientific funds of the Armenian Genocide Museum-Institute.

According to sources:

1. The resistance took place in the first half of August 1916 in the Shedadieh concentration camp.
2. The immediate cause of the resistance was the attempt to recruit men into labor battalions.
3. The resistance lasted for two or three days was cruelly suppressed.
4. The number of Armenian men who directly participated in the resistance was around 100-120, of which about a third had firearms.
5. 200 cavalry gendarmes, as well as auxiliary bands of Arabs and Circassians joined the suppression of resistance. At least 8-10 gendarmes were killed during fight.
6. Der Zor governor Salih Zeki personally directed the suppression of the resistance.

**Key words:** Armenian genocide, Der Zor, Shedadieh, Zeitun, resistance, deportation, concentration camp.

## ПОПЫТКА ВООРУЖЕННОГО СОПРОТИВЛЕНИЯ ДЕПОРТИРОВАННЫХ АРМЯН ИЗ ЗЕЙТУНА В ПУСТЫНЕ ДЕР ЗОР

*Роберт А. Татоян*
*Фонд «Музей-институт Геноцида армян», Армения*

В статье освещена история исключительного эпизода самообороны армян во время второго этапа геноцида – вооруженного сопротивления армян Зейтуна в одном из караванов армянских депортированных, согнанных в пустыню после ликвидации концентрационнго лагеря в Дер Зоре летом 1916 года.

Источниками работы являются свидетельства выживших, которые были свидетелями событий, в частности неопубликованные воспоминания Тиграна Макаряна, хранящиеся в научных фондах Музея-института Геноцида армян.

По данным источников:

1. Сопротивление произошло в первой половине августа 1916 года в концентрационном лагере у Шедадие.

2. Непосредственной причиной сопротивления была попытка насильственного рекрутирования мужчин в трудовые батальоны.
3. Сопротивление, продолжавшееся два-три дня, было жестоко подавлено.
4. Число армянских мужчин, непосредственно участвовавших в сопротивлении, составляло около 100-120 человек, из которых около трети имели огнестрельное оружие.
5. К подавлению сопротивления присоединились 200 кавалерийских жандармов, а также вспомогательные банды арабов и черкесов. В ходе боя было убито по меньшей мере 8-10 жандармов.
6. Губернатор Дер Зора Салих Зеки лично руководил подавлением сопротивления.

**Ключевые слова:** Геноцид армян, Дер Зор, Шедадия, Зейтун, сопротивление, депортация, концентрационный лагерь.

## REFERENCES

*1915: Աղէտ եւ վերածնունդ: Հեղինակ՝ Աղէտքէն վերապրողներ* [1915. The Calamity and Revivial. Authors – Survivors from Calamity]. Paris, 1952;

*Տէր Զօր: Հեղինակ՝ Աղէտքէն վերապրողներ* [Der Zor. Authors – Surviviors from Calamity]. Paris, 1955;

Aghazarian, Mihran. *Աքսորականի յուշեր* [The Memoirs of Exilee]. Adana, 1919;

Akuni, Sepuh. *Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը* [The History of the Massacre of Million Armenians]. Constantinople, 1920;

Andonian, Aram. *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալէաթ փաշա* [The Great Crime. The Recent Armenian Massacres and Taleat Pasha]. Boston, 1921;

Avakyan, Arsen. «Չերքեզական ջոկատների մասնակցությունը 1915 թ. հայերի ցեղասպանությանը» [The Participation of Circassian Bands in the Armenian Genocide of 1915], *The Issues of the History and Historiography of the Armenian Genocide* 4 (2001), 29-35;

Chepechian, Tigran. *Ապրուած օրեր հայասպանութենէն (Տէր Զօր, 1915)* [Days Lived from the Armenian Killings (Der Zor, 1915 )]. Aleppo, 2001;

Chepechian, Tigran. «Տէր Զօրի Սպանդը» [Der Zor Slaughter]. *Hay Antep 6*, № 2 (18) (1965), 11-18;

Galaychian, Harutyun. *Միլիոնէն Մէկը: Ցեղասպանութեան Ականատես Զէյթունցի Պատանիի Մը Յուշերը* [One Among the Million. The Memoirs of Young Man from Zeitun, the Witness of the Genocide]. Beirut, 2018;

Galustian, Grigor. *Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն* [Marash or Germanik and Heroic Zeitun]. 2nd Edition, New York, 1988;

Kaiser, Hilmar. *Դեյր Էզ-Զորի խաչուղիներում: Մահ, վերապրում և ընդհատակյա մարդասիրական դիմադրություն Հալեպում 1915-1917 թթ.* [In the Crossroads of Deir ez-Zor. Death, Survivial and Underground Humanitarian Resistance in Aleppo in 1915-1917]. Yerevan, 2015;

Minassian, Mihran. «Արամ Անտոնեան եւ Հայոց ցեղասպանութեան վաւերագրումի իր հաւաքչական աշխատանքը Հալէպի մէջ», *Սիրիահայերի հիմնահարցեր. պատմու-*

*թյուն և արդիականություն: Գիտաժողովի նյութերի ժողովածու* ["Aram Antonyan and His Work on Collection of Documents on the Armenian Genocide in Aleppo," in *Problems of Syrian Armenians. History and Modernity. Conference Proceedings*]. Yerevan, 2021, 139-158;

Minassian, Mihran. «Արամ Անտոնեանի անտիպ գրառումները Տէր Զօրի կոտորածներուն մասին» [Aram Antonian's Unpublished Records on Massacres in Der Zor], *Haigazian Armenological Review, volume 35,* 685-764;

Poghosyan, Haykaz. *Զեյթունի պատմությունը 1409-1921 թթ.* [The History of Zeitun 1409–1921]. Yerevan, 1969;

Sahak, Samuel. «Յուշեր Տէր Զօրի սպանդանոցէն» [Memoirs from Der Zor Slaughter]. *Haratch* (Paris), 16 March 1934;

Tatoyan, Robert. *Կիլիկիահայության թիվը Հայոց ցեղասպանության նախօրյակին* [The Number of Cilician Armenians on the Eve of the Armenian Genocide]. Yerevan: AGMI, 2021;

Vardan, Levon. *Ժամանակագրութիւն հայկական պաանիինգի* [Chronology of the Armenian 1915]. Beirut, 1975.

## Հեղինակի մասին
## About the Author
## Об авторе

**Ռոբերտ Ա. Թաթոյան,** պատմական գիտությունների թեկնածու, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության վիճակագրություն և ժողովրդագրություն, արևմտահայ հասարակական, կրթական, մշակութային և կրոնական կյանք:

Էլ. փոստի հասցե՝ r.tatoyan@genocide-museum.am

**Robert A. Tatoyan**, PhD in History, Senior Researcher at the Department of the Armenian Genocide Source Studies, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields: Western Armenian population statistics and demography on the eve of the Armenian Genocide, Western Armenian public, educational, cultural and religious life.

E-mail: r.tatoyan@genocide-museum.am

**Роберт А. Татоян,** кандидат исторических наук, старший научный сотрудник Отдела источниковедческих исследований Геноцида армян Фонда "Музей-институт Геноцида армян."

Область исследований – статистика и демография западных армян накануне геноцида, общественная, образовательная, культурная и религиозная жизнь западных армян.

Эл. почта: r.tatoyan@genocide-museum.am

https://doi.org/10.51442/jgs.0052

# ՀԱՅ ԿԻՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ. ԴՐՎԱԳՆԵՐ

*Վերժինե Գ. Սվազլյան*
*ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայաստան*

Տակավին 1955 թվականից ի վեր, ինչպես Հայաստանի տարբեր շրջաններում, նույնպես և Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Հունաստան, Ֆրանսիա, Իտալիա, Կանադա, ԱՄՆ և Թուրքիա կատարած անձնական կամ գիտաժողովային կարճատև ուղևորությունների ընթացքում գրի եմ առել, ձայնագրել, տեսագրել և ուսումնասիրել Հայոց ցեղասպանությունից վերապրող ականատեսների, այդ թվում նաև կին ականատեսների հաղորդած հուշ-վկայություններն ու երգ-վկայությունները, որոնք հուշերի և պատմական զրույցների հետ միասին նույնպես ժողովրդի պատմական հիշողության անբաժան մասն են կազմում:

**Բանալի բառեր՝** Հայոց ցեղասպանություն, Արևմտյան Հայաստան, Կիլիկիա, ականատես վերապրող, հայ կանայք, հուշ-վկայություն, պատմական երգ-վկայություն

Հոդվածը ներկայացվել է՝ 14.02.2024: Ընդունվել է տպագրության 24.05.2024:
The article was submitted on 14.02.2024 and accepted for publication on 24.05.2024.
Статья поступила 14.02.2024 и была принята к публикации 24.05.2024.

**Ինչպես հղել՝** Վերժինե Գ. Սվազլյան, «Հայ կինը ցեղասպանության և ինքնապաշտպանական հերոսամարտերի ընթացքում. դրվագներ», *Ցեղասպանագիտական հանդես* 12, no. 1 (2024), 49-62:
**How to cite:** Verjine G. Svazlian, “The Tragic and Heroic Events of the Armenian Genocide According to the Testimonies of the Women Eyewitness Survivors,” *Ts'eghaspanagitakan handes* 12, no. 1 (2024): 49-62.
**Как ссылаться:** Вержине Г. Свазлян, “Армянская женщина во время геноцида и героических самооборонительных сражениях,” *Цехаспанагитакан андес* 12, no. 1 (2024): 49-62.

## Ներածություն

Հայոց ցեղասպանության վերաբերյալ պատմական բնույթի երգերը (հայերեն և թուրքալեզու) իրենց թեմատիկ ինքնատիպությամբ ու գաղափարական բովանդակությամբ ոչ միայն նորույթ են հայ բանագիտության և ցեղասպանագիտության բնագավառում, այլև դրանց շնորհիվ նորովի է ընկալվում պատմական տվյալ ժամանակաշրջանը՝ իր բնորոշ կողմերով: Հետևաբար, հորինվելով հայ ժողովրդի արևմտահայ հատվածին վիճակված պատմական յուրահատուկ իրադարձությունների անմիջական տպավորությունների ներքո, այդ կարգի ժողովրդական երգերը ևս հագեցած են պատմականությամբ և ունեն հավաստի վավերագրերի արժեք:

## Ականատես վերապրող հայ կանանց հաղորդած ողբերգական երգերը

Պատմական երգերը հորինողները գերազանցապես եղել են հայ կանայք: Նրանք իրենց զավակներին ներարկել են լինել քաջ և անողոք թշնամու նկատմամբ: Զեյթունցի հայ մայրերն իրենց բարբառով օրորոցայիններ են երգել՝ դաստիարակելով նոր

սերունդներին: Զեյթունցի ականատես վերապրող *Գայանե Ապուրյանը* (ծնվ. 1909 թ.) իրենց բարբառով հաղորդել է հետևյալ օրորոցայինը.

*«Բօլուգս վօղը գդրաջ մը գունա,*
*Կիդէնը փռէ լէաշը դուշմունա,*
*Այծօթ աբրջօն թիֆօնգը բէջը*
*Դալմըշ բիդ իննա դէօգիւշան մէչը:*
*Օ՛, օ́, օ́, օ́, բօլո́ւգս, օ́»:*

«Որդիս վաղը կդառնա կտրիճ,
Թշնամու դիակը կփռե գետնին,
Արծաթ օղակով հրացանն ուսին
Ինքնամոռաց նա պիտի կռվի:
Օ՛, օ́, օ́, օ́, որդի́ս, օ́»[1]:

Համազգային աղետի հոգեբանական ազդեցությունը յուրովի է ընկալվել յուրաքանչյուր կնոջ կամ աղջկա կողմից: Այդ մղձավանջային տպավորություններն այնքան զորեղ ու խորն են եղել, որ հաճախ նաև բանաստեղծական ձև են ստացել, ինչպես մշեցի վերապրող *Շողեր Տոնոյանի* (ծնվ. 1901 թ.) հյուսած ողբը, որը հեղինակը հաղորդել է արցունքներով և հառաչանքներով.

«…Գիշեր ու զոր լաց ու ողբ եմ ես լսում,
Չունիմ հանգիստ, չունիմ դադար, չունիմ քուն,
Աչքս փակում՝ մեռելներ եմ միշտ տեսնում,
Կորցրեցի ազգ, բարեկամ, հող ու տուն…»[2]:

Ի բնե հուզական և զգացմունքային կանայք անմիջականորեն իրենց վտիտ ուսերին են կրել հայերի տեղահանության, աքսորի և կոտորածների ամբողջ տառապանքների ծանրությունը: Ուստի նրանք հանգամանորեն և պատկերավոր կերպով են նկարագրել իրենց աչքերով տեսածներն ու իրենց հոգու խորքում զգացածները:

Սուլթան Համիդի իշխանության տապալումից և 1908 թ. Սահմանադրության ընդունումից հետո, կառավարության գլուխն անցած երիտթուրք ղեկավարները, որդեգրելով Սուլթան Համիդի ջարդարար քաղաքականությունը և դավանելով պանթուրքական ու պանիսլամական գաղափարախոսությունը, ձգտում էին ոչ միայն պահպանել Օսմանյան կայսրությունը, այլև բռնությամբ ոչնչացնել կամ ձուլել, թուրքացնել հայերին և մյուս հպատակ ժողովուրդներին, ստեղծել համաթուրանական տերություն Միջերկրականից մինչև Արալյան ծով:

Պատմաքաղաքական այդ հանգամանքներում է կազմակերպվել Ադանայի կոտորածը 1909 թ.: Երեք օրերի ընթացքում ավերվում և հրկիզվում են բազմաթիվ հայկական քաղաքներ ու գյուղեր: Նահատակվում է շուրջ 30.000 անմեղ հայ: Իսկ Մուսա լեռը, Դյորտյոլը, Հաճընը, Սիսը, Զեյթունը, Շեյխ Մուրադը, Ֆընտըճագը և մի շարք այլ բնակավայրեր, իրենց հերոսական ինքնապաշտպանությամբ, կասեցնում են տասնյակ հազարավոր թուրքերի հարձակումը և փրկվում են ջարդերից:

Ըստ էության, այդ Մեծ եղեռնի սկիզբն էր, երբ երիտթուրքերը տենդորեն նախա-

---

1 Վերժինե Սվազլյան, *Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը* (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1994), 117:

2 Վերժինե Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ* (Երևան, «Գիտություն» հրատ., 2011) (այսուհետև՝ Սվազլյան – Սվ. 2011, Վկայություն – Վկ.), Սվ. 2011, Վկ. 437, էջ 583:

պատրաստվում էին հիմնովին բնաջնջել հայ ժողովրդին՝ սպասելով հարմար առիթի: Այդ առիթն ստեղծվեց, երբ բռնկվեց Առաջին աշխարհամարտը:

1915 թ. փետրվարին «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն ստեղծում է հատուկ հանձնաժողով՝ «Երեքի գործադիր կոմիտե» (Բեհաեդդին Շաքիր, Դոկտ. Նազըմ, Միդհաթ Շյուքրի) Թուրքիայի հայերի տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու համար:

Թուրքիայում ապրող քրիստոնյա ազգերի, այդ թվում նաև հայերի համար մեծագույն չարիք էր դարձել ընդհանուր զորահավաքը (*Seferberlik* - թուրք.): 18-45 տարեկան հայ տղամարդկանց, զորակոչի անվան տակ, ներգրավում էին աշխատանքային գումարտակների (*Amelé tabour* - թուրք.) մեջ և, ըստ ռազմական նախարար Էնվեր փաշայի հատուկ հրահանգի, աչքից հեռու, ծածուկ վայրերում՝ սպանում:

Այդ մասին է վկայել թոքաթցի վերապրող *Աննիկ Մարիկյանի* (ծնվ. 1892 թ.) երգած երգերը, որոնք մեզ է հաղորդել նրա հարսը՝ *Մարի Երկաթը* (ծնվ. 1910 թ., Աղաբազար).

«Ձենքը ձեռքս չտվին, Ամելե թաբուր գրեցին,
Թոքաթի Եաթմիշ գյուղը չորս օրեն կարճ էր,
Եաթմիշի քարերը կոտրելու խարճ էր...
...Կերթամ, կերթամ, զինվոր ես կերթամ,
Քար կոտրելու ես կերթամ»[3]:

Իսկ Ամելե թաբուրում աշխատողների վախճանը նախօրոք որոշված էր՝ մահ.

«Զինվորներին Բալու տարին,
Մայրեր-քույրեր նստան լացին,
Անտեղը շատ փոսեր փորեցին,
Անկե վերջն ալ մեջը թաղվեցի՜ն»[4]:

Արցունքներով վերհիշել է բալուցի *Հազարխան Թորոսյանը* (ծնվ. 1902 թ.):

Թուրքական զորահավաքին հաջորդել է զինահավաքը, որն ուղեկցվել է համատարած շուրջկալներով: Այդ ընթացքում «զենք» հավաքելու պատրվակի տակ թուրք ոստիկաններն ավերել են հայերի տները, կողոպտել նրանց ունեցվածքը, ձերբակալել, սպանել շատերին:

Զորահավաքին ու զինահավաքին հաջորդում է հարյուրավոր հայ մտավորականների ձերբակալությունը, որպեսզի հայ ժողովուրդը զրկվի ոչ միայն իր ռազմունակ ուժից, այլև՝ ղեկավար մտքից:

Ամենուրեք փակվում են հայկական դպրոցներն ու վարժարանները:

Հայկական կրթական օջախների հետ ավերվում են նաև հայկական եկեղեցիները:

---

3 Սվ. 2011, Վկ. 390, էջ 572:

4 Սվ. 2011, Վկ. 391, էջ 572:

Վանի շրջակա գյուղերում թուրքերը հասցրել էին տեղում բնաջնջել հազարավոր հայերի: Ուստի, ինչպես Վանում, Շատախում, Մուշում, Սասունում, Ցողատում, Շապին-Գարահիսարում և այլ վայրերում հայերը դիմում են ինքնապաշտպանության: Այդ է վկայում նաև ժողովրդական երգը, որը հաղորդել է *Միլվա Բյուզանդյանը* (ծնվ. 1908 թ., Վան).

«Վան փոքրիկ քաղաք գավառակներով,
Լցվան դիակներ հարյուր հազարով,
Ներկվեցավ դաշտը կարմիր արյունով,
Ձայն տվին ամպեր, երկինք ու աստղեր,
Այնպես կգոռան ու կիրամայեն,
Որ Եվրոպան և Ամերիկան լսեն»[5]:

Սակայն ո՛չ Եվրոպան և ո՛չ Ամերիկան չմիջամտեցին, միայն հայ կամավորներն ու ռուսական բանակի զինվորներն էին սատար կանգնում անօգնական ժողովրդին:

1915 թ. մայիսին սկսվում են զանգվածային ձերբակալություններն ու սպանությունները: Թուրքերով և չերքեզներով շրջապատված հայության վիճակն օրեցօր ծանրանում է: 1915 թ. հունիսի 2-ին բանտից ազատված ավազակների խուժանը թուրք ոստիկանների հետ հարձակվում է Շապին-Գարահիսարի շուկայի վրա, և սկսվում է կողոպուտը, իսկ հայ խանութպաններին ձեռքերը կապկպած տանում են բանտ:

1915 թ. հունիսին շապինգարահիսարցիները գործի են անցնում՝ քանդում են փողոցների սալահատակները և պատնեշներ են բարձրացնում, տղամարդիկ դիրքեր են կառուցում, ապա կանայք տոպրակներ են կարում, որոնց մեջ երեխաները ավազ են լցնում՝ պատսպարվելու համար: Հայկական որոշ տներում մարտկոցներ են տեղադրում: Նախահարձակ թուրք հրոսակախմբերին հայերն արժանի հակահարված են տալիս:

Հաջորդ օրը թուրքական թնդանոթների ռմբակոծումից հրդեհվում է հայկական Պարտեզ թաղամասը և ավերում շուրջ 3 հազար փայտաշեն տներ: Անօթևան մնացած կանայք և երեխաները՝ շուրջ 5.062 հոգի, ստիպված նահանջում են մոտակա բարձունքին կառուցված հնամենի բերդը: Թուրքերը շրջապատում են բերդը: Սկսվում է երկողմ հրաձգություն: Շուտով թուրքերը, համալրում ստանալով Սեբաստիայից, գերմանական սպաների ուղեկցությամբ սկսում են ռմբակոծել բերդը:

Հունիսի 23-ին թնդանոթների անընդմեջ համազարկերով, թուրքերը գրավում են Բերդի դարպասը: Երկու հայ երիտասարդ պաշտպաններ, կենաց-մահու պայքար են մղում 70 թուրք զինվորների դեմ, որոնց հաջողվել էր, ժայռի վրա մագլցելով հասնել բերդի դարպասին: Դրությունը ճակատագրական էր, անհրաժեշտ էր մի ռումբ հասցնել բերդի դարպասի պաշտպաններին: Հանկարծ 14-ամյա Հմայակ Թնեքելյանը խաչակնքվում է և, վերնազգեստը հանելով, մեջն է փաթաթում վտանգավոր ռումբը և վազում դեպի դարպասը, բայց մոտակա քարանձավի առաջ փոքրիկ հերոսն արյունլվա ընկնում է գնդակների տարափի տակ: Քարայրի միջից կանացի մի ձեռք զգուշորեն

5 Սվ. 2011, Վկ. 628, էջ 619:

վերցնում է ռումբը և շպրտում թուրքերի վրա, որոնք սպանվում են: Բայց բերդի ներսում կուտակված դիակների նեխումից արդեն համաճարակ էր սկսվել: Այդ անելանելի վիճակում նրանք որոշում են կովողների գիշերային հարձակումով ճեղքել թշնամու պաշարման օղակը, դուրս գալ հարևան շրջանները բերդում գտնվողներին փրկելու հույսով: Բերդում մնացած հայ կանանցից շատերը թշնամուն չհանձնվելու համար թույն են խմում, իսկ մյուսները՝ նետվում են անդնդախոր ձորը, որպեսզի փրկեն հայ կնոջ պատիվը:

Այդ օրերին շապինգարահիսարցի մայրերը հյուսել են տխուր, բայց խրոխտ ժողովրդական երգը.

> «Դա շապիկն է այն քաջ մարդուն, բալա ջա՜ն,
> Որ քեզի հայր էր կոչվում, օրո՜ր, օրո՜ր, բալա ջա՜ն,
> Դե մեծացի՜ր, շուտ բոյ քաշի՜ր, բալա ջա՜ն,
> Վատի արյուն ծծել սորվիր, օրո՜ր, օրո՜ր, բալա ջա՜ն»[6]:

Եվ երբ ռուսական զորքերը նահանջում են, ստիպված նրանց ետևից Արևելահայաստան են գաղթում նաև Վանի, Սասունի, Շատախի, Շապին-Գարահիսարի, Մուշի, Բիթլիսի, Ալաշկերտի, Բայազետի, Բաբերդի, Էրզրումի և այլ բնակավայրերի հայերը: Նրանք արցունքներով, բայց ճարահատված թողնում են իրենց Երկիրը՝ իրենց հազարամյա պատմական բնօրրանը, ու, մղկտալով, ընկնում են գաղթի ճամփան: Այդ աննկարագրելի ազգային մեծ վիշտն իր հորինած եղերերգի մեջ է խտացրել մշեցի վերապրող օժտված *Շողեր Տոնոյանը* (ծնվ. 1901 թ.).

> «Անտեր թողինք Մշո անուշ դաշտ-դուրան,
> Սուրբ օթևան, տուն ու տանիք ու վաթան,
> Մատուռ ու վանք, գիրք ու կանոն, Ավետրան,
> Մնաց անտեր, մնաց՝ ընկավ շան բերան»[7]:

Գաղթի ճամփան իսկական ողբերգություն էր, պատմել են կին ականատեսները: Հատկապես Բանդիմահու կամրջի մոտ, որտեղ հոսում էր Բերկրիի փրփրադեզ գետը: Այնտեղ շատերն են զոհվել: Գաղթի այդ ահավոր տպավորությունների անմիջական ազդեցության տակ է հորինվել ժողովրդական հետևյալ պատկերավոր երգը, որը հյուսել է բանաստեղծական շնորհքով օժտված *Վարսենիկ Աբրահամյանը* (ծնվ. 1905 թ., Վան).

> «Բերկրու Սև սարից թուրքը իջավ ցած,
> Հազար-հազար դիակներ փռված.
> Վերան ըլնես դու, Բերկրու անխիղճ գետ,
> Հազար-հազարով արյուն խմող գետ»[8]

6 *Յուշամատեան Մեծ եղեռնի*, խմբ. Գ. Ահարոնեան (Պէյրութ, 1965), 780:

7 Սվ. 2011, Վկ. 628, էջ 630:

8 Սվ. 2011, Վկ. 438, էջ 584:

Ճանապարհին մարդկային անհաշիվ զոհեր տալով՝ ունեզրկված, ուժասպառ, թուրք և քուրդ ջարդարարների կրակոցներից հազիվ ճողոպրելով, ճամփին անթաղ մեռելներ թողնելով, փոշու ամպերի միջով առաջ էր շարժվում արևմտահայ գաղթականների անվերջանալի մարդկային հեղեղը, որի սկիզբը, հայ կամավորների և ռուսական բանակի զինվորների օգնությամբ, արդեն Արաքս գետն անցնելով, հասել էր Ս. Էջմիածին և ծվարել վանքի պատերի տակ, իսկ մյուս ծայրը՝ դեռ Արևմտյան Հայաստանում էր…

Ահավոր մղձավանջ ապրեց նաև Կիլիկիայի հայությունը: 1915 թ. գարնանից սկսվում է Կիլիկիայի հայության բռնագաղթն ու կոտորածը: Մեկը մյուսի հետևից դատարկվում է Մարաշը, Այնթապը, Հաճընը, Անտիոքը, Իսկենդերունը, Քեսաբը և այլ հայաբնակ վայրեր:

Տարագրության, աքսորի ճամփաներին ոստիկաններն ու զինվորական համազգեստ հագած բանտերից դուրս բերված ոճրագործ մարդասպանները կողոպտում, թալանում էին բոլորին, առևանգում, պատվազրկում կանանց ու աղջիկներին:

Հայերի բնաջնջումն իրականացվում էր և՛ տեղերում և թե՛ աքսորավայրերում՝ Միջագետքի անծայրածիր անապատներում, հատկապես Ռաքքայում, Հավրանում, Ռաս-ուլ-Այնում, Մեսքենեում, Սուրուճում, Դեյր էլ Զորում և այլուր:

1956 թ. Երևանի Վարդաշեն թաղամասում ականատես-վկա վերապրող *Եղիաբեթ Քալաշյանը* (ծնվ. 1888 թ., Մուսա լեռ) մեզ պատմել է.

> «Արաբստանի անապատում մեր եղած ժամանակ կենդանիների պես էինք՝ ո՛չ հագուստ, ո՛չ ապրուստ, ո՛չ լվացվել, ո՛չ խմել…: Բնական պետքի համար անգամ ժանդարմը գլխուղ կայնած կըլլար. ո՛չ կին կճանչնային, ո՛չ աղջիկ, ո՛չ նամուս…: Կերակու՞ր, ի՞նչ կերակուր. խո՛տ էինք հավաքում, անասունների պես խո՛տ էինք արածում: Աղ գտնվեր նէ՝ աղեկ. կթաթխեինք աղին. ավելի համով կըլլար: Մեկ-մեկ հեռուեն արաբներ կերևային. բեդևի (բեդվին) արաբները ոչխար-մոչխար շատ ունեին, ամմա տուն-տեղ չունեին. չադըրներուն տակ կապրեին: Աղ քրիստոնյա արաբները մեզի կմեղքնային. քիչ մը փիլավ տային նէ՝ ձեռքով-մատներով կըլպստեինք, կուտեինք. չունքի ջիգյարը անու՞շ է…: Իմին երեք պզտիկ ձագուկներս ալ աքսորի ճամփաները մեռան: Անոր համար աս տարիքիս մեն-մենակ մնացած եմ…»[9]:

Յոթանասունի մոտ այդ դժբախտ կինը առաջին անգամ 1956 թ. ինձ հաղորդել է դերզորյան թուրքալեզու երգաշարից հատվածներ, որոնք երգում էր աղեկտուր ձայնով՝ վերհիշելով իր դառն անցյալը, իր կորցրած զավակներին. արցունքներն անվերջ հոսում էին նրա աչքերից, ձայնը խզվում էր ու չէր կարողանում երգել. մի փոքր շունչ էր առնում, կրկին սկսում էր երգել ու կրկին արտասվել: Ըստ ականատեսների վկա-

9 Սվ. 2011, Վկ. 282, էջ 480:

յության, կոտորածն սկսվել է Սբ. Զատիկի կիրակի օրը, որպեսզի քրիստոնյաները ևս Քրիստոսի չարչարանքներին արժանանան: Այդ երգերն է հիշել նաև կին ականատես-վկա *Մարիամ Բաղդիշյանը* (ծնվ. 1909 թ., Մուսա լեռ).

«Զատիկ-կիրակի չաղըր սէօքդիւլէր,
Բիւթիւն էրմէնիլէրի չէօլէ դէօքդիւլէր,
Քէչի գիբի էրմէնիլէրի քէսդիլէր,
Դինինին ուղրունա էօլէն էրմէնի»:

«Զատիկ-կիրակի վրանները քանդեցին,
Բոլոր հայերին անապատը լցրեցին,
Այծերի պես հայերին մորթեցին,
Հավատի համար մեռնող հայեր»[10]:

Եվ կամ՝

«Դէր Զօր դէդիքլէրի բիւյիւք քասաբա,
Քէսիլէն էրմէնի գէլմէզ հէսաբա,
Օսմանլը էֆրադը դէօնմիւշ ղասաբա,
Դինինին ուղրունա էօլէն էրմէնի»:

«Դեր Զոր կոչվածն էր մի մեծ տեղավայր,
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի պետերը մսագործ դարձան,
Հավատի համար մեռնող հայեր»[11]:

Ապրելու տարրական պայմաններից զրկված հայ մայրերն իրենց ունեցվածքը թուրքական կառավարությանն ու զինված ավազակներին թողնելուց հետո, զգալով իրենց մոտալուտ վախճանը, իրենց սիրասուն զավակներին պահ են տվել բարի արաբներին, որպեսզի եթե իրենք նահատակվեն, գոնե իրենց երեխաները ողջ մնան:

Նման փաստը ևս բանաստեղծական տեսք է ստացել հետևյալ երգի մեջ, որտեղ որդեկորույս մայրն շտապում է Խաբուր գետն անցնել, որպեսզի գնա ու գտնի «արաբի գյուղում» ապաստանած իր զավկին: Այդ երգը հաղորդել է *Թրվանդա Մուրադյանը* (ծնվ. 1905 թ. Խարբերդ).

«Եօ́լ վէր, Խաբու́ր[12], եօ́լ վէր, գէչէլիմ չէօլիւ,
Էվլաթըմ չըս-չըփլախ արաբըն քէօյիւ,
Օ́յ անամ, օ́յ անամ, հալիմիզ եաման,
Դէր Զօր չէօլիւնդէ քալդըղըմ զաման»:

«Ճամփա́ տուր, Խաբու́ր[4], անապատն անցնեմ,
Զավակս մերկ-տկլոր արաբի գյուղումն է,
Վա́յ, մայրիկ, վա́յ, մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը»[13]:

*Մարիամ Բաղդիշյանը* ևս պատմել է, թե ինչպես ինքը հազիվ 5-6 տարեկան էր, երբ աքսորի ճամփաներին իր փոքր քրոջ հետ անապատի ավազների վրա պառկած իրենց մայրիկի խոպոպների հետ էին խաղում՝ չիմանալով, որ նա արդեն մեռած է: Հետո ինչ-որ մի արաբ կին նրան տանում է իր տունը, որտեղ փոքրիկ Մարիամը չորս

10 Սվ. 2011, Վկ. 480, էջ 591:

11 Սվ. 2011, Վկ. 467, էջ 589:

12 Խաբուր/Հաբուր – Դեյր էլ Զորի մոտով հոսող գետ:

13 Սվ. 2011, Վկ. 508, էջ 694:

տարի փարչով ջուր է կրում ջրհորից: Եվ արցունքներով երգել է հետևյալ երգը.

«Թիւրքլէր բաշլադը էվլաթ քաչըրմայա,
Անալար ղըյմադը եիւզիւ էօփմէյա,
Բաքթըմ, քի գիզլիջէ աղլըյօր եամա՜ն,
Դինինին ուղրունա էօլէն էրմէնի»:

«Թուրքերն սկսեցին զավակ փախցնել,
Մայրերը չհասցրին երեսը համբուրել,
Տեսա՝ ծածուկ սաստի՜կ էին լաց լինում,
Հավատքի համար հայերն են մեռնում»[14]:

Այս ողբերգական իրադարձություններին ականատես-վկա յոզղատցի *Արշակուհի Պեպրոսյանը* (ծնվ. 1903 թ.) սրտաճմլիկ մի տեսարանի մասին է ինձ պատմել. «…Հետո սկսան աղջիկներին փախցնել, կնիկներին տանել մորթել, չոջուխներին գլուխները կտրել, գնդակի պես աւդին-անդին նետել: Փիլորի մորն ալ տարին, մորթեցին: Մեկն ալ երեխան գիրկը, մորը վիզը կտրել էին, չոջուխը մեռած մորը կուրծքը ուտելով ապրել էր, ամմա անոր գլուխն ալ ֆուտբոլի գնդակ ըրին»[15]:

Պատահում էր նաև, որ մայրերի մոտից փախցնում էին երեխաներին, հարսերին ու աղջիկներին բռնաբարում էին, հետո, կապկպելով, նետում էին ձորը կամ չորացած ջրհորների մեջ և կրակի տալով՝ բոլորին այրում.

«Էրմէնիլէրի մաղարայա դօլդուրդուլար,
Քիրէջ դէօքիւփ, աթէշ վէրիփ եաքթըլար,
Օ՜յ անամ, ո՜յ անամ, հալիմիզ եաման,
Դէր Զօր չէօլիւնդէ քալդըղըմ զաման»:

«Հայերին քարանձավի մեջ լցրեցին,
Այրած կիրը կրակի տալով՝ վառեցին,
Վա՜յ, մայրիկ, վա՜յ, մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը»[16]:

Իսկ ողջ մնացողներն ողբում էին իրենց կորուստները.

«Հայաթըն չէշմէսի բուզ գիբի աքար,
Թիւրք բաջըլարը չաղըրդան բաքար,
Էրմէնի գէլիյօր էլլէրի բաղլը,
Անալար աղլըյօր՝ չօջուղու՜մ դիյէ,
Գէլինլէր աղլըյօր՝ քօջա՜մ դիյէ,
Քըզլար աղլըյօր՝ նամուսու՜մ դիյէ»:

«Բակի ծորակը սառույցի պես է հոսում,
Թուրք բաջիները վրանից են նայում,
Հայերն են գալիս ձեռնակապերով,
Մայրերն են լալիս՝ զավա՜կս ասելով,
Հարսերն են լալիս՝ ամուսի՜նս ասելով,
Աղջիկներն են լալիս՝ պատի՜վս ասելով»[17]:

Դժոխային այդ իրարանցման մեջ մայրերը կորցնում էին զավակներին, զավակներն՝ իրենց ծնողներին.

---

14 Սվ. 2011, Վկ. 496, էջ 693:

15 Սվ. 2011, Վկ. 175, էջ 362:

16 Սվ. 2011, Վկ. 484, էջ 691:

17 Սվ. 2011, Վկ. 580, էջ 610:

«Դէր Զօր չէօլիւնդէ շաշըրդըմ, քալդըմ,
Եիթիրդիմ անամը, եիթիրդիմ բաբամը,
Օ՜յ անամ, ճյ անամ, հալիմիզ եաման,
Դէր Զօր չէօլիւնդէ քալդըրըմ զաման»:

«Դեր Զորի անապատում շվարեցի, մնացի,
Մորս ու հորս այնտեղ կորցրեցի,
Վա՜յ մայրիկ, վա՜յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը»[18]:

Պետք է ենթադրել, որ այդ աննկարագրելի թոհ ու բոհի մեջ ծնողներին կորցրած, որբ ու անօգնական հայ երեխաներն են հորինել այս կարգի երգերը: Հրազդանում բնակվող *Սաթենիկ Գույումջյանը* (ծնվ. 1902 թ., Կոնիա) հաղորդել է.

«Դէր Զօր քէօփրիւսիւ դարդըր. գէչիլմէզ,
Քան օլմուշ սուլար. բիր թաս իչիլմէզ,
Անադան-բաբադան վազգէչիլմէզ,
Դինինին ուղրունա էօլէն էրմէնի»:

«Դեր Զորի կամուրջը նեղ է. անցնել չի լինի,
Ջրերն արնոտ են. մի թաս խմել չի լինի,
Մորից-հորից բաժանվել չի լինի,
Հայերն են մեռնում հանուն հավատքի»[19]:

Թեպետ անհայր ու անմայր մնացած հայ որբուկը, արաբ անապատականների մոտ գոյատևելով, մոռացել էր իր մայրենի լեզուն, սակայն չէր մոռացել քրիստոնեական խաչակնքումը, որն իրեն սովորեցրել էր իր իսկական հայ մայրը: Ստամբուլի «Սուրբ Փրկիչ» հայ ազգային հիվանդանոցի ծերանոցի բնակիչ, ադաբազարցի վերապրող, 90-ամյա *Սիրենա Ալաճաճյանը* (ծնվ. 1910 թ.) չորս տարեկան էր, երբ թուրքերը կացինով սպանել էին իր հորն ու մորը: Անապատական արաբներն անծնող մնացած երեխային խնամել էին: Չորս տարի անց՝ 1918 թ. զինադադարից հետո, երբ որբահավաքներն անապատներից հավաքում էին հայ երեխաներին, տեսել են ոսկեգանգուր մազերով և կապույտ աչքերով ութ տարեկան դարձած աղջնակին, որի գեղեցիկ դեմքը դաջված էր կապույտ թանաքով և արաբի անուն էր կրում: Անկասկած նա հայ էր: Թեպետ նա մոռացել էր հայերեն խոսելը, սակայն չէր մոռացել քրիստոնեական խաչակնքումը, որը և նրա հայ քրիստոնյա լինելու ապացույցն էր: Սիրենային հանձնում են հայկական որբանոց[20]:

Ուստի հավատափոխ չլինելու, թուրքի կին չդառնալու, թուրք երեխաներ չծնելու համար հայ աղջիկները «Ձեռնե ի ձեռ բռնեցին, իրենք զիրենք Եփրն (իմա՝ Եփրատ) գետը նետեցին» երգել է մուսալեռցի *Մարիամ Բաղդիշյանը*.

---

18 Սվ. 2011, Վկ. 500, էջ 593:

19 Սվ. 2011, Վկ. 516, էջ 595:

20 Սվ. 2011, Վկ. 225, էջ 422-424:

«Գիդէ՛ն, գիդէ՛ն, էրմէնի քըզլա՛ր,
Բիր գիւն էօլիւմ բիզէ դիւշէր,
Դիւշմանա ավրաթ օլմամայա՝
Եփրատըն իչինդէ էօլիւմ բուլայըմ»:

«Գնացո՛ղ-գնացո՛ղ, հայ աղջիկնե՛ր,
Մի օր մահը դեմ կգա մեզ,
Թշնամուն կին չդարձած՝
Եփրատի մեջ գտնենք մահ»[21]:

Տեղահանությունն ու կոտորածն արդեն ընդգրկել էր ոչ միայն Արևմտահայաստանն ու Կիլիկիան, այլև արևելյան ու կենտրոնական Անատոլիայի հայաբնակ գավառները, այլ կերպ ասած՝ ամբողջ Օսմանյան Թուրքիան:

**Ականատես վերապրող հայ կանանց հաղորդած հերոսական երգերը**

Ողբերգական այդ օրերին հայ ժողովրդի հոգում վերազարթնեց դարերի խորքից եկող «մահ իմացյալը» ստրուկ կյանքից նախընտրելու և բռնությանն ուժով դիմադրելու հերոսացման իր խիզախ ոգին:

Նույն տարվա հուլիսին Մուսա լեռան յոթ գյուղերի գրեթե բոլոր բնակիչները որոշում են չենթարկվել տեղահանության կորստաբեր հրամանին:

Բողոքի ու վրեժխնդրության զգացումը համակում է բոլորին: Այր ու կին, մանուկ ու ծեր, թողնելով իրենց ունեցվածքը, բարձրանում են Մուսա լեռան անմատչելի գագաթը՝ կռվով դիմադրելու թշնամու բազմահազար զորքերին: 53 օր համառ մարտեր են մղվում: Այդ ընթացքում չորս լուրջ ճակատամարտ է տեղի ունենում: Ըստ այդմ էլ հյուսվել է ժողովրդական պատմական խրոխտ վիպերգը, որը, ծնողներից լսելով, մտապահել ու մեզ է հաղորդել *Դշխուհի Դուդակլյանը* (ծնվ. 1934 թ., Մուսա լեռ).

«Մենք մուսալեռցի քաջ կտրիճներ ենք,
Բոլորս ալ վարժ զենք կրողներ ենք,
Թուրքը մեզ կուզե տեղահան անել,
Անապատներում մեզ բնաջնջել:

Մենք չենք կամենար լինել շանսատակ,
Մենք կուզենք թողնել մի լավ հիշատակ.
Փառքով մեռնելը մեզի պատիվ է,
Նահատակվելը ազգին պարծանք է:

...Լեռնցի ենք մենք՝ բոլորս ալ քաջ,
Մենք չենք խոնարհիվի թշնամու առաջ,
Առյուծի նման կկռվենք քաջ-քաջ,
Ցիր ու ցան կանենք բանակը տաճկաց...»[22]:

21 Սվ. 2011, Վկ. 592, էջ 612:

22 Սվ. 2011, Վկ. 635, էջ 622:

Եվ կամ՝

«Մենք յոթը գյուղով սարը բարձրացանք,
Թշնամու առաջ չխոնարհվեցանք,
Քառասուն օրում մենք շատ զոհ տվինք,
Հայոց պատիվը բարձր պահեցինք:
Հա՛յ, մուսալեռցիք, ջա՛ն, մուսալեռցիք,
Հայոց պատիվը բարձր պահեցինք»[23]:

Սակայն հակառակորդը նորանոր ուժեր է կենտրոնացնում ըմբոստ հայերին պատժելու համար: Մուսալեռցիների պարենն ու զինամթերքն սպառվում են: Հորդառատ անձրևն անօգտագործելի է դարձնում նրանց ունեցած ընդամենը երեք հարյուր որսորդական հրացանները: Լեռան ծովահայաց կողմից օգնություն ստանալու հույսով նրանք ճարահատյալ սպիտակ սավաններն իրար են միացնում՝ մեկի վրա գրում. «Քրիստոնյաները վտանգի մեջ են, փրկեցեք», իսկ մյուսի վրա՝ Կարմիր խաչի նշան և պարզում լեռան լանջին:

Սեպտեմբերի 5-ին Միջերկրական ծովի խորքով անցնող ֆրանսիական «Կիշեն» մարտանավը նկատում և դանդաղեցնում է ընթացքը: Թիթեղյա փոքրիկ տուփը վզին, մեջը օտար լեզվով գրված խնդրագրով, ծովն է նետվում 75-ամյա Մովսես Գըրըգյանը: Նա լողալով հասնում է նավին, երեսը խաչակնքելով, ծնկաչոք նավապետին է ներկայացնում նամակը: Սեպտեմբերի կեսերին ֆրանսիական նավերը մոտենում են Մուսա լեռանը և, վերցնելով ավելի քան 4000 մուսալեռցիների, փոխադրում են Պորտ Սայիդ, որտեղ նրանք պատսպարվում են բրեզենտյա վրանների տակ:

Պորտ Սայիդում անցկացրած չորս տարիների ընթացքում մուսալեռցի տղամարդիկ իրենց ապրուստը հայթայթում են սանրագործությամբ, գդալագործությամբ, իսկ կանայք՝ գորգագործությամբ, ասեղնագործությամբ և այլ տոհմիկ արհեստներով:

Վերապրողները պատմում են, որ Պորտ Սայիդի հրաշեկ ավազների վրա հայ մայրերը, մատերով փորագրելով, իրենց մանուկներին սովորեցրել են մեսրոպյան գրերը՝ մինչև որ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) նախագահ Պողոս Նուբարի ջանքերով վրանների տակ սկսել է գործել Սիսվան վարժարանը՝ կից հիվանդանոցով:

Հայոց ցեղասպանության ժամանակ երկրի տարբեր վայրերում բռնկված հերոսամարտերի ընթացքում տղամարդկանց հետ հավասար, իրենց անձնազոհությամբ և քաջագործությամբ աչքի են ընկել նաև հայ կանայք: Ինչպես Յոզղատում, Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից ծայր առած և չորս տարի անընդմեջ շարունակված Ագդաղի քառամյա պայքարում, թուրքական կանոնավոր զորքերի դեմ կռվողների մեջ իրենց հերոսությամբ աչքի են ընկել խմբապետ Արթինի կինը՝ Մարիամը, և հերոս Սամվել Ինճեյանի կինը՝ Գյուլիզարը, և շատ ուրիշներ, որոնք հանուն հայրենիքի ազատագրության պատրաստ են եղել զոհել իրենց կյանքը: Իսկ 1915 թ. Մուսա լեռան բարձունքում 53 օր տեղի ունեցած հերոսամարտի ընթացքում իր քաջությամբ աչքի է ընկել հերոսուհի Մանուշակ Նաշալյանը, որի մասին նույնիսկ երգ է հյուսվել.

---

23 Սվ. 2011, Վկ. 636, էջ 622-623:

«Պարանը մեջքին կապել էր,
Հրացանը ուսից կախել էր,
Կացինը ձեռքը բռնել էր,
Մեծ-մեծ քարեր շրջում էր,
Կռվողներին օգնում էր,
Թշնամու ճամփան փակում էր,
Սրտի խորքից ասում էր.
«Գնդակս զուր թող չանցնի,
Թշնամու կուրծքը թող ծակի»…»[24]:

Նույն թվի հոկտեմբերին Մկրտիչ Յոթնեղբայրյանի և Հարություն Ռաստկելենյանի ղեկավարությամբ կազմակերպած Ուրֆայի ինքնապաշտպանական հերոսամարտում իր աննկարագրելի սխրանքով հիշարժան է Խարբերդի Ամերիկյան քոլեջի շրջանավարտ Խանըմ Քեթենջյանը: Նրա քաջագործության մասին է պատմել թուրքական պահականոցի կոմիսար Յուսուֆ էֆենդին, որն այդ բոլորը տեսել է իր աչքերով. «…Քիչ վերջը շրջապատուած էինք բոլորովին … Զիլ ու սուր ձայն մը հրամայեց անձնատուր ըլլալ. չպատասխանեցինք. համազարկը կրկնուեցաւ աւելի մօտէն … Երրորդ համազարկին՝ ներսի եւ դուրսի լամբերը փշրուեցան: Յարձակողները ներս խուժած էին արդեն: Քանի մը զէնքեր ալ պայթեցան: Ժխորը կ'ավելնար: Մէկը կը քաշկռտէին դէպի մզկիթին դուռը. մարդուն պաղատելու ձայնէն ճանչցայ որ, Գալապէօյունցի ոստիկան Ալին էր: Սիրտ ըրի նայելու թէ ի՞նչ կ'ընեն: Աղօտ լոյսով տեսայ որ տաբատով՝ բայց կնոջ մազեր ունեցող մէկը չուան կ'անցներ անոր վզին: Զայն կախեցին լամբարին տեղ: Հրամայող սուր ձայնը՝ այդ կնոջական ձայնով մարդունն էր, որ սկսավ անուններ տալ և համրեց երեսունէ աւելի կանանց անուններ, որոնց բոլորին ալ «ներկայ» պատասխանեցին կնոջական ձայներ, որոնք բոլորն ալ տղամարդու լաթերով կիներ էին: Ստուգելէ վերջ որ ոչ սպաննուած ունէին և ոչ ալ վիրավոր, ամբողջը մէկէն երգելով հեռացան, առասպելական հերոսներու նման, որ երբ միտքս իյնայ, ոսկորներս իսկ կը սարսռան»[25]:

Ուստի, երիտթուրքերի կազմակերպած համատարած սպանդի պայմաններում՝ տղամարդկանց հետ միասին նաև հայ կանայք երկրի մի շարք շրջաններում անհավասար կռիվ են մղել թշնամու գերազանց ուժերի դեմ: Թեպետ այդ ինքնապաշտպանական գոյամարտերը հաճախ մղվել են առանց ծրագրի, տարերայնորեն, մեկը մյուսից անջատ, բայց, այնուամենայնիվ, հերոսական պայքարի շնորհիվ, Յոզղատի Ագդաղում, Վանում, Շատախում, Մուշում, Սասունում, Շապին-Գարահիսարում, Մուսա լեռում, Ուրֆայում և այլուր տասնյակ հազարավոր կյանքեր են փրկվել երիտթուրքական դաժանություններից: Քանի որ հայ ժողովուրդը՝ կին, թե՝ տղամարդ, մարտնչել է իր հայրենի հողի, ապրելու մարդկային տարրական իրավունքների և իր ազգային ինքնության պահպանման համար: Այդ ժողովրդական զանգվածային գոյամարտե-

24 Սվ. 2011, Վկ. 633, էջ 621:

25 Մանուկ Աւետեան, *Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ Զօր. Անդրանիկ (Վերլուծական հայեցողութեամբ և վաւերական պատկերներով)* (Փարիզ, Imprimerie « Le Soleil », 1954), 329-330:

րում իրենց հարգանքի բաժինն ունեն նաև հայ խիզախ ու անձնազոհ կանայք, որոնք հավատարմորեն շարունակել են դարերի խորքից եկող մեր «Տիկնայք փափկասուն Հայոց աշխարհի» ուղենշած հերոսական ավանդույթները:

Այսպիսով, ի բնե հուզական և զգացմունքային կանայք անմիջականորեն իրենց վտիտ ուսերին են կրել հայերի տեղահանության, աքսորի և կոտորածների ամբողջ տառապանքների ծանրությունը: Ուստի նրանք հանգամանորեն և պատկերավոր կերպով նկարագրել են Հայոց ցեղասպանության ողբերգական և հերոսական դրվագները:

## THE TRAGIC AND HEROIC EVENTS OF THE ARMENIAN GENOCIDE ACCORDING TO THE TESTIMONIES OF THE WOMEN EYEWITNESS SURVIVORS. EPISODES

*Verjine G. Svazlian*
*Institute of Archaeology and Ethnography of the NAS RA, Armenia*

### SUMMARY

During over 60 years, owing to my consistent quests in the various regions of Armenia, as well as during my short-term personal or scientific trips to Syria, Lebanon, Egypt, Greece, France, Canada, the USA and Turkey, I have constantly searched and discovered representatives of the eyewitness survivors of the Armenian Genocide, including women, who have recalled their direct impressions through memoir-testimonies and historical song-testimonies.

Women, who were emotional and sensitive by nature, have borne on their scraggy shoulders the whole weight of the sufferings of the deportation, the exile and the massacre of the Armenians. Consequently, they have vividly described in detail the tragic and heroic events of the Armenian Genocide.

**Keywords:** Armenian Genocide, Western Armenia, Cilicia, eyewitness survivors, Armenian women, memoir-testimony, historical song-testimony

## АРМЯНСКАЯ ЖЕНЩИНА ВО ВРЕМЯ ГЕНОЦИДА И ГЕРОИЧЕСКИХ САМООБОРОНИТЕЛЬНЫХ СРАЖЕНИЯХ. ЭПИЗОДЫ

*Вержине Г. Свазлян*
*Институт археологии и этнографии НАН РА, Армения*

### РЕЗЮМЕ

На протяжении около 60 лет, благодаря кропотливым поискам как в различных районах Армении, так и в ходе краткосрочных личных поездок в Сирию, Ливан, Египет, Грецию, Францию, Канаду, США и Турцию, а также во время имевших место в этих странах научных конференций нам удалось найти свидетелей-очевидцев Геноцида, в том числе – женщин, которые передали свои непосредственные впечатления через свидетельств-воспоминания и песень исторического характера.

Эмоциональным по своей природе женщинам довелось на своих хрупких плечах вынести всю тяжесть депортации, ссылок и погромов армян. Поэтому они подробно и образно описывали трагические и героические события Геноцида армян.

**Ключевые слова:** Геноцид армян, Западная Армения, Киликия, свидетель-очевидец, армянские женщины, свидетельства-воспоминания, историческая песня-свидетельство

## REFERENCES

Avetian, Manuk. *Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ Զօր. Անդրանիկ (Վերլուծական հայեցողութեամբ և վաւերական փուեալներով)* [Memorial Book on the Armenian Liberation (1870-1920) and General Andranik (With Analyzing Discretion and Documental Data)]. Paris, 1954.

Svazlian, Verjine. *Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը* [Cilicia: The Oral Tradition of the Western Armenians]. Yerevan: AS ASSR, 1994.

Svazlian, Verjine. *Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ* [Armenian Genocide: Testimonies of the Eyewitness Survivors]. Yerevan: "Gitut'yun" Publ., 2011.

*Յուշամատեան Մեծ եղեռնի,* խմբ. Գերսամ Ահարոնեան [Memorial Book on Great Genocide. Editor Gersam Aharonian]. Beirut: "Zartonk" Daily Publ., 1965.

## Հեղինակի մասին
## About the Author
## Об авторе

**Վերժինե Գ. Սվազլյան**, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող:

Ուսումնասիրության ոլորտները՝ արևմտահայոց պատմական հիշողությունը և բանավոր ավանդույթը:

Էլ. փոստի հասցե՝ vsvaz333@yahoo.com

**Verjine G. Svazlian**, Honoured Scientist of the Republic of Armenia, Doctor of Sciences (Philology), Leading Researcher at the Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of Armenia.

Research fields: the historical memory and the folklore of the Western Armenians.

E-mail address: vsvaz333@yahoo.com

**Вержине Г. Свазлян**, Заслуженный деятель науки Республики Армения, доктор филологических наук, ведущий научный сотрудник Института археологии и этнографии Национальной Академии наук Армении.

Область исследований: историческая память и устное народное творчество западных армян.

Эл. почта: vsvaz333@yahoo.com

https://doi.org/10.51442/jgs.0053

# ԷՐԶՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳԻ ՔՂԻ ԳԱՎԱՌԱԿԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՔՂԻԻՑ ԴԵՊԻ ԴԵՐ-ԶՈՐ

*Աննա Ա. Կազարյան*
*«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ*

Հիմնվելով տարբեր սկզբնաղբյուրների վրա՝ սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնելու 1914-1915 թթ. թուրքական կառավարության՝ Էրզրումի նահանգի Քղի գավառակի հայության նկատմամբ գործադրած հալածական քաղաքականությունը, գավառակի հայության աքսորի հիմնական ուղիները, աքսորի ընթացքում հայերի հանդեպ իրականացված վայրագ գործողությունները, ինչպես նաև կոտորածների հիմնական վայրերը: Նմանատիպ առանձին շրջանների, նույնիսկ առանձին բնակավայրերի հայության տեղահանման և բնաջնջման պատմության ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմել Հայոց ցեղասպանության իրականացման մեխանիզմների վերաբերյալ:

**Բանալի բառեր**՝ Հայոց ցեղասպանություն, Էրզրումի նահանգ, Քղի գավառակ, տեղահանություն, կոտորածներ:

Հոդվածը ներկայացվել է՝ 13.03.2024: Ընդունվել է տպագրության 05.06.2024:
The article was submitted on 13.03.2024 and accepted for publication on 05.06.2024.
Статья поступила 13.03.2024 и была принята к публикации 05.06.2024.

**Ինչպես հղել**՝ Աննա Ա. Կազարյան, «Էրզրումի նահանգի Քղի գավառակի հայության տեղահանությունը. Քղիից դեպի Դեր Զոր», *Ցեղասպանագիտական հանդես* 12, no. 1 (2024), 63-75:
**How to cite:** Anna A. Kazaryan, "Deportation of Armenians from the sub-district of Keghi, Erzerum province: From Keghi to Der Zor," *Ts'eghaspanagitakan handes* 12, no. 1 (2024), 63-75:
**Как ссылаться:** Анна А. Казарян, "Депортация армянского населения района Кегы Эрзерумской провинции: от Кегы до Дер Зора," *Цехаспанагитакан андес* 12, no. 1 (2024), 63-75:

## Քղի գավառակը Հայոց ցեղասպանության նախօրյակին

Ըստ Օսմանյան կայսրության 20-րդ դարասկզբի վարչատարածքային բաժանման՝ Քղի գավառակը կամ կազան մտնում էր Էրզրումի նահանգի Էրզրումի գավառի կազմի մեջ՝ զբաղեցնելով գավառի հարավարևմտյան մասը: Քղի գավառակը արևելքից եզերում էր Խնուսի գավառակը, հյուսիսից՝ Դերջանի գավառակը, արևմուտքից՝ Երզնկայի գավառը, հարավ-արևմուտքից՝ Դերսիմի գավառը (Խարբերդի նահանգ), հարավից՝ Բալուի (Դիարբեքիրի նահանգ) և Ճապաղջուրի (Բիթլիսի նահանգ) գավառակները[1]: Տարածքով համապատասխանում էր պատմական Չորրորդ Հայքի Խորձյան գավառին: Ըստ այդմ՝ հայ մատենագրության մեջ Քղին հիշատակվում է նաև *Գուրզան*, *Խորզա*, *Խորձայնի*, *Խորձայն*, *Խորձեն*, *Խորձենք*, *Խորձյանք*, *Խորձյունի գավառ*, *Խորձունյաց երկիր* անվանումներով[2]:

---

1 Ա-Դօ, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները. Ուսումնասիրութեան մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաւական և տնտեսական դրութեան* (Երևան, Կուլտուրա, 1912), 188:

2 Ղազար Չարըզ, *Յուշամատեան Բարձր Հայքի. Կարինապատում* (Պէյրութ, 1957), 25:

Գավառակի տարածքը լեռնային է: Լեռները հիմնականում ծածկված են անտառներով: Արոտավայրերի առատությամբ պայմանավորված՝ բնակչությունը հիմնականում զբաղվում էր անասնապահությամբ: Երկրագործությունը գավառի դիրքի պատճառով այնքան էլ զարգացած չէր[3]: Գարեգին Թուրիկյանի (ծնունդով քղեցի)՝ 1916 թ. դեկտեմբերին կազմած տեղեկագրի համաձայն՝ գավառակի արհեստները կենտրոնացած էին հայերի ձեռքում, բնակչությունը զբաղվում էր հիմնականում բրուտությամբ, երկաթագործությամբ, թիթեղագործությամբ և կոշկակարությամբ: Ամբողջ գավառակում, Թուրիկյանի փոխանցած տվյալներով, կար մոտ 1000 արհեստավոր[4]:

Ըստ Թուրիկյանի՝ 1908 թ. դրությամբ գավառակի յուրաքանչյուր գյուղում գործում էր վարժարան, և վարժարանների ծախսերը գլխավորապես հոգում էին գավառակի՝ Կ.Պոլիս, ԱՄՆ և Կանադա պանդխտած գյուղացիության ստեղծած կրթամշակութային կազմակերպություն-ընկերությունները (արևմտահայ իրականության մեջ հայտնի են «մշակութային», «ուսումնասիրաց», «կրթասիրաց» անվանումներով[5]):

Մեծ եղեռնի նախօրեին գավառակի 25 000-ի հասնող հայ բնակչությունը իր 50 եկեղեցիներով գտնվում էր Քղիի եկեղեցական թեմի իրավասության ներքո: 1912 թվականից թեմի առաջնորդն էր Գեղամ վարդապետ Թևեքելյանը[6]:

19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբներին Քղի գավառակում ձևավորվեց նաև բողոքական համայնք, որի անդամների թիվը ցեղասպանության նախօրեին հասնում էր 1000-ի: Մեծ եղեռնի նախօրեին Քղի-Գասապա գյուղաքաղաքի բողոքական համայնքի ղեկավարն էր Բաղդասար Գալայջյանը[7]:

Մեծ եղեռնի նախօրեին Քղի գավառակի հայաբնակ գյուղերի և հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկությունները հակասական են: Այսպես.

- Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. մարդահամարի տվյալներով՝ գավառակի 51 հայաբնակ գյուղերում հաշվառվել է 19 859 հայ[8]:
- Ա-Դոն 1909 թվականի համար հաղորդում է 50 հայաբնակ գյուղերի մասին, որոնք ունեին 2 676 տուն և 18 705 շունչ հայ բնակչություն[9]:

---

3 Հովհաննես Զատիկեան, *Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կէսին* (Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2013), 286:

4 BNu/Fonds Andonian, P.J.1/3, liasse 61, Kiği, թ. 53: 1916 թ. Հայ Հեղափոխական Դաշնակցության Բաքվի կոմիտեի նախաձեռնությամբ ծրագրավորվում և Անդրկովկասի տարբեր վայրերում իրենց ապաստանը գտած հայ փախստականների շրջանում իրականացվում է տեղեկությունների հավաքագրում Արևմտյան Հայաստանում հայ բնակչության կոտորածների կազմակերպման և իրականացման վերաբերյալ: Գարեգին Թուրիկյանը այդ տեղեկությունները գրի առնողներից մեկն էր՝ ծնունդով քղեցի:

5 Նույն տեղում, թ. 54:

6 Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին* (Թեհրան, 2014), 262-263:

7 Կարապետ Ատանալեան, *Յուշարձան հայ աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցւոյ (Քանական ծանօթութիւններով)* (Ֆրէզնօ, Քրաուն Փրինթինկ Փրէս, 1952), 471, 479:

8 Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, “*Les Arméniens dans l’Empire Ottoman a la veille du genocide,*” *Editions d’Art et d’Histoire ARHIS* (Paris, 1992), 435-437.

9 Ա-Դօ, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները,* 192: Հեղինակը տեղեկությունները վերցրել է Կարինի առաջնորդարանից: Նա մեկ տան կտրվածքով հաշվում է 7 շունչ:

- Քղեցի Գարեգին Թուրիկյանի հաղորդմամբ, 1908 թ. մարդահամարի տվյալներով, գավառակի ընդհանուր բնակչությունը 60 000 էր, որից 27 000-ը՝ հայեր, իսկ 33 000-ը՝ թուրքեր՝ փոքր թվով չերքեզներ և մեծ մասամբ քրդեր[10]:
- Քղեցի Նազարեթ Փոստոյանի հաղորդմամբ՝ գավառակում Մեծ եղեռնի նախօրեին բնակվում էր 33 177 հայ[11]:
- 1916 թ. դեկտեմբերի 7-ին ամփոփված վիճակագրական տվյալներով՝ գավառակի 47 հայաբնակ գյուղերում մինչև ցեղասպանությունը բնակվում էր 24 040 հայ[12]:

Ի մի բերելով և համադրելով բոլոր տվյալները՝ կարող ենք միջին թվաբանական հաշվարկ կատարել, համաձայն որի՝ մինչև ցեղասպանությունը Քղի գավառակում բնակվում էր մոտավորապես 25 000 հայ[13]:

### Քղի գավառակի հայության տեղահանությունն ու կոտորածը

Մինչև 1915 թ. մայիս Քղի գավառակի հայության մոբիլիզացիան և բնակչության ունեցվածքի բռնագրավումն ընթանում էին համեմատաբար հանգիստ պայմաններում՝ պայմանավորված գայմագամի համապատասխան գործելակերպով և, ըստ որոշ վերապրածների, հայերի հանդեպ նրա ցուցաբերած «բարյացակամ» վերաբերմունքով[14]: Մայիսին, սակայն, գավառակում նոր գայմագամ նշանակվեց՝ տրապիզոնցի Լազե Միհրդատ Մեհմեդ բեյը, որը Հատուկ կազմակերպության չեթեական ջոկատի հրամանատարն էր: Պաշտոնը զբաղեցնելուց հետո նա անմիջապես ձևավորեց տեղահանությունների կոմիտե[15]:

---

10 BNu/Fonds Andonian, P.J.1/3, liasse 61, Kiği, թ. 53: Գարեգին Թուրիկյանը գրում է, որ 1908 թ. օսմանյան երեսփոխանական ընտրություններում հայ երեսփոխանի քվեն ապահովելու համար ու նաև այլ հանգամանքների բերումով անձամբ շրջել է Քղիի հայաբնակ գյուղերով և ուսումնասիրել գավառակի աշխարհագրական դիրքը, բնակչության հիմնական զբաղմունքները, սովորույթները և թվաքանակը:

11 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու*, գլխավոր խմբագիր՝ Ա. Վիրաբյան, հատոր III: Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգները, Պարսկահայք (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 123-148: Նազարեթ Փոստոյանը ծնունդով քղեցի էր, սակայն նախքան ցեղասպանական գործողությունների սկսվելը հաստատվել էր Ամերիկայում: 1916 թ. հունիսի 26-ին վերադարձել է Քղի՝ վերապրած հայրենակիցներից գավառակի կոտորածների և ընդհանրապես գյուղերի մասին տեղեկություններ հավաքելու:

12 ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 456, թթ. 1-3:

13 Պատմաբան Ռ. Թաթոյանը, համեմատական քննության ենթարկելով մի շարք աղբյուրներ, որոնք մենք ևս օգտագործել ենք մեր վերլուծությունները կատարելիս, գավառակի հայ բնակչության թվաքանակը նշում է 25 500 (տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին (աղբյուրների համեմատական վերլուծության փորձ)», *Ցեղասպանագիտական հանդես* 2, no. 1 (2014), 43):

14 Զաւէն արքեպիսկոպոս, *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ և վկայութիւններ* (Գահիրէ, 1947), 180: Հեղինակը մեջբերում է տիկին Աղասերի վկայությունը, որը Միացյալ ընկերության՝ այդ շրջանի վարժարանների տեսուչի կինն էր:

15 Raymond Kévorkian, *The Armenian Genocide*: A Complete History (New York: I.B. Tauris, 2011.), 304: Տե՛ս նաև Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին,* 262:

1915 թ. մայիսի 28-ին նոր գայմագամ Լազե Միհրդատ Մեհմեդ բեյն իր մոտ հրավիրեց գավառակի հոգևոր առաջնորդին՝ Գեղամ Թնեքելյանին, և ազդեցիկ հայերին, որոնք, բացի հոգևոր առաջնորդից, ձերբակալվեցին, և ընթերցեց հայերին պատերազմական գոտուց տեղահանելու մասին հրամանը։ Իսկ բանտարկյալներն ազատ կարձակվեին միայն այն ժամանակ, երբ նրանց ընտանիքները պատրաստ կլինեին մեկնելուն[16]։ Մինչև տեղահանությունների մասին հրամանի հրապարակումն ու տարածումը գավառակի գյուղերում դրությունն արդեն իսկ լարված էր, քանզի իշխանությունները նախապես գավառակի գյուղեր էին ուղարկել չեթեական խմբեր, որոնք արդեն իսկ սկսել էին շրջակա մոտ 50 հայկական գյուղերի մասնակի թալանը և հալածանքը։

Նազարեթ Փոստոյանի կողմից վերապրած քղեցիներից հավաքած վկայությունների համաձայն՝ Դերսիմի զինյալների քուրդ առաջնորդները 1915 թ. մայիսի 21-ին հարձակվել են Ագրակ գյուղի վրա. թալանվել և սպանվել է գյուղի բնակչության մեծ մասը[17]։ Ագրակ գյուղից վերապրած Արմենակ Անդրանիկյանի վկայության համաձայն, մայիսի վերջին Դերսիմի քրդերի կողմից սկսվեց իրենց և հարևան գյուղերի վրա հարձակումը։ Անդրանիկյանը իր ընտանիքի անդամների հետ թաքնվում է քուրդ բարեկամների տան, սակայն մի քանի օր անց վերջիներս նրան հորդորում են հեռանալ, քանզի բոլոր հայ տղամարդիկ սպանվելու էին։ Մինչ որոշ տեղացի քրդեր հայերի դեմ իրականացվող վայրագությունների մեջ մեղադրում էին Դերսիմի ցեղերի ներկայացուցիչներին, պարզ դարձավ, որ տեղացիները ևս մտադիր էին սպանել հայերին[18]։

Մայիսի 23-ին զենքի որոնման պատրվակով վայրագ գործողություններ են իրականացվել խառը բնակչություն ունեցող Խուբեկ, Կարիկո/Հազկերտ և Հոլիոլ/Կուլկ գյուղերում։ Մայիսի 24-ին ավազակները հարձակվել են Սերկևի գյուղի վրա (որտեղ գտնվում էր միջնադարյան Սուրբ Փրկիչ վանքը), ինչի հետևանքով բնակչության ¾-ը սպանվել է։ Մայիսի 25-ին նույն ճակատագրին արժանացավ Հերտիֆ գյուղը[19]։ Հերտիֆցի Սարգիս Արսեկյանի վկայությամբ՝ ինքը և իրենց գյուղից բազմաթիվ այլ հայեր կոտորածի ընթացքում ապաստան են գտել հարևան Կիվմեկ գյուղում։ Ամբողջ գյուղն այնտեղ է մնացել 20 օր։ Այդ ընթացքում Քղիի ողջ հայ բնակչությունը տեղահանվել է։ Սարգիս Արսեկյանը 1915 թ. մայիսի սկզբներին զինվորագրվել էր և համալրել բանվորական գնդերի շարքերը։ Գավառակում մայիսի մեջ տեղի ունեցող վայրագություններից հետո, իր մի շարք ընկերների հետ փախչելով, ապաստան էր գտել կիվմեցի Իսմայիլ աղայի տանը։ Սակայն, շատ չանցած, Իսմայիլ աղան, հասկանալով, որ չի կարող երկար իր պահել հայ բնակչությանը, լուր է տվել պլեճանցի աշիրեթներին, որոնք էլ տղամարդկանց տանելով գյուղից մեկ ժամ հեռավորության վրա սպանել

16 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում,* հատոր III, 159-160։ Տե՛ս նաև BNu/Fonds Andonian, P.J.1/3, liasse 61, Kiğı, թ. 15։

17 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում,* հատոր III, 154։

18 Armenag Antranigian, *From Hell to Heaven: Memoirs of the Armenian Genocide and the Volunteer Corps* (Ottawa, ON: privately published, 2015), 62։ Տե՛ս նաև Hilmar Kaiser, “Strategies of Survival: Genocide and Armenian Deportee Labor, 1915-1918,” in *On the Social History of Persecution* (Berlin: De Gruyter Oldenbourg, 2023), 19.

19 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում,* հատոր III, 154։

են, իսկ կանանց տարել իրենց հետ: Սարգիսին մի քանի ընկերների հետ հաջողվել է փախչել: Երկար ժամանակ լեռներում թափառելուց հետո նա ապաստան է գտել չարիկցի աշիրեթապետ Մզուր աղայի տանը, իսկ ռուսների՝ Կարին մուտք գործելուց հետո անցել է նրանց կողմը[20]:

Չեթեական ավազակախմբերը մայիսի 25-ին՝ առավոտյան ժամը 6-ին, հարձակվում են Խուբս գյուղի վրա, որի բնակիչները, ձևավորելով հինգ ինքնապաշտպանական խմբեր, զենքով են դիմավորում հակառակորդին: Երկու օր անընդմեջ ընթացող մարտերից հետո խուբսեցիները որոշում են ճեղքել ճակատը. դա նրանց հաջողվում է, սակայն նրանց մեծ մասը սպանվում են գյուղից դուրս եկող ճանապարհին: Խուբսեցիների մի մասին հաջողվում է հասնել Քղի քաղաք, սակայն նրանք էլ տեղահանվում են քղեցիների հետ[21]:

Ինչպես նշվեց, գավառակի գյուղերում կազմակերպված կոտորածներին մասնակցել են տեղական չեթեական խմբերը և Դերսիմի զինյալների քուրդ առաջնորդները: Դերսիմը բավականին հեռավոր լեռնային շրջան էր: Տեղի քրդական բնակչությունը դավանում էր ալևիականություն, որն ավելի մոտ է շիականությանը: Նրանց հարաբերությունները օսմանյան կառավարության և նրա սուննի բնակչության հետ այնքան էլ լավ չէին: Որոշ ցեղեր ապստամբել էին և ենթարկվել իրետանային ռմբակոծություններին: Քանի որ վերջիններս գավառակում գործում էին կառավարության հրամանից դուրս, իշխանությունները մահապատժի ենթարկեցին նրանցից 32-ին մինչև սեպտեմբերի սկիզբը: Նահանգապետ Թահսին բեյի պնդմամբ, տեղահանությունից հետո տարածքը պետք է բնակեցվեր մահմեդական բնակչությամբ՝ ի հակակշիռ Դերսիմի քրդերին, որոնք պետության համար լուրջ վտանգ էին ներկայացնում[22]:

Մայիսի առաջին օրերին գավառակի մի շարք գյուղերում տեղի ունեցան ձերբակալություններ: Ճերմակ կամ Ջիրմակ գյուղի բնակիչներից ձերբակալվեցին Մելքոն Ալոյանը, Կարապետ Չավտարյանը, Հովհաննես Խալաջյանը և Գրիգոր Մաղոյանը: Թեմրան գյուղից ձերբակալվեցին Սարգիս Ենդրոյանը, Սարգիս Սարգսյանը, Արսեն Վարժապետյանը, Մամբրե Պարտիզպանյանը և ուրիշներ: Նրանց շղթայակապ տեղափոխեցին Քղի քաղաք, որտեղ նրանք գլխատվեցին[23]:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ Քղի գավառակի հյուսիսարևմտյան հատվածի հայկական գյուղերի բնակչության մեծամասնությունը կոտորվել է իր բնակավայրում: Նույն ճակատագրին է արժանացել նաև հյուսիսարևելյան հատվածի հայաբնակ գյուղերի բնակչությունը: Շարուկ գյուղից Առաքել Սարգսյանի վկայությամբ՝ մայիսի 25-ին կառավարությունից հրաման է տրվել տեղահանության համար պատրաստություն տեսնելու: Հունիսի սկզբներին, կառավարության հրամանի համաձայն, Շարուկի բնակչությունը տեղափոխվել է գյուղից մոտ մեկուկես ժամ հեռավորության

20 Տես՛ նույն տեղում, 176-178:

21 *Յուշամատեան Քղի, Խուփս գիւղի,* Հրատարակութիւն Քղի-Խուփս Գիւղի Հայրենակցական Միութեան, առաջաբ.՝ Ա. Ամուրեան (Ֆրեզնօ, տպ. «Ասպարէզ», 1968), 57-66: Տե՛ս նաև BNu/Fonds Andonian, P.J.1/3, liasse 61, Kiği, թ. 15, 16 շրջ.:

22 Hilmar Kaiser, “Strategies of Survival:” 18, 20.

23 BNu/Fonds Andonian, P.J.1/3, liasse 61, Kiği, թ. 17:

վրա գտնվող Չրգանոս քրդական գյուղը, որտեղ արդեն հավաքվել էր հարևան հայաբնակ գյուղերի հայ բնակչությունը. Չիֆթլիկից՝ 550-600 հոգի, Քարապեկից՝ 400-500, Լճիկից՝ 600-700, Կզըլ Չիբուխից՝ 300-400: Տեղահանված ողջ բնակչությունը շրջապատվել է քրդերով, որոնց ղեկավարում էին լճիկցի Տերվիշ բեկը, նրա եղբայրը՝ Սուլեյման բեկը, կզըլչիբուխցի Ազիզ բեկը, դոլլանցի Մեհմեդ բեկը, բաշգյուղցի Րիզա բեկը և այլք: Ողջ բնակչությունից թանկագին իրերն ու դրամը հավաքելուց հետո սկսվել է կոտորածը: Առաքել Սարգսյանի վկայությամբ՝ 5 հոգու իրար կապելով գնդակահարում էին, երեխաներին ոտքերից բռնած՝ գլուխները հարվածում քարերին: Այսպիսով մոտ 1 500 հայ սպանվեց այդ կոտորածի ժամանակ[24]:

Տեղում մասնակի կոտորածից հետո սկսվեց Քղի գյուղաքաղաքի և կենտրոնական հատվածի հայաբնակ գյուղերի բնակչության տեղահանությունը: Քղիից տեղահանված առաջին խումբը՝ 10-12 ընտանիք, քաղաքից դուրս եկավ մայիսի 29-ին սեփական գրաստներով և տեղացի մի քանի թուրքերի ու ժանդարմների առաջնորդությամբ: Քաղաքից դուրս գալուն պես բոլորի վերցրած իրերը խուզարկվեցին զենք գտնելու պատրվակով, այդ իսկ պատճառով հաջորդ քարավաններում ոչ մեկը չհամարձակվեց նույնիսկ դանակ վերցնել իր հետ[25]: Հաջորդ օրը՝ մայիսի 30-ին, դուրս եկավ երկրորդ խումբը և միացավ առաջինին: Այդ խմբում էին տիկին Աղասերը և Սիրանույշ Եսայանը[26]: Սիրանույշ Եսայանի վկայությամբ՝ առաջին օրը քարավանն իջևանեց Օրորի ջրերի[27] մոտ, երրորդ օրը հասավ Թեփե[28] կոչված գյուղը: Հաջորդ օրը՝ առավոտյան, երբ քարավանը պատրաստվում էր շարունակելու ճանապարհը, քղեցի մի քանի թուրքեր, 20 հոգանոց ցանկը ձեռքներին, եկան հայտարարելու, որ գայմագամը Չան[29] գյուղում է և ցանկանում է խոսել երևելիների հետ կարևոր հարցերի շուրջ,

---

24 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում,* հատոր III, 146-147:

25 Նույն տեղում, 160:

26 Սիրանույշ Եսայանը ծնվել էր Կարինում, ուսանել, իսկ այնուհետև նաև պաշտոնավարել Կարնո Ազգ. Հռիփսիմյան և Քղիի Միացյալ Ընկերության վարժարաններում: 1906 թ. ամուսնացել էր Անդրանիկ Եսայանի հետ (ծնունդով քղեցի): Վերջինս որպես ուսուցիչ պաշտոնավարել էր Պոլսի Ազգ. Որբանոցում և Կենտրոնական վարժարանում: Այնուհետև 1905 թ. Կարինում վարել էր Սանասարյան վարժարանի ընդհանուր տեսուչի պաշտոնը, ապա Միացյալ Ընկերության Կարնո շրջանի տեսուչի օգնականի պաշտոնը: Պատերազմի տարիների Անդրանիկ Եսայանը թողնելով պաշտոնը զինվորագրվել էր և որպես դեղագործի օգնական աշխատել Կարնո հիվանդանոցում: Տիֆով վարակվելու պատճառով հիվանդանոցի պետը 4 ամիս հանգիստ է տրամադրել, որից հետո էլ ընտանիքով տեղափոխվել են Քղի, ամուսնու ծննդավայրը, այնուհետև աքսորվել (*Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, հատոր III, 164):

27 Գետակ Արածանիի ավազանում, նրա աջակողմյան Փերի վտակի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Բյուրակն-Մնձուրյան լեռնաշղթայի Աստղաբերդ լեռան լանջերից և Քղի գյուղաքաղաքից 7-8 կմ հարավ միանում է Փերիին (Թադևոս Հակոբյան, Ստեփան Մելիք-Բախշյան, Հովհաննես Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 5 (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2001), 503):

28 Գյուղ Արմ. Հայաստանում՝ Դիարբեքիրի նահանգի Բալուի գավառակում, Ուրուջա լեռան հարավարևմտյան կողմում (տե՛ս Թադևոս Հակոբյան, Ստեփան Մելիք-Բախշյան, Հովհաննես Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 2 (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1988), 443):

29 Գյուղ Արմ. Հայաստանի Էրզրումի նահանգի Քղի գավառակում, Փերի գետի ձախակողմյան

և հավաստիացնում էին, որ հարցաքննությունից հետո նրանք կվերադառնան իրենց ընտանիքների մոտ: Սակայն այդ 20 տղամարդկանց ճակատագրի մասին այլևս ոչ մի տեղեկություն չի ստացվում: Նրանց թվում էր նաև Սիրանույշ Եսայանի ամուսինը՝ Անդրանիկ Եսայանը[30]:

Վեցերորդ օրը քարավանը հասել է Բալու[31]: Սիրանույշ Եսայանի վկայությամբ՝ Բալու հասնելուց հետո իրենց միացել է նաև Քղիից շարժված և տարբեր վայրերից տեղահանված հայերի երրորդ քարավանը, որից սպանվել էր միայն հեռագրատան ցրիչը[32]: Սիրանույշի խոսքերով՝ Քղիից Բալու է հասել վեց քարավան: Երրորդ քարավանից հետո հաջորդ քարավանները ճանապարհին ենթարկվել են հարձակման, քանզի երբ հասնում էին Բալու, տղամարդ գրեթե չէր լինում, իսկ կանայք շատ խղճալի վիճակում էին, երբեմն՝ նույնիսկ մերկ[33]:

Ենթադրաբար վերապրած Եփրեմ Տլեմյանը և Լուսիա Եսայանը եղել են Քղիից տեղահանված չորրորդ քարավանում: Նրանց վկայությամբ՝ քարավանը, դուրս գալով Քղիից, երրորդ օրը հասել է Չան գյուղ, որտեղ էլ հարձակման է ենթարկվել քրդերի կողմից, այնուհետև թալանից ու կոտորածից փրկված հայերը շարունակել են ճանապարհը դեպի Բալու[34]:

Քղիից տեղահանված հինգերորդ քարավանը ճանապարհ է ընկել հունիսի 3-ին: Այդ քարավանում էին ընդգրկվել Թեմրան, Օրոր և Առեք գյուղերի բնակիչները: Թեմրանցի վերապրած Հովհաննես Սարգսյանի վկայությունից որոշակի պատկերացում ենք կազմում այդ քարավանի մասին: Նրա հաղորդմամբ՝ առաջին անգամ քարավանի վրա հարձակվել են Ազքուզար կոչվող վայրում: Հարձակումն իրականացվել է չիլխեղերցի Օսման բեյի հրամանատարությամբ, որն իր քուրդ չեթեներին հրամայել էր ոչնչացնել աքսորյալներին: Առաջին կոտորածի ժամանակ Հովհաննեսը, իր հայրը և մի շարք այլ հայեր խուճապի մատնված սկսել են փախչել Քղիի ուղղությամբ: Վկայություններից պարզ է դառնում, որ բանակային հեծելազորը նույնպես մասնակցել է այս քարավանում ընդգրկված մարդկանց կոտորածին: Մասնավորապես առաջին ջարդից փրկվածները, Ալենաներ կոչված վայրում հանդիպելով հեծելազորին, հանձնվել են նրան՝ մտածելով, որ վտանգն արդեն անցել է, և կարելի է հանգիստ շունչ քաշել, սակայն այստեղ էլ զորքի մասնակցությամբ են քրդերը կոտորել ու թալանել նրանց: Հովհաննեսին այստեղից էլ է հաջողվել փախչել և միանալ աքսորականնե-

---

վտակներից մեկի ափին: 20-րդ դարի սկզբներին ուներ 30-35 տուն՝ 250 հայ բնակչով (տե՛ս Թադևոս Հակոբյան, Ստեփան Մելիք-Բախշյան, Հովհաննես Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 4 (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1991), 210):

30 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, հատոր III, 165: Տե՛ս նաև Զաւէն արքեպիսկոպոս, *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ և վկայութիւններ,* 181: Տիկին Աղասերի վկայությունն է:

31 Բերդաքաղաք Արմ. Հայաստանի Դիարբեքիրի նահանգի Արղանամադենի գավառի Բալուի գավառակում: Վերջինիս կենտրոնն էր: Կառուցված է Արածանի գետի աջ ափին (տե՛ս Թադևոս Հակոբյան, Ստեփան Մելիք-Բախշյան, Հովհաննես Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 1 (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1986), 560):

32 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, հատոր III, 161:

33 Նույն տեղում, 161-163:

34 Նույն տեղում, 166: Տե՛ս նաև Լուսիա Եսայան, *Նոր կեանք* (Կ.Պոլիս), 1918, 18 նոյեմբեր, 1-2:

րին: Հաջորդ կայանատեղին Քոլտկան քրդական գյուղն էր, որտեղ նս աքսորյալները ենթարկվել են դաժան թալանի ու կոտորածի: Հովհաննեսը սկզբում աղջկա շորեր է հագել կոտորածից փրկվելու համար, այնուհետև գիշերով կարողացել է փախչել[35]:

Քղիից տեղահանված վերջին՝ վեցերորդ քարավանի մասին տեղեկություններ կան Խոսնակ (Օսնակ) գյուղից վերապրած Մամիկոն Աշխյանի հուշագրության մեջ: Այդ քարավանում էր ընդգրկվել Աստղաբերդ, Ճերմակ, Ապողնակ, Չարիբաշ և Սեղանք գյուղերի հայ բնակչությունը: Տեղահանությունն ու աքսորն իրականացվել են Ճերմակ գյուղից Թեֆիկ բեյի գլխավորությամբ: Վեց գյուղերի բնակչությանը Թեմրան գյուղի մոտակայքում միավորելուց հետո ձևավորված քարավանը երրորդ օրը հասել է Քերպոզ[36] գյուղ: Քերպոզ և Չան գյուղերի արանքում քարավանը մնացել է մի քանի օր: Երկու ժամ հեռավորության վրա էր հինգերորդ քարավանը: Քարավանի անվտանգությունն ապահովելու պատրվակով պարբերաբար գումար էր հավաքվում: Մամիկոնի վկայությամբ, երբ չիլխեղերցի Օսման բեյի հրամանատարության ներքո սկսվել է հինգերորդ քարավանի՝ թեմրանցիների կոտորածը, նրանց մի մասը փախել է իրենց ուղղությամբ, իսկ այնուհետև նույն Օսման բեյը սկսել է իրենց քարավանի կոտորածը: Այս կոտորածից փրկվածները շարունակել են ճանապարհը դեպի Չան գյուղ, որտեղից էլ Մամիկոնը կարողացել է փախչել[37]:

Այսպիսով՝ մինչև հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածում Քղիի հայ բնակչությունը վեց քարավանով տեղահանվեց Բալու: Առաջին երեք քարավանների մարդկային կորուստները տեղահանության ժամանակ բավական փոքր էին, սակայն Բալու հասնելուն պես տղամարդկանց առանձնացնում են կանանցից և սպանում, որից հետո էլ արդեն սկսվում է հարձակումը կանանց վրա[38]: Տիկին Աղասերը հետևյալ կերպ է նկարագրում կատարվածը. «Բալու հասնելնէս գիշեր մը առաջ թաին[39] տալու պատրուակով մեր այրերը բռնի հեռացուցին մեզմէ և խիստ յարձակում մը սկսաւ մեր վրայ: Այրերը սպանեցին և մեզ բոլորովին կողոպտեցին: Երբ Բալուի կամուրջը հասանք՝ շատ կիներ, յուսահատ, ջուրը նետուեցան և խեղդուեցան»[40]:

Բալուից քղեցիների մի մասը շարունակում է ճանապարհը դեպի Խարբերդ, մյուս մասն էլ՝ դեպի Տիգրանակերտ: Սիրանույշ Եսայանը և տիկին Աղասերը ճանապարհ են ընկնում դեպի Խարբերդ, ուր նրանք հասնում են 21 օր անց սովահար և պատա-

---

35 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, հատոր III, 168-170:

36 Գյուղ Արմ. Հայաստանի Էրզրումի նահանգի Քղի գավառակում (տե՛ս Թադևոս Հակոբյան, Ստեփան Մելիք-Բախշյան, Հովհաննես Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 5, 363):

37 ՀԱԱ, ֆ. 420, ց. 17, գ. 1, թթ. 6-7, 12-13:

38 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, հատոր III, 162: Տե՛ս նաև Զաւէն արքեպիսկոպոս, *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ և վկայութիւններ*, 181: Տե՛ս նաև Armenian Assembly of America, Oral History Project, Shamigian Antranig: Ծրագրի շրջանակում հավաքագրված վկայությունների նյութերը այժմ էլեկտրոնային հասանելիություն չունեն, սակայն մեջբերված վկայության օրինակը պահվում է մեր անձնական արխիվում:

39 Թային՝ օրվա ապրուստ, ուտելիք (տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. 2 (ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա, Երևան, 2002), 75):

40 Զաւէն արքեպիսկոպոս, *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ և վկայութիւններ,* 181:

ռոտված հագուստներով: Երկուսն էլ տեղավորվում են աշխատանքի Խարբերդի թուրքական որբանոցում, որը հիմնել էին թուրքերը՝ հայ երեխաներին թրքացնելու նպատակով: Աննպաստ պայմանների պատճառով որբերի մեծ մասը մահանում էր: Որոշ ժամանակ անց որբանոցը փակվում է, իսկ մնացած երեխաներին տանելով Մալաթիա՝ նետում են Եփրատ գետը[41]:

Տիգրանակերտի ուղղությամբ տարվող խումբը (մոտ 3 000 հոգի), այնտեղից շարժվելով, երեք ամիս անց հասնում է Մարդին[42], որտեղից էլ 20 օր քայլելով՝ հասնում է Ռաս-ուլ-Այն՝ ճանապարհին ենթարկվելով արաբական ցեղախմբերի վայրագ հարձակումներին: Տեղի անտանելի պայմանների և համաճարակի պատճառով 600-700 հոգի հազիվ է ողջ մնում: Ի վերջո նրանք, ովքեր գումար ունեին, երկաթուղով Հալեպ և Համա են մեկնում, իսկ մյուսները քշվում են դեպի Դեր Զոր[43]:

Այսպիսով՝ հստակ կարող ենք արձանագրել, որ հայության տեղահանությունն ու կոտորածն իրականացվել է համակարգված և հստակ երթուղով, որով անցել են բոլոր վեց քարավանները: Սա փաստում է ծրագրված և նախապես պլանավորված գործողության մասին: Գավառակի ողջ հայ բնակչությունը մեկ շաբաթվա ընթացքում լքեց իր բնակավայրերը, ճանապարհին պարբերաբար կողոպտվեց և ոչնչացվեց, իսկ նրա մնացորդները, հայտնվելով գոյատևման պայմաններից զուրկ Ռաս-ուլ-Այնում և Դեր Զորում, հենց այդ վայրերում գտան իրենց մահը: Քղեցի հայերը հիմնականում սպանվել են Չանում (3 000), Թեփեում (2 500) և Բալուի կամրջի մոտ (10 000)[44]:

## Քղի գավառակում իրականացված ցեղասպանական գործողությունների հետևանքները

Քղի գավառակի հայության մարդկային կորուստները շատ մեծ էին: 1916 թ. դեկտեմբերին ամփոփված վիճակագրական տվյալներով՝ Քղիի 47 գյուղերից փրկվել է ընդամենը 715 հոգի[45]: Անտոնյանի ֆոնդում պահպանված վիճակագրական տվյալներով՝ վերապրած հայերի թիվը 461 է, ընդ որում այստեղ հաշվարկը կատարված է ըստ 49 գյուղերի վերապրածների թվաքանակի[46]: Վերապրած քղեցիների մասին տվյալներ կան նաև Կարնո հայկական կոմիտեի կողմից 1916 թ. դեկտեմբերին Քղի ուղարկված Միքայել Նանիկյանի զեկուցագրում: Նանիկյանի ուղևորության նպատակն էր աջակցել քղեցիներին իրենց բնականոն կյանքին վերադառնալու հարցում, սակայն հանգամանքների բերումով նա ստիպված է եղել կազմակերպել ցեղասպանությունից փրկված մոտ 600 քղեցիների տեղափոխությունը Կարին քաղաք: Նրա զեկուցագրի

41 Նույն տեղում: Տե՛ս նաև *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, հատոր III, 164:

42 Քաղաք՝ բերդաքաղաք Արմ. Հայաստանի Դիարբեքիրի նահանգի Մարդինի գավառում (տե՛ս Թադևոս Հակոբյան, Ստեփան Մելիք-Բախշյան, Հովհաննես Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 3, 728):

43 BNu/Fonds Andonian, P.J.1/3, liasse 61, Kiği, թ. 19 շրջ.:

44 Raymond Kevorkian, *The Armenian Genocide*, 307.

45 ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 456, թթ. 7-9:

46 BNu/Fonds Andonian, P.J.1/3, liasse 61, Kiği, թ. 1:

համաձայն՝ տեղափոխության ընթացքում շատ քղեցիներ մահացել են նաև թերսնվածությունից և հիվանդություններից[47]: Հալեպի փրկության տանը պատսպարված հայերի թվում կային նաև 24 բնիկ քղեցիներ[48]: Եթե միջին թվաբանական հաշվարկ կատարենք առկա աղբյուրների համադրմամբ, ապա վերապրած քղեցիների թիվը կհասնի մոտ 600-ի, որը կազմում է նախնական՝ 25 000 բնակչության 2-3 %-ը:

1914-1916 թթ. աղետալի իրադարձությունների ընթացքում, ինչպես Էրզրումի նահանգի բազմաթիվ այլ վայրերում, Քղի գավառակում ևս հայությունն ունեցել է մշակութային ժառանգության անհոլի կորուստներ: Մինչև ցեղասպանության շրջանը գավառակն ուներ զարգացած կրթական կյանք: Այդ մասին էին վկայում գավառակի տարբեր համայնքներում գործող կրթական հաստատությունները: Մինչև ցեղասպանության շրջանը գավառակում հաշվվում էր 72 կրթական հաստատություն[49], որոնց ընդհանուր կորուստը ցեղասպանության ժամանակ կազմում էր մոտավորապես 17 470 օսմ. լիրա[50]: Ինչ վերաբերում է վանքերին ու եկեղեցիներին, որոնց թիվը կազմում էր համապատասխանաբար 16 և 50[51], ապա դրանց ընդհանուր կորուստը ցեղասպանության ժամանակ կազմել է մոտավորապես 21 295 օսմ. լիրա[52]: Հայաստանի ազգային արխիվում պահպանված վիճակագրական ցուցանիշներում, որոնք ամփոփվել են 1917 թ. դեկտեմբերի 7-ին, կան նաև բնակչության կորսված տների և ունեցվածքի վերաբերյալ տվյալներ՝ հաշվարկված օսմանյան լիրայով: Այդ տվյալներով՝ տների և ունեցվածքի վնասը կազմել է 768 650 օսմանյան լիրա[53]: Նույն փաստաթղթում կան նաև գավառակի արհեստավորների, առևտրականների և ջրաղացների նյութական կորուստների մասին տվյալներ, համաձայն որոնց՝ արհեստավորների կորուստը կազմել է 31 400 օսմանյան լիրա, առևտրականներինը՝ 491 150, իսկ ջրաղացներինը՝ 51 250[54]: Եթե ընդհանուր հաշվարկ կատարենք, ապա կստացվի, որ ցեղասպանության ընթացքում Էրզրումի նահանգի Քղի գավառակը ունեցել է 1 381 215 օսմանյան լիրայի նյութական կորուստ:

Ամփոփելով Քղի գավառակի հայության տեղահանության և բնաջնջման վերաբերյալ ուսումնասիրությունը՝ կարող ենք նշել.

- Գավառակի հայերի կոտորածը նախապես ծրագրված և հրահանգված էր իշխանությունների կողմից: Նրանց բնաջնջումն իրականացվել է պարբերաբար և հետևողականորեն 1915 թ. մայիս-հունիս ամիսների ընթացքում ամենադաժան

47 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 126, թթ. 1-7:

48 *Հալեպի փրկության տուն. Հայոց ցեղասպանությունը վերապրածների 1464 վկայություն*, կազմող և խմբագիր՝ Էդիտա Գզոյան (Երևան, ՀՑԹԻ հրատ., 2021):

49 BNu/Fonds Andonian, P.J.1/3, liasse 61, Kiği, թ. 1-1 շրջ.:

50 ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 456, թթ. 7-9: Վիճակագրական տեղեկագիրը կազմվել է 1917 թ. դեկտեմբերին: Ենթադրաբար տեղեկությունները հավաքագրել և ամբողջացրել են Հայ Հեղափոխական Դաշնակցության Բաքվի կոմիտեի նախաձեռնությամբ:

51 BNu/Fonds Andonian, P.J.1/3, liasse 61, Kiği, թ. 1-1 շրջ.:

52 ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 456, թթ. 7-9:

53 Նույն տեղում:

54 Նույն տեղում, թթ. 4-6:

մեթոդներով: Ցեղասպանության իրականացման համատեքստում պետք է դիտարկել նաև սովը, հիվանդությունններն ու այլ զրկանքներ:

- Քղի գավառակի հայությունը տեղահանվել է վեց քարավաններով: Տեղահանության ժամանակ Քղեցի հայերը հիմնականում սպանվել են Չանում (3 000), Թեփեում (2 500) և Բալուի կամրջի մոտ (10 000):
- Գավառակի հայ բնակչության կոտորածները կազմակերպվել են մասամբ տեղում, մասամբ՝ աքսորի ճանապարհին, որոնց անմիջական իրագործողները տեղական չեթեական խմբերն ու քրդական ցեղերն էին: Այդ գործողություններին մասնակցել են նաև թուրքական կանոնավոր զորամասերը: Հայերի կոտորածներն ուղեկցվել են նաև նրանց ունեցվածքի թալանով:
- Քղի գավառակի հայ բնակչության միայն 2-3 %-ին (600-700 հոգի) է հաջողվել վերապրել կոտորածները: Գավառակի վերապրած հայությունը կորուստներ է ունեցել նաև 1916 թվականին՝ ռուսական զորքերի կողմից Էրզրումի նահանգի գրավյալ տարածքներում տեղափոխությունների ժամանակ, թերսնվածությունից և հիվանդություններից:

## DEPORTATION OF ARMENIANS FROM THE SUB-DISTRICT OF KEGHI, ERZERUM PROVİNCE: FROM KEGHI TO DER ZOR

*Anna A. Kazaryan*
*Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia*

Based on various sources, this article attempts to present the events of 1914-1915: the persecutory policy of the Turkish government against the Armenians of Keghi sub-district, Erzurum province, the primary methods of deportation used against the Armenians of the province, the brutal actions taken during the deportation, and the main sites of massacres. Studying the history of deportation and annihilation of Armenians in individual regions, even in specific settlements, allows for a more complete understanding of the mechanisms behind the Armenian Genocide.

**Key words:** Armenian Genocide, Erzurum Province, Keghi sub-district, deportation, massacres.

## ДЕПОРТАЦИЯ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ РАЙОНА КЕГЫ ЭРЗЕРУМСКОЙ ПРОВИНЦИИ: ОТ КЕГЫ ДО ДЕР ЗОРА

*Анна А. Казарян*
*Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения*

В статье на основе различных источников предпринята попытка представить политику преследования турецкого правительства в отношении армян района Кегы в провинции Эрзерум, основные методы депортации армян из района, жестокие действия во время депортации и основные места массовых убийств. Изучение истории выселения и

уничтожения армян в отдельных регионах, даже в конкретных поселениях, помогает более полно понять механизмы реализации Геноцида армян.

**Ключевые слова:** Геноцид армян, Эрзурум, район Кегы, депортация, массовые убийства.

## REFERENCES


A-Do.*Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները* [The Vilayets of Van, Bitlis and Erzerum]. Yerevan: Culture, 1912;

Gazer Charge, *Յուշամատեան Բարձր Հայքի. Կարինապատում* [Houshamatyan of Upper Armenia: Karinapatum]. Beirut, 1957;

Hovhannes Zatikyan, *Կարինի նահանգը XIX դարի երկրորդ* կէսին [Karin Province in the second half of the 19th century]. Yerevan, 2013;

Karapet Atanalian, *Յուշարձան հայ աւետարանականաց և Աւետարանական եկեղեցւոյ (Քննական ծանօթութիւններով)* [Monument to the Armenian Evangelicals and the Evangelical Church (with examination notes). Fresno, 1952;

Robert Tatoyan, *Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին (աղբյուրների համեմատական վերլուծության փորձ)* [The number of the Armenian population in Erzurum province on the eve of the Genocide (an attempt at comparative]. (Yerevan), *Ts'eghaspanagitakan handes* 2, no. 1, 2014;

Teodik, *Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին 1915 աղետալի տարին* [Golgotha of the Armenian Clergy and its Flock in Catastrophic 1915]. Tehran, 2014;

Zaven Archbishop, *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ և վկայութիւններ* [Patriarchal memories: affidavits and testimonials]. Cairo, 1947;

*Հալեպի փրկության տուն. Հայոց ցեղասպանությունը վերապրածների 1464 վկայություն* [The Aleppo Rescue Home: 1464 Accounts of Armenian Genocide Survivors. Compiler, editor an author of introduction and references Edita Gzoyan]. Yerevan; AGMI, 2021;

*Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, գլխավոր խմբագիր՝ Ա. Վիրաբյան, հատոր III: Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգները, Պարսկահայք* [The Armenian Genocide in the Ottoman Turkey. The Testimonies of Surviviors. Collection of documents, vol. III. Vilayet of Erzurum, Harput, Diyarbakir, Sivas, Trabzon, Persarmenia, edt. Amatuni Virabyan]. Yerevan: Armenian National Archive, 2012;

*Յուշամատեան Քղի, Խուփս գիւղի,* Հրատարակութիւն Քղի-Խուփս Գիւղի Հայրենակցական Միութեան, առաջաբ.՝ Ա. Ամուրեան [Houshamatyan of Keghi-Khups village, Publication of the Patriotic Association of Keghi-Khups Village, edited by A. Amurian]. Fresno, 1968;

*Նոր կեանք* [Nor keanq]. Constantinople, November 18, 1918.

**Հեղինակի մասին**
**About the author**
**Об авторе**

**Աննա Ա. Կազարյան**, ՀՑԹԻ Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայկական հարց, Հայոց ցեղասպանության պատմություն, Էրզրումի նահանգի հայության ճակատագիրը ցեղասպանության տարիներին, Էրզրումի նահանգի հայ բնաչության սոցիալ-տնտեսական վիճակը:

Էլ. փոստի հասցե՝ anna.kazaryan@genocide-museum.am

**Anna A. Kazaryan**, Junior researcher at the Department of the Armenian Genocide Source Studies, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – Armenian Question, history of the Armenian Genocide and the Fate of Armenians in Erzurum Province during the genocide; Socio-economic Situation of Armenians in Erzurum Province.

E-mail: anna.kazaryan@genocide-museum.am

**Анна А. Казарян**, младший научный сотрудник Отдела источниковедческих исследований Геноцида армян Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований – Армянский вопрос, история армянского геноцида, социально-экономическая ситуация и судьба армян Эрзурумской провинции во время Геноцида.

Эл. почта: anna.kazaryan@genocide-museum.am

# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

*Նարեկ Մ. Պողոսյան*
*«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան*

Հոդվածում անդրադարձ է կատարվում այն իրողությանը, որ ցեղասպանությունը պատմության ընթացքում մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը, սակայն անգամ մեր օրերում, երբ մարդկությունը տարբեր ուղղություններով մեծ առաջընթաց է գրանցել, ոչ միայն չի վերացել էթնիկ, կրոնական և ռասայական խմբերին ոչնչացնելու վտանգը, այլև նոր սպառնալիքներ են առաջ եկել:

Հոդվածում ցեղասպանության իրագործման արդի սպառնալիքների շարքում դիտարկվում են տարբեր երկրներում ու տարածաշրջաններում էթնիկ և կրոնական հակասությունների սրացումը, քաղաքական անկայունությունը, ապատեղեկատվությունը և հանրային ընկալումների վրա ներգործությունը, ապամարդկայնացումը և ատելության խոսքը, ծայրահեղական գաղափարախոսությունների առաջացումը և տարածումը, կլիմայի, շրջակա միջավայրի փոփոխությունը և ռեսուրսների սակավությունը, հարկադիր տեղահանությունները և փախստականների ճգնաժամերը, տնտեսական անհավասարությունը և մարգինալացումը, զենքերի տարածումը և հասարակության ռազմականացումը, կենսատեխնոլոգիաների զարգացումը, արհեստական բանականության կիրառումը, կիբերհարձակումները և տեղեկատվական մանիպուլյացիան: Բացի այդ՝ օրենքի գերակայության բացակայությունը, անպատժելիությունը, ցեղասպանության հայեցակարգի արժեզրկումն ու ժխտողականությունը նոր սպառնալիքներ են ստեղծում:

Ընդհանուր առմամբ նշված սպառնալիքները վերացնելու տեսանկյունից կարևոր է ցեղասպանության և այլ ոճրագործությունների կանխարգելման միջազգային օրակարգը: Այդ իսկ պատճառով առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում այս հարցում ՄԱԿ-ի անդամ առանձին պետությունների նախաձեռնողականությունը: Ուստի պատահական չէ, որ ցեղասպանության կանխարգելման նպատակով Հայաստանի կողմից իրականացվող կարևոր աշխատանքներից է ՄԱԿ-ի շրջանակում ցեղասպանության կանխարգելման բանաձևերի ներկայացումը:

**Բանալի բառեր**՝ ցեղասպանություն, էթնիկ, կրոնական և ռասայական խմբեր, արդի սպառնալիքներ, թիրախավորում, ատելություն, բռնություն, ցեղասպանության կանխարգելման միջազգային օրակարգ:

Հոդվածը ներկայացվել է՝ 19.04.2024: Ընդունվել է տպագրության 02.07.2024:
The article was submitted on 19.04.2024 and accepted for publication on 02.07.2024.
Статья поступила 19.04.2024 и была принята к публикации 02.07.2024.

**Ինչպես հղել**՝ Նարեկ Մ. Պողոսյան, «Ցեղասպանության իրագործման արդի սպառնալիքները», *Ցեղասպանագիտական հանդես* 12, no. 1 (2024), 76-102:
**How to cite:** Narek M. Poghosyan, “Modern Threats of Genocide,” *Ts’eghaspanagitakan handes* 12, no. 1 (2024): 76-102.
**Как ссылаться:** Нарек М. Погосян, “Современные угрозы геноцида,” *Цехаспанагитакан андес* 12, no. 1 (2024): 76-102.

https://doi.org/10.51442/jgs.0054

## Ներածություն

Ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված ծանր հանցագործություն է, որը բնորոշվում է նաև որպես հանցագործությունների հանցագործություն (crime of crimes)[1]: Պատահական չէ, որ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի նախաբանում հատուկ ընդգծվում է, որ բոլոր ժամանակաշրջաններում ցեղասպանությունը մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը[2]:

«Genocide» (ցեղասպանություն) եզրույթը ստեղծել է հրեական ծագմամբ իրավաբան Ռաֆայել Լեմկինը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, ով 1944 թ. լույս տեսած իր «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատության մեջ ընդգծում էր. «Ցեղասպանություն (genocide) ասելով նկատի ունենք ազգի կամ էթնիկ խմբի ոչնչացումը: Այս նոր բառը կազմվել է հունական «genos» (ռասա, ցեղ) և լատիներեն «cide» (սպանել) բառերից»[3]:

Լեմկինի կողմից ցեղասպանության հայեցակարգի մշակման գործում ճակատագրական նշանակություն են ունեցել հատկապես 20-րդ դարում տեղի ունեցած երկու խոշոր ցեղասպանությունները՝ Հայոց ցեղասպանությունը և Հոլոքոստը[4]: Նա հույս ուներ, որ ցեղասպանության հայեցակարգի ստեղծմամբ հնարավոր կլինի կանխել այդ հանցագործությունը և պատժել այն իրագործողներին: Այդուհանդերձ, 20-րդ դարի երկրորդ կեսում և 21-րդ դարի սկզբին ցեղասպանություն հանցագործությունն աշխարհի տարբեր մասերում կրկնվեց. տեղի ունեցան Կամբոջայի, Ռուանդայի, Բոսնիայի և Դարֆուրի ցեղասպանությունները:

Իսկ մեր օրերում, երբ մարդկությունը տարբեր ուղղություններով մեծ առաջընթաց է գրանցել, ոչ միայն չի վերացել էթնիկ, կրոնական և ռասայական խմբերին ոչնչացնելու վտանգը, այլև նոր սպառնալիքներ են առաջ եկել[5]:

## Ցեղասպանության իրագործման արդի սպառնալիքները

Աշխարհի տարբեր մասերում ականատես ենք դառնում բռնության, համակարգված ճնշումների և նպատակաուղղված սպանությունների, որոնք լուրջ մտահոգություններ

---

1 Robert Cryer, Håkan Friman, Darryl Robinson, Elizabeth Wilmshurst, *An Introduction to International Criminal Law and Procedure* (Cambridge: Cambridge University Press, 2010), 203.

2 "Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide," December 9, 1948, https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocity-crimes/Doc.1_Convention%20on%20the%20Prevention%20and%20Punishment%20of%20the%20Crime%20of%20Genocide.pdf, դիտվել է՝ 05.02.2024.

3 Raphael Lemkin, *Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation - Analysis of Government - Proposals for Redress* (Washington: Carnegie Endowment for International Peace, 1944), 79.

4 Մանրամասն տե՛ս Նարեկ Պողոսյան, *Հայոց ցեղասպանության խնդիրը Ռաֆայել Լեմկինի ուսումնասիրություններում* (Երևան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, 2020), 117:

5 Փոքրամասնությունների իրավունքների միջազգային խումբը ներկայացրել է «վտանգի տակ գտնվող ժողովուրդների» վարկանիշը ("The Peoples under Threat" ranking)՝ քարտեզի միջոցով նշելով այն երկրները, որոնցում փոքրամասնությունները ցեղասպանության և զանգվածային սպանությունների վտանգի տակ են (տե՛ս Minority Rights Group International, "Peoples under Threat," https://peoplesunderthreat.org/, դիտվել է՝ 05.02.2024):

են առաջացնում ցեղասպանության հնարավորության առումով: Ուստի առանցքային նշանակություն ունի այդ սպառնալիքների գնահատումը՝ ներկա պայմաններին համապատասխան դրանց արձագանքելու և ցեղասպանության իրագործումը կանխելու համար: Դա հնարավորություն է տալիս դիտարկելու որոշ երկրներում ցեղասպանության իրագործման նախազգուշական նշանների առկայությունը: Ըստ այդմ՝ առանձնացրել ենք դրանցից ամենահրատապները:

**Էթնիկ և կրոնական հակասությունների խորացումը**: Աշխարհի տարբեր մասերում էթնիկ և կրոնական հակասությունների խորացումը[6] շարունակում է հակամարտությունների ու բռնությունների հրահրման պատճառ մնալ: Այն հանգեցնում է բախումների, իսկ ծայրահեղ դեպքերում՝ նաև ցեղասպանության, երբ թիրախավորվում են ազգային, կրոնական և ռասայական կոնկրետ խմբեր: Օրինակ՝ էթնո-կրոնական հակամարտությունը Նիգերիայի հյուսիսում ապրող քրիստոնյա ու մուսուլման էթնիկ խմբերի միջև միտում ունի վերածվելու ցեղասպանության[7]: Եվ նույնիսկ դիտարկումներ կան, որ Նիգերիայի հյուսիսում ներկայումս լատենտ կամ քողարկված ցեղասպանական գործընթացներ են իրականացվում[8]:

**Քաղաքական անկայունությունը**, հատկապես թույլ ինստիտուտներով և բռնության պատմություն ունեցող երկրներում, կարող է ստեղծել ցեղասպանության համար անհրաժեշտ պայմաններ[9]: Դա կարող է լինել այն դեպքերից, երբ կառավարությունները կորցնում են վերահսկողությունը, բռնությունը տարածման հնարավորություն է ստանում, ինչի հետևանքով մեծանում է հավանականությունը, որ առանձին խոցելի էթնիկ և կրոնական խմբեր ուղղակիորեն կարող են կոնկրետ թիրախներ դառնալ: Դրանով է պայմանավորված, որ ցեղասպանագետ Բարբարա Հարֆը քաղաքական ցնցումները դիտարկում է որպես ցեղասպանության իրագործման նախապայման[10]:

Այսպես՝ 2021 թ. Չադի նախագահ Իդրիս Դեբիի հեռացումից հետո երկրում ստեղծված քաղաքական անկայունությունը մեծացրել է Չադի հյուսիսում ապրող մուսուլմանների, որոնք կազմում են բնակչության 53-58%-ը, և հարավում ապրող ու բնակչության 35-40%-ը կազմող քրիստոնյաների միջև լարվածությունը: Հատկապես

6 World Economic Forum, "Religious violence is on the rise. What can faith-based communities do about it?," February 25, 2019, https://www.weforum.org/agenda/2019/02/how-should-faith-communities-halt-the-rise-in-religious-violence/, դիտվել է՝ 05.02.2024.

7 Ngala Killian Chimtom, "Amid killings of Christians, experts warn Nigeria may risk 'religious war'," *Crux*, December 4, 2023, https://cruxnow.com/church-in-africa/2023/12/amid-killings-of-christians-experts-warn-nigeria-may-risk-religious-war; Ruth Gledhill, "Slaughter of Nigerian Christians is driven by religion, says report," *The Tablet*, July 4, 2023, https://www.thetablet.co.uk/news/17301/slaughter-of-nigerian-christians-is-driven-by-religion-says-report.

8 Grace O. Okoye, *Proclivity to Genocide: Northern Nigeria Ethno-Religious Conflict, 1966 to Present* (Lanham/New York: Lexington Books, 2014); Grace O. Okoye, *Ethno-Religious Conflict in Northern Nigeria: The Latency of Episodic Genocide*, Doctoral dissertation, Nova Southeastern University, 2013, https://nsuworks.nova.edu/cgi/viewcontent.cgi?article=1052&context=shss_dcar_etd, դիտվել է՝ 05.02.2024.

9 Benjamin Goldsmith, Dmitri Semenovich, Arcot Sowmya, "Political Instability and Genocide: Comparing Causes in Asia and the Pacific and Globally," in *Genocide and Mass Atrocities in Asia: Legacies and Prevention*, eds. Deborah Mayersen and Annie Pohlman (New York: Routledge, 2013), 136-157.

10 Barbara Harf, "No Lessons Learned from the Holocaust? Assessing Risks of Genocide and Political Mass Murder since 1955?," *The American Political Science Review* 97, no. 1 (2003): 62.

աճում է հարավի բնակիչների դժգոհությունը մուսուլմանական կառավարության գործողությունների և անվտանգության մարմինների գործադրած բռնաճնշումների կապակցությամբ: Քանի որ Չադում ապրում են 150 տարբեր էթնիկ և լեզվական խմբեր, նպաստավոր պայմաններ են ստեղծվել նաև էթնիկ հակամարտությունների թեժացման համար: Իսկ այդ ամենը կարող է հանգեցնել զանգվածային սպանությունների, մինչև անգամ ցեղասպանության[11]:

**Ապատեղեկատվությունը և հանրային ընկալումների վրա ներգործությունը** կարող են օգտագործվել ատելությունը բորբոքելու համար: Դա կարող է հեշտացնել խմբերի նկատմամբ բռնության արդարացումը՝ նպաստելով այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք հանգեցնում են ցեղասպանության[12]: Այս առումով բռնության քարոզի և ապատեղեկատվության գեներացման համար առավել նպաստավոր պայմաններ են ստեղծում հատկապես սոցցանցերը, որոնք ներկայումս դարձել են տեղեկատվության արագ տարածման հարթակներ[13]: Արդեն գրանցվել են դեպքեր, երբ սոցիալական ցանցերն օգտագործվել են ցեղասպանական նպատակներով, մասնավորապես 2016-2017 թթ. Մյանմարում զինծառայողները ֆեյսբուքյան հարթակը կիրառեցին որպես էթնիկ զտումների գործիք, և կեղծ էջերով մուսուլման ռոհինջաների նկատմամբ հակաքարոզչություն ծավալվեց[14]: Այդ գործընթացում ներգրավվել էին նաև Մյանմարում մի քանի պետական կառույցների ֆեյսբուքյան պաշտոնական էջեր: Անգամ ծայրահեղական բուդդայական վանականներին պատկանող էջերով հրապարակումներ արվեցին, որոնցում ռոհինջաները դիտվում էին որպես սպառնալիք Մյանմարի բուդդայական ինքնության համար: Այդ հրապարակումները դիտում էին միլիոնավոր մարդիկ, իսկ հազարավոր մարդիկ էլ հավանության էին արժանացնում դրանք[15]: «Amnesty International» միջազգային իրավապաշտպան կազմակերպությունն իր զեկույցում նշում է, որ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի ալգորիթմները խթանել են ռոհինջաներին թիրախավորող բովանդակության տարածումը[16]: Նույ-

---

11 Margaux Dandrifosse, “Genocide Warning: Chad (September 2021),” *Genocide Watch*, https://www.genocidewatch.com/single-post/genocide-watch-warning-chad-september-2021, դիտվել է՝ 25.09.2023; United States Holocaust Memorial Museum, “Increasing Instability and Mass Atrocity Risks in Chad,” https://www.ushmm.org/genocide-prevention/blog/increasing-instability-and-mass-atrocity-risks-in-chad, դիտվել է՝ 25.02.2024; Institute for Peace and Security Studies, “Peace & security report: Chad conflict insights,” 2021, 2, 9:

12 Anthony Hill, “How disinformation has led to genocides around the world,” *ABC Action News*, January 26, 2023, https://www.abcactionnews.com/news/local-news/how-disinformation-has-led-to-several-genocides-around-the-world, դիտվել է՝ 25.02.2024:

13 Kristina Hook, Ernesto Verdeja, “Social Media Misinformation and the Prevention of Political Instability and Mass Atrocities,” Stimson Center, https://www.stimson.org/2022/social-media-misinformation-and-the-prevention-of-political-instability-and-mass-atrocities/, դիտվել է՝ 25.02.2024:

14 Paul Mozur, “A Genocide Incited on Facebook, With Posts from Myanmar’s Military,” *New York Times*, October 15, 2018, https://www.nytimes.com/2018/10/15/technology/myanmar-facebook-genocide.html, դիտվել է՝ 08.02.2024:

15 United States Holocaust Memorial Museum, “Burma’s path to genocide,” https://exhibitions.ushmm.org/burmas-path-to-genocide/chapter-3/making-rohingya-valueless, դիտվել է՝ 08.02.2024:

16 Amnesty International, “Myanmar: The social atrocity: Meta and the right to remedy for the Rohingya,” September 29, 2022, https://www.amnesty.org/en/documents/asa16/5933/2022/en/, դիտվել է՝ 08.02.2024:

նիսկ «Ֆեյսբուքը» ընդունեց, որ դերակատարություն է ունեցել Մյանմարում ռոհինջա փոքրամասնության դեմ ցեղասպանական արշավի ժամանակ բռնություն հրահրելու գործում[17]:

**Ապամարդկայնացում և ատելության խոսք:** Ապամարդկայնացումը[18], ատելության խոսքը և թիրախավորման նպատակ հետապնդող քարոզչական արշավները, որոնք ուղղված են կոնկրետ խմբերի դեմ, կարող են հիմք ստեղծել բռնության և ցեղասպանության համար: Երբ մի խումբ ներկայացվում է որպես ի սկզբանե ստորադաս, վտանգավոր կամ սպառնալիք մյուսների համար, ավելի հեշտ են դառնում նրա նկատմամբ բռնության գործողությունների իրականացումն ու դրանց արդարացումը: Ներկայումս շատ դեպքերում քարոզչության և ատելության խոսքում թիրախավորվող խմբերը համեմատվում են վտանգավոր և զզվելի միջատների, հիվանդությունների ու կենդանիների հետ, որպեսզի ցույց տրվի, որ այդ խմբերի ներկայացուցիչները մարդկային հատկանիշներ չունեն: Այսպես՝ Ռուանդայում ցեղասպանության ժամանակ հութուները թութսիներին անվանում էին «խավարասերներ», «օձեր»[19], իսկ նացիստները հրեաներին բնորոշում էին որպես «վնասատուներ»[20]: Հայոց ցեղասպանության ճարտարապետներից Թալեաթն ու Էնվերն էլ հայերին համարում էին ուռուցք, որը պետք է «մաքրվեր» Օսմանյան կայսրության մարմնից[21]:

Արդեն 21-րդ դարում Սուդանում և Մյանմարում ցեղասպանություն իրագործողները զոհերին անվանում էին «շներ» և «կապիկներ»[22]: Ապամարդկայնացման դրսևորում է նաև այն, որ արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ Ալիևը հայերին «շներ» էր անվանում[23]: Իսկ «Նոր Ադրբեջան» կուսակցության 7-րդ համագումարի բացման խոսքում Ադրբեջանի նախագահը հայերին ներկայացնում էր որպես «հի-

---

17 Global Witness, “Facebook approves adverts containing hate speech inciting violence and genocide against the Rohingya,” March 20, 2022, https://www.bbc.com/news/world-asia-46105934, դիտվել է՝ 08.03.2023; “Facebook admits it was used to ‘incite offline violence’ in Myanmar,” *BBC*, November 6, 2018, https://www.bbc.com/news/world-asia-46105934:

18 Ապամարդկայնացման երևույթի մասին ավելի մանրամասն տե՛ս Սուրեն Մանուկյան, «Ապամարդկայնացման երևույթը ցեղասպանությունների իրականացման գործընթացում», *Ցեղասպանագիտական հանդես* 5, no. 2 (2017), 18-34:

19 Ben Doherty, “More than half a million people killed in 100 days: how the 1994 Rwanda genocide unfolded,” *The Guardian*, February 25, 2024, https://www.theguardian.com/australia-news/2024/feb/26/more-than-half-a-million-people-killed-in-100-days-how-the-1994-rwanda-genocide-unfolded-ntwnfb.

20 Dan Stone, “The Holocaust and ‘The Human’,” in *Hannah Arendt and the Uses of History Imperialism, Nation, Race, and Genocide*, eds. Richard H. King and Dan Stone (New York/Oxford: Berghahn Books, 2007), 240:

21 Elyse Semerdjian, *Remnants: Embodied Archives of the Armenian Genocide* (Stanford: Stanford University Press, 2023), 19, 230; Daisy Sindelar, “1915: The Crumbling Of An Empire, And The Massacre That Ensued,” *RFE/RL*, April 23, 2015, https://www.rferl.org/a/crumbling-ottoman-empire-and-armenian-massacres/26974721.html, դիտվել է՝ 07.02.2024:

22 Nour S. Kteily, Alexander P. Landry, “Dehumanization: trends, insights, and challenges,” *Trends in Cognitive Sciences* 26, no. 3 (2022): 222-240; Florence E. Enock and Harriet Over, “Animalistic slurs increase harm by changing perceptions of social desirability,” *Royal Society Open Science*, Vol. 10, no. 7 (2023), https://royalsocietypublishing.org/doi/10.1098/rsos.230203, դիտվել է՝ 08.02.2024:

23 “President Aliyev: Azerbaijani soldiers drive them away like dogs,” https://defence.az/en/news/146240/president-aliyev-azerbaijani-soldiers-drive-them-away-like-dogs, դիտվել է՝ 08.02.2024:

վանդ, որի մեջ ավելի վտանգավոր վիրուս է թափանցել, քան կորոնավիրուսը»[24]:

**Ծայրահեղական գաղափարախոսությունների առաջացումը և տարածումը**: Էթնիկ կամ կրոնական գերակայության վրա հիմնված գաղափարախոսությունները կարող են մեծացնել ցեղասպանության վտանգը, քանի որ դրանց միջոցով ապամարդկայնացվում են որոշ խմբեր, խթանվում է ատելությունը, և արդարացվում բռնությունը՝ որպես նպատակներին հասնելու միջոց: Այդ գաղափարախոսությունները նաև թույլ են տալիս զանգվածային սպանությունների իրագործման համար ստանալ հանրային աջակցություն և կոտրել այդ գործողությունների դեմ ուղղված հասարակական դիմադրությունը:

Մյուս կողմից էլ պատերազմները, տնտեսական ճգնաժամերը և ժամանակակից աշխարհին բնորոշ աշխարհաքաղաքական այլ տեղաշարժեր նպաստում են գաղափարախոսական փոփոխություններին[25], որոնք էլ պայմաններ են ստեղծում ծայրահեղական գաղափարախոսությունների զարգացման համար: Օրինակ՝ օգտվելով Սիրիայում ընթացող քաղաքացիական պատերազմից՝ դրանում ներգրավված արմատական և ծայրահեղական միավորները ստեղծեցին «Իսլամական պետություն» կոչվող ահաբեկչական կազմավորումը, որի գաղափարական կարևոր հիմնասյուներից էր վաղ իսլամի խալիֆայության վերականգնումը[26]: Այդ նպատակի իրագործման ճանապարհին «Իսլամական պետությունը» սպանեց և իր վերահսկողության տակ գտնվող տարածքներից դուրս մղեց մեծ թվով քրիստոնյաների և կրոնական այլ խմբերի, այդ թվում՝ շիա մահմեդականներին, որոնք չեն ընդունում սուննի իսլամի խիստ տարբերակը[27]: Ուշագրավ է, որ եզդիներն իրենց հավատքի համար, որը միավորում է զրադաշտական, քրիստոնեական, մանիքեական, հրեական և մահմեդական հավատալիքները, այս ահաբեկչական կազմակերպության կողմից դիտարկվում էին որպես սատանայապաշտներ, որոնց պետք էր ոչնչացնել[28]: 2014 թ. օգոստոսի 3-ին «Իսլամական պետությունը» հարձակում սկսեց Հյուսիսային Իրաքի Սինջար շրջանի դեմ և իրագործեց եզդիների ցեղասպանությունը, որի հետևանքով ավելի քան 5 000 մարդ սպանվեց, իսկ ավելի քան 400 հազար մարդ տեղահանվեց[29]:

24 “Opening speech by Ilham Aliyev at the 7th Congress of New Azerbaijan Party,” 05 March 2021, https://president.az/en/articles/view/50805, դիտվել է՝ 11.11.2023:

25 Jonathan Leader Maynard, *Ideology and Mass Killing: The Radicalized Security Politics of Genocides and Deadly Atrocities* (Oxford: Oxford University Press, 2022), 89.

26 Zack Beauchamp, “ISIS wants to establish a caliphate,” *Vox*, November 17, 2015, https://www.vox.com/2018/11/20/17995834/isis-wants-to-establish-a-caliphate, դիտվել է՝ 10.02.2024:

27 “ISIS threatens to conquer the Vatican, ‘break the crosses of the infidels’,” *Jerusalem Post*, October 14, 2014, https://www.jpost.com/middle-east/islamic-state-flag-flies-over-vatican-in-latest-issue-of-dabiq-magazine-378875, դիտվել է՝ 10.02.2024:

28 Bridey Heing, *The Persecution of Christians and Religious Minorities by ISIS* (New York: Enslow Pub Inc, 2017), 22; “Germany recognises Yazidi massacre by ISIL as ‘genocide’,” *Al Jazeera*, January 19, 2023, https://www.aljazeera.com/news/2023/1/19/germany-recognises-yazidi-massacre-as-genocide; Raya Jalabi, “Who are the Yazidis and why is Isis hunting them?,” *The Guardian*, August 11, 2014, https://www.theguardian.com/world/2014/aug/07/who-yazidi-isis-iraq-religion-ethnicity-mountains.

29 Amnesty International, “Germany/Iraq: World’s first judgment on the crime of genocide against the Yazidis,” November 30, 2021, https://www.amnesty.org/en/latest/news/2021/11/germany-iraq-worlds-first-judgment-on-crime-of-genocide-against-the-yazidis/, դիտվել է՝ 10.02.2024:

**Կլիմայի, շրջակա միջավայրի փոփոխությունը և ռեսուրսների սակավությունը**: Քանի որ կլիմայի փոփոխության հետևանքներն ավելի ցայտուն են, հավանական է դառնում մրցակցության ուժեղացումը այնպիսի ռեսուրսների համար, ինչպիսիք են ջուրը և սնունդը: Սա կարող է սրել խմբերի միջև եղած լարվածությունը և հանգեցնել հակամարտության ու բռնության: Հակամարտությունների պատճառ կարող են դառնալ տարերային աղետները, գլոբալ տաքացումը, անապատացումը և օվկիանոսի ջրի մակարդակի բարձրացումը[30]: Պատահական չէ, որ Մարշալյան կղզիների արտաքին գործերի նախարար Թոնի դե Բրումը ծովի մակարդակի բարձրացման համար խոցելի կղզի պետությունների բնակիչների բռնի գաղթի հեռանկարը համեմատել է ցեղասպանության հետ[31]: Իսկ մի շարք առաջատար ցեղասպանագետների ու իրավապաշտպանների խումբը 2021 թ. հայտարարություն է տարածել՝ նախազգուշացնելով, որ միլիարդավոր մարդիկ կարող են մահանալ կլիմայական փոփոխության և էկոլոգիական աղետի հետևանքով: Ընդ որում, էկոցիդը (էկոլոգիական հանցագործությունները) և ցեղասպանությունը նրանք դիտարկում են փոխկապակցվածության մեջ[32]:

Սուդանում Դարֆուրի հակամարտությունը հաճախ նշվում է որպես օրինակ, որում դեր է խաղացել կլիմայի փոփոխությունը: Տարածաշրջանն ապրել է երկարատև երաշտ և անապատացում, ինչը հանգեցրել է անասնապահական համայնքների միջև այնպիսի սակավ ռեսուրսների համար մրցակցության, ինչպիսիք են ջուրը և վարելահողը: Այդ մրցակցությունը, զուգորդվելով քաղաքական և էթնիկական բաժանումներով, վերաճել է երկարատև հակամարտության՝ համատարած բռնություններով և զանգվածային վայրագություններով[33]:

Էթնիկ, կրոնական և ռասայական խմբի ոչնչացմանը կարող է հանգեցնել նաև մարդկային գործունեության հետևանքով այդ խմբի կենսագործունեության տարածքի շրջակա միջավայրի փոփոխությունը: Օրինակ՝ Բրազիլիայի նախագահ Լուիս Ինասիո Լուլա դա Սիլվան մեղադրում է իր նախորդին՝ Ժաիր Բոլսոնարոյին, Ամազոնի բնիկ յանոմամի ժողովրդի դեմ ցեղասպանություն իրականացնելու մեջ: Ըստ Սիլվայի՝ նախկին նախագահը թույլ է տվել ոսկու արդյունահանմամբ զբաղվել այն տարածքներում, որտեղ հանքարդյունաբերությունն արգելված է: Որպես արդյունք՝ այդ տարածքների գետերը թունավորվել են սնդիկով, իսկ անտառները՝ ոչնչացվել՝ դառնալով հումանիտար աղետի պատճառ, քանի որ դրանց հետ են կապված յանոմամի ժողովրդի սննդի աղբյուրները[34]: Բրազիլիայի արդարադատության և հասարակական անվտան-

---

30 Jürgen Zimmerer, “Climate change, environmental violence and genocide,” *The International Journal of Human Rights* 18, no. 3 (2014): 265-280.

31 Alex Pashley, “Climate change migration is ‘genocide’, says Marshall Islands minister,” https://www.climatechangenews.com/2015/10/05/climate-change-migration-is-genocide-says-marshall-islands-minister/, դիտվել է՝ 10.02.2024:

32 Mark Levene and Taner Akçam, “The Climate Emergency: A Statement from Genocide Scholars on the Necessity for a Paradigm Shift,” *Journal of Genocide Research* 23, no. 2 (2021): 325-328.

33 Mohamed Osman Akasha, *Darfur: A Tragedy of Climate Change* (Hamburg: Anchor Academic Publishing, 2013), 84.

34 Sanya Mansoor, “Why Lula Accused Bolsonaro of ‘Genocide’ Against Brazil’s Yanomami People,” *Time*

գության նախարար Ֆլավիո Դինոն հանձնարարել է ոստիկանական հետաքննություն անցկացնել յանոմամի ժողովրդի հնարավոր ցեղասպանության առնչությամբ[35]:

Մյուս կողմից էլ Բրազիլիայի բնիկների կազմակերպությունը խնդրել է Միջազգային քրեական դատարանին հետաքննություն սկսել Բրազիլիայի նախագահ Ժաիր Բոլսոնարոյի դեմ «ցեղասպանության» և «էկոցիդի» համար՝ մեղադրելով նրան բնիկ ժողովուրդներին հալածելու և նրանց հայրենիքները ոչնչացնելու մեջ[36]: Տեղաբնիկ հնդկացիների առաջնորդներն ու նրանց համախոհները հայտարարում են, որ Բրազիլիայի կառավարությունը չի կարողացել վերահսկել բնիկների արգելոցներում ապօրինի հանքարդյունաբերությունը և անտառահատումները: Նրանց պնդմամբ՝ վերահսկողության բացակայության հետևանքով անտառահատումների ծավալն արևադարձային անտառներում մեծացել է, ինչը հանգեցրել է այդ տարածքներ մուտք գործողների և տեղական ցեղային խմբերի միջև դաժան բախումների[37]:

**Զինված հակամարտություններ**: Ձգձգվող զինված հակամարտությունները կարող են ստեղծել քաոսի, անօրինականության և համատարած բռնության մթնոլորտ, ինչը մեծացնում է զանգվածային վայրագությունների և ցեղասպանության վտանգը: Արդյունավետ կառավարման և անվտանգության երաշխիքների բացակայության դեպքում տարբեր խմբեր կարող են օգտագործել իրավիճակը՝ վերացնելու ենթադրյալ հակառակորդներին, ինչը կարող է տեղի ունենալ առանձին խմբերի թիրախավորմամբ:

1994 թ. տեղի ունեցած Ռուանդայի ցեղասպանությունը այն օրինակներից է, որոնք ցույց են տալիս, թե ինչպես երկարատև հակամարտությունը, որը բնութագրվում է արմատացած էթնիկ լարվածությամբ և քաղաքական անկայունությամբ, կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել ցեղասպանական գործողությունների պլանավորման և իրականացման համար: Ռուանդայում ծավալված հակամարտության արմատները կարելի է գտնել գաղութատիրության ժամանակաշրջանում, երբ այն Բելգիայի տիրապետության տակ էր: Գաղութային իշխանություններն ամրապնդեցին գոյություն ունեցող սոցիալական բաժանումները և ստեղծեցին մի համակարգ, որն առավելություն էր տալիս թութսի փոքրամասնությանը հութու մեծամասնության նկատմամբ: Բայց երբ թութսիներն օգտվեցին այդ իրավիճակից ու սկսեցին ոչ միայն իրենց գերակա համարել հութուների նկատմամբ, այլև հավասարեցնել բելգիացիներին, գաղութարար բելգիացիները փոխեցին իրենց քաղաքականությունը հօգուտ հութուների[38]: Գաղու-

---

*Magazine*, January 23, 2023, https://time.com/6249369/lula-accuses-bolsonaro-genocide-yanomami/; "New report reveals shocking health crisis for Brazil's Yanomami tribe", https://www.survivalinternational.org/news/13599, դիտվել է՝ 10.02.2024:

35 "Brazil opens investigation into 'genocide' of Yanomami Indigenous peoples," *France 24*, January 24, 2023, https://www.france24.com/en/americas/20230124-brazil-opens-investigation-on-genocide-of-yanomami-indigenous-peoples.

36 "Brazil Indigenous group sues Bolsonaro at ICC for 'genocide'," *Al Jazeera*, August 9, 2021, https://www.aljazeera.com/news/2021/8/9/brazil-indigenous-group-sues-bolsonaro-at-icc-for-genocide.

37 "Photos: Indigenous march in Brazil to demand land protection," *Al Jazeera*, April 7, 2022, https://www.aljazeera.com/gallery/2022/4/7/photos-indigenous-march-in-brazil-demands-land-protection.

38 Charles Villa-Vicencio, Paul Nantulya, Tyrone Savage, *Building Nations: Transitional Justice in the*

թարարների «Բաժանի՛ր և տիրի՛ր» քաղաքականությունը սրեց էթնիկ լարվածությունը, որն էլ հետագայում վերաճեց ցեղասպանության: 1994 թ. ապրիլին Ռուանդայի նախագահի սպանությունը, ով հութու էթնիկ խմբից էր, կայծ դարձավ ցեղասպանության մեկնարկի համար: Մոտ 100 օրվա ընթացքում ծայրահեղական հութուները համակարգված ձևով թիրախավորվեցին, և սպանվեցին շուրջ 800 000 թութսիներ ու չափավոր հութուներ[39]:

**Հարկադիր տեղահանություններ և փախստականների ճգնաժամեր**: Հակամարտությունների, հալածանքների կամ բնական աղետների պատճառով բնակչության զանգվածային տեղահանումը կարող է հանգեցնել լարվածության: Տեղահանված բնակչությունը հաճախ ավելի է ենթակա թիրախային բռնության և կարող է բախվել զգալի մարտահրավերների՝ կապված հիմնական կարիքների բավարարման, անվտանգության և աջակցություն ստանալու հետ: Օրինակ՝ 1990-ականներին բալկանյան հակամարտությունները դարձան բռնի տեղահանությունների և փախստականների ճգնաժամերի պատճառ[40]՝ նպաստելով էթնիկ լարվածության սրմանը, ինչն էլ հանգեցրեց համատարած բռնությունների և ցեղասպանության, ինչպիսին Սրեբրենիցայի կոտորածն էր 1995 թ.[41]:

Հարկադիր տեղահանությունները և փախստականների ճգնաժամերը ժամանակակից աշխարհի ամենալուրջ մարտահրավերներից են: Սիրիայում, Եմենում, Հարավային Սուդանում, Մյանմարում, Ուկրաինայում և այլ երկրներում ծավալվող հակամարտությունները շարունակում են մեծ թվով բնակիչների ներքին տեղահանությունների և փախուստի պատճառ դառնալ: Իսկ Արցախն ուղղակի հայաթափվեց Ադրբեջանի հարձակմանը հաջորդած բռնի տեղահանության հետևանքով: Միջազգային քրեական դատարանի նախկին գլխավոր դատախազ Լուիս Մորենո Օկամպոն ընդգծում է, որ Արցախում տեղի ունեցածը ցեղասպանություն է՝ համաձայն «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի «բ» կետի (խմբի անդամին մարմնական կամ հոգեկան ծանր վնաս հասցնելը)[42]: Պետք է նշել, որ նախքան Արցախից հայերի բռնագաղթը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ ցեղասպանության կանխարգելման հարցերով նախկին հատուկ խորհրդական, Վաշինգտոնի ամերիկյան համալսարանի մարդու իրավունքների պրոֆեսոր Խուան Մենդեսը կանխորոշել էր ցեղասպանության հավանականությունը՝ նշելով, որ Արցախում բնակվող հայերը կարող են «ֆիզիկական կամ հոգեկան լուրջ վնասներ

*African Great Lakes Region* (Cape Town: Institute Justice and Reconciliation, 2005), 73-74.

39 “Rwanda genocide: 100 days of slaughter,” *BBC*, April 4, 2019, https://www.bbc.com/news/world-africa-26875506.

40 International Crisis Group (ICG), “Refugees and Internally Displaced Persons in B-H,” 30 April 1997, https://www.refworld.org/docid/3ae6a6d20.html, դիտվել է՝ 10.02.2024:

41 Lara J. Nettelfield, Sarah E. Wagner, *Srebrenica in the Aftermath of Genocide* (New York: University of Cambridge, 2014), 418 էջ, Hanna Duggal, “Infographic: 30 years since the Bosnian War,” *Al Jazeera*, https://www.aljazeera.com/news/2022/4/6/infographic-30-years-since-the-bosnia-war-interactive.

42 «Ադրբեջանի ագրեսիայից հետո Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածը ցեղասպանության տեսակ է. Լուիս Մորենո Օկամպոյի հարցազրույցը», https://armenpress.am/arm/news/1123809.html, դիտվել է՝ 10.02.2024:

կրել» («Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի «բ» կետ)[43]: Սակայն միջազգային հանրությունն այդպես էլ գործնական քայլեր չձեռնարկեց Արցախում ցեղասպանական գործընթացը կանխելու համար:

**Տնտեսական անհավասարություն և մարգինալացում**: Տնտեսական զգալի անհավասարություններով և մարգինալացված խմբերով հասարակությունները հակված են լարվածության և հակամարտությունների: Երբ մարդիկ իրենց նկատմամբ զգում են խտրականության դրսևորում կամ հնարավորությունների սահմանափակում, ունենում են օտարացման զգացում, կարող է դժգոհություն առաջանալ, որն էլ կարող է հանգեցնել բռնության, այդ թվում՝ ցեղասպանական գործողությունների:

Տնտեսական բևեռացվածությունը հաճախ առաջ է բերում հակամարտություններ՝ կապված սահմանափակ ռեսուրսների հետ, ինչպիսիք են հողը, ջուրը և աշխատանքի հնարավորությունները: Օրինակ՝ 2000-ական թթ. Դարֆուրում (Սուդան) տեղի ունեցած ցեղասպանությունը պայմանավորված էր նաև քոչվոր արաբ հովիվների և նստակյաց աֆրիկացի ֆերմերների՝ հիմնականում ֆուր, մասալիտ և զագավա էթնիկ խմբերի միջև ռեսուրսների, այդ թվում՝ հողի, արոտավայրերի և ջրի համար պայքարով: Իսկ կառավարության կողմից աֆրիկյան էթնիկ խմբերի մարգինալացումը սրեց այդ լարվածությունը և նպաստեց բռնության խորացմանը[44]:

Տնտեսական նպատակներով նոր ռեսուրսներ ձեռք բերելու պայքարը ևս կարող է ցեղասպանության կամ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վտանգ ստեղծել: Մի շարք իրավունքի մասնագետներ ու ցեղասպանագետներ Իսրայելի՝ Գազայի հատվածում իրականացրած ռազմական գործողություններին զուգահեռ ահազանգեցին ցեղասպանության վտանգի մասին[45]: Միևնույն ժամանակ մի շարք փորձագետներ վերլուծություններ ներկայացրին, որ Իսրայելի այդ գործողությունները Գազայի հատվածի նավթի ու գազի պաշարներին տիրանալու նպատակ են հետապնդում[46]: Խնդիրն այն է, որ 1999 թ. «British Gas» առաջատար էներգետիկական ընկերությունը բնական գազ հայտնաբերեց Գազայի ծովային հանքավայրերում՝ Գա-

43 «ԼՂ հայերը մոտ ապագայում կարող են լուրջ ֆիզիկական կամ հոգեկան վնասներ կրել. Խուան Մենդես», https://armenpress.am/arm/news/1118120/, դիտվել է՝ 10.02.2024:

44 Ola Olsson, Eyerusalem Siba, “Ethnic cleansing or resource struggle in Darfur? An empirical analysis,” *Journal of Development Economics* 103, (2013): 299-312.

45 “UN experts point to evidence of ‘genocidal incitement’ against Palestinians,” *Reuters*, November 16, 2023, https://www.reuters.com/world/middle-east/un-experts-point-evidence-genocidal-incitement-against-palestinians-2023-11-16/.

46 Yessenia Funes, “This Genocide Is About Oil,” *Atmos*, November 29, 2023, https://atmos.earth/this-genocide-is-about-oil/; “Israel’s “ultimate objective” is to confiscate Gaza’s multi-billion-dollar gas resources: expert,” *Tehran Times*, November 20, 2023, https://www.tehrantimes.com/news/491623/Israel-s-ultimate-objective-is-to-confiscate-Gaza-s-multi-billion-dollar; Seyed Hossein Mousavian, “Israel-Palestine war: Israel wants to seize Gaza’s multibillion dollar gas field,” *Middle East Eye*, November 15, 2023, https://www.middleeasteye.net/opinion/israel-palestine-war-geopolitics-gaza-multibillion-dollar-gas-field; Thomas Fazi, “Who will win Israel’s oil and gas war?,” *UnHerd*, December 5, 2023, https://unherd.com/2023/12/who-will-win-israels-oil-and-gas-war/; Amélie Zaccour, “Gas at stake in Gaza? Why this theory doesn’t hold true,” *L’Orient Today*, 16 November 2023, https://today.lorientlejour.com/article/1357621/gas-at-stake-in-gaza-why-this-theory-doesnt-hold-true.html.

զայի ափից 20 ծովային մղոն հեռավորության վրա: Գնահատվում է, որ հանքավայրը պարունակում է 1 տրիլիոն խորանարդ ֆուտ գազ: 2007 թ., երբ Համասը հաղթեց Գազայի հատվածում անցկացված ընտրություններում, Իսրայելը ռազմականացված ծովային շրջափակում սահմանեց՝ այդպիսով անհնարին դարձնելով պաղեստինցիների մուտքը գազի հանքավայր: Իսկ 2008 թ. իր ինքնիշխանությունը հռչակեց Գազայի ծովային տարածքում[47]: Այս տարվա հոկտեմբերի 29-ին էլ հայտարարեց, որ վեց ընկերությունների, այդ թվում՝ «British Petroleum»-ին և իտալական էներգետիկ հսկային՝ «Eni»-ին, 12 լիցենզիա է տրամադրել օֆշորային բնական գազի հանքավայրերի ուսումնասիրման համար[48]:

Ցեղասպանության ու էթնիկ զտումների միտումով կարող են իրականացվել տնտեսական շրջափակումներ, որոնք հանգեցնում են առաջին անհրաժեշտության ապրանքների՝ սննդի, դեղորայքի, վառելիքի և այլ պաշարների սպառման և դառնում տառապանքների ու սովի պատճառ: Ամիսներ շարունակ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի փակումը և Արցախի հաղորդակցության ուղիների շրջափակումը ճանապարհ հարթեցին էթնիկ զտումների և ցեղասպանության իրագործման համար[49]: 2023 թ. օգոստոսի 7-ին Լուիս Մորենո Օկամպոն ներկայացրեց «Ցեղասպանություն հայերի դեմ 2023 թվականին» խորագրով փորձագիտական կարծիքը, որում նշում էր, որ սովը ցեղասպանության անտեսանելի գործիքն է: Նա ընդգծում էր սովի միջոցով Արցախում շարունակվող ցեղասպանությունը կանխելու անհրաժեշտությունը[50]: Իսկ արդեն Լեռնային Ղարաբաղի ցեղասպանության մասին երկրորդ զեկույցում Օկամպոն ընդգծում էր, որ Արցախի երեք նախկին նախագահների և հինգ այլ ղեկավարների գերությունը ևս ցեղասպանության մի մասն է և ուղերձ նրանց համայնքին, այն է՝ «եթե վերադառնաք Լեռնային Ղարաբաղ, սովամահ կլինեք, կբանտարկվեք կամ կսպանվեք»[51]:

Իսրայելի կողմից Գազայի հատվածի հաղորդակցության ուղիների շրջափակումը

---

47 Betsey Piette, "Behind Israel's 'end game' for Gaza: Theft of offshore gas reserve," *Workers World*, November 14, 2023, https://www.workers.org/2023/11/74864/.

48 Ari Rabinovitch and Steven Scheer, "Israel awards gas exploration licences to Eni, BP and four others", *Reuters*, October 30, 2023, https://www.reuters.com/business/energy/israel-awards-gas-exploration-licences-eni-bp-four-others-2023-10-29/.

49 Nathaniel Hill, "Genocide Emergency: Azerbaijan's Blockade of Artsakh," *Genocide Watch*, February 24, 2023, https://www.genocidewatch.com/single-post/genocide-emergency-azerbaijan-s-blockade-of-artsakh, դիտվել է՝ 12.02.2024; "International Association of Genocide Scholars Executive and Advisory Boards: Statement Condemning the Azerbaijani Blockade of the Artsakh (Nagorno-Karabakh)," February 1, 2023, https://genocidescholars.org/wp-content/uploads/2023/02/IAGS-EB-AB-Statement-on-Azeri-Blockade-of-Artsakh.pdf, դիտվել է՝ 11.02.2024; "IAGS Resolution on Nagorno-Karabakh," September 2, 2024, դիտվել է՝ 03.10.2024; Edita G. Gzoyan, Svetah A. Chakhmakhchyan, Edgar S. Meyroyan, "Ethnic Cleansing In Artsakh (Nagorno-Karabakh): Issues of Definition and Criminal Responsibility" *International Journal of Armenian Genocide Studies* 8, vol. 2 (2023): 56–85:

50 Luis Moreno Ocampo, "Genocide against Armenians in 2023," New York, August 7, 2023, https://luismorenoocampo.com/wp-content/uploads/2023/08/Armenia-Report-Expert-Opinion.pdf?utm_source=Web&utm_medium=Landing&utm_campaign=Downloads, դիտվել է՝ 01.03.2024:

51 Luis Moreno Ocampo, ""Current genocides and the consistent international practice to deny them." Summary of the case of Nagorno-Karabakh," https://luismorenoocampo.com/wp-content/uploads/2023/12/REPORT-USP-Innovation-on-Global-Order.-Nagorno-Karabakh-case.pdf, դիտվել է՝ 01.12.2023:

նույնպես դիտարկվում է որպես ցեղասպանության տանող գործընթաց: Իսրայել-Համաս պատերազմի համատեքստում Լուիս Մորենո Օկամպոն նշում է, որ Գազայի շրջափակումը ևս կարող է ցեղասպանության տանել՝ համաձայն «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի «գ» կետի, ինչը նշանակում է, որ պայմաններ են ստեղծվում խմբին ոչնչացնելու համար[52]:

**Զենքերի տարածում և հասարակության ռազմականացում**: Մեծածավալ զենք-զինամթերքի առկայությունը և ռազմականացման մշակույթը կարող են սաստկացնել բռնությունը և հեշտացնել խմբերի համար զանգվածային սպանություններ իրականացնելու գործընթացը: Զենքի առկայությունը և մատչելիությունը կարող են էապես ազդել հակամարտությունների ժամանակ բռնության մասշտաբի և ուժգնության վրա: 1994 թ. Ռուանդայում ցեղասպանությունն իրականացվեց հասարակության խիստ ռազմականացված լինելու պայմաններում, որտեղ զենքերը լայնորեն տարածված էին[53]: Զենքի առկայությունը նպաստեց զինված խմբավորումների և քաղաքացիական անձանց արագ մոբիլիզացմանը՝ թութսի բնակչության շրջանում զանգվածային սպանություններ իրականացնելու համար: Իսկ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում 1996 թվականից առ այսօր ծավալվող հակամարտություններում զենքի լայն հասանելիությունը նպաստել է վայրագությունների իրականացմանը, ներառյալ էթնիկ խմբերի և քաղաքացիական անձանց նկատմամբ նպատակաուղղված բռնությունները[54]: Դրանցով պայմանավորված՝ ցեղասպանության կանխարգելման հարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ խորհրդական Ալիս Վաիրիմու Նդերիտուն ընդգծում էր, որ էթնիկ բռնությունները, զանգվածային սպանությունները և ավերածությունները կարող են Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը ներքաշել ցեղասպանության մեջ[55]:

Լուրջ խնդիր կարող է լինել նաև 3D տպագրության տեխնոլոգիայի կիրառումը զենքերի տպագրության համար, ինչի հետևանքով զենքերն ավելի հասանելի կդառնան ծայրահեղական խմբավորումների համար: Նման զենքերի արտադրությունը կարող է շատ էժան ու համատարած լինել, քանի որ դրանք կարող են տպագրվել անգամ պլաստիկից[56]:

---

52 Adam Taylor, “Why the Israel-Gaza war represents a broader crisis for global justice,” *The Washington Post*, October 20, 2023, https://www.washingtonpost.com/world/2023/10/20/israel-hamas-war-crimes-gaza-justice-genocide-international-criminal-court/.

53 Stephen D. Goose and Frank Smyth, “Arming Genocide in Rwanda: The High Cost of Small Arms Transfers,” *Foreign Affairs*, September/October 1994, https://www.foreignaffairs.com/articles/rwanda/1994-09-01/arming-genocide-rwanda-high-cost-small-arms-transfers; Amnesty International, “Arming the Perpetrators of the Genocide,” 1995, https://www.amnesty.org/en/wp-content/uploads/2021/06/afr020141995en.pdf, դիտվել է՝ 01.03.2023:

54 The U.S. Committee for Refugees and Immigrants, “The Crisis in the Democratic Republic of the Congo,” November 30, 2020, 8-11, https://refugees.org/wp-content/uploads/2020/12/USCRI-Backgrounder_DRC.pdf, դիտվել է՝ 12.04.2024; Center for Preventive Action, “Conflict in the Democratic Republic of Congo,” *Council on Foreign Relations*, December 18, 2023, https://www.cfr.org/global-conflict-tracker/conflict/violence-democratic-republic-congo, դիտվել է՝ 02.04.2024:

55 Moise M. Bahati, “Congo-Kinshasa: Risk Factors for Genocide Visible in DR Congo, Says UN Advisor,” *AllAfrica*, 5 July, 2023, https://allafrica.com/stories/202307060089.html, դիտվել է՝ 12.04.2024:

56 Larry Greenemeier, “Print, Aim and Shoot: What Does a Plastic Handgun Mean for the Future of

Այսպես՝ 2019 թվականին նեոնացիստ Ստեֆան Բալիետը հարձակում գործեց Գերմանիայի Հալլե քաղաքի սինագոգի վրա՝ դրա մոտակայքում սպանելով երկու մարդու[57]: Գերմանացի նեոնացիստն օգտագործել էր 3D տպագրության միջոցով ստեղծված բաղադրատարրերով զենքեր: Ընդ որում, նա հարձակումից առաջ նշել էր, որ նման զենքերի արտադրման համար անհրաժեշտ են ընդամենը հանգստյան օրեր և 50 դոլար նյութերի համար[58]: Իսկ 2023 թ. հոկտեմբերին էլ Ֆինլանդիայում ձերբակալվեցին ֆինն նեոնացիստներ, որոնք 3D տպիչի կիրառմամբ արտադրել էին կիսաավտոմատ զենքեր՝ նախապատրաստելով հարձակումներ ներգաղթյալների, կարևոր ենթակառուցվածքների և իրենց ենթադրյալ քաղաքական հակառակորդների վրա[59]:

Մյուս կողմից՝ 3D տպագրության ընձեռած հնարավորությունների չարաշահումը կարող է պայմաններ ստեղծել աշխարհում սպառազինության վերահսկման գոյություն ունեցող որոշ մեխանիզմների շրջանցման համար: Ավելին՝ հետազոտողները մտավախություն ունեն, որ 3D տպագրությունը մի օր կարող է օգտագործվել նաև զանգվածային ոչնչացման զենք ստեղծելու համար[60]:

Տեխնոլոգիական առաջընթացի դրսևորումները, ինչպիսիք են **նորարարական սպառազինությունը և հսկողության հնարավորությունները**, կարող են մեծացնել հակամարտությունների կործանարար ուժը և նպաստել նպատակային բռնությանը հատուկ խմբերի նկատմամբ[61]: Տեխնոլոգիաների չարաշահումը կարող է պայմաններ ստեղծել հանցագործների համար՝ ավելի մեծ արդյունավետությամբ և մասշտաբով իրականացնելու զանգվածային սպանություններ:

**Կենսատեխնոլոգիաների զարգացումը** ոչ միայն խոստանում է նշանակալից օգուտներ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բժշկությունը, գյուղատնտեսությունը և շրջակա միջավայրի պահպանությունը, այլև էթնիկ և անվտանգային սպառնալիքներ է ստեղծում, որոնք կարող են հանգեցնել այնպիսի գործողությունների իրականացման, ինչպիսին մարդկային առանձին խմբերի թիրախավորումն ու ցեղասպանությունն են:

3-D Printing?," *Scientific American*, May 10, 2013, https://www.scientificamerican.com/article/3d-printing-manufacturing-plastic-gun/.

57 Chris Baynes, "Neo-Nazi admits deadly Germany synagogue attack," *The Independent*, October 11, 2019, https://www.independent.co.uk/news/world/europe/germany-shooting-synagogue-attack-latest-who-stephan-balliet-deaths-a9151776.html.

58 Lizzie Dearden, "Use of 3D printed guns in German synagogue shooting must act as warning to security services, experts say," *The Independent*, October 11, 2019, https://www.independent.co.uk/news/world/europe/3d-gun-print-germany-synagogue-shooting-stephan-balliet-neo-nazi-a9152746.html.

59 "This article is more than 2 months old Finnish neo-Nazis used 3D printer to make guns in preparation for 'race war'," *The Guardian*, October 31, 2023, https://www.theguardian.com/world/2023/oct/31/finland-neo-nazis-convicted-crimes-with-terrorist-intent-3d-printer-guns.

60 Matthew Gault, "3-D Printers Could Help Spread Weapons of Mass Destruction," *Scientific American*, September 10, 2019, https://www.scientificamerican.com/article/3-d-printers-could-help-spread-weapons-of-mass-destruction/.

61 Federica D'Alessandra, Ross James Gildea, "Technological Change and the UN Framework of Analysis for Atrocity Crimes," https://www.stimson.org/2022/technological-change-and-the-un-framework-of-analysis-for-atrocity-crimes/, դիտվել է՝ 02.03.2024:

Օրինակ՝ 18-րդ դարում Հյուսիսային Ամերիկայի գաղութարարների պատերազմը բնիկ ամերիկացիների դեմ հաճախ աչքի էր ընկնում հատուկ դաժան մեթոդներով: Այդ մեթոդներից մեկն էլ կենսաբանական ուղղվածություն ուներ, երբ բնական ծաղիկ հիվանդությամբ վարակված վերմակներ ու ծածկոցներ էին նվիրում հնդկացիներին[62]: Ենթադրվում է, որ Ավստրալիայում ևս բնիկներից ազատվելու համար բրիտանացիները տարածել են այդ հիվանդությունը[63]:

1967 թ. Բրազիլիայի հանրային դատախազ Ջադեր դե Ֆիգեյրեդո Կորեյան ներկայացրեց զեկույց, որը վերաբերում էր երկրում բռնապետական համակարգի գործառության ժամանակ տեղի ունեցած իրադարձություններին: Յոթ հազար էջից բաղկացած զեկույցը գաղտնի պահվեց ավելի քան քառասուն տարի, որից հետո դրա լուսաբանումը մեծ աղմուկ առաջացրեց, քանի որ դրանում ներկայացված էին փաստեր ցեղասպանական գործողությունների մասին:

Փաստաթղթերն ուսումնասիրում էր Ազգային ճշմարտության հանձնաժողովը, որին հանձնարարված էր հետաքննել մարդու իրավունքների խախտումները, որոնք գրանցվել էին 1947-1988 թթ.: Հանձնաժողովը եկավ այն եզրահանգման, որ բնիկների առանձին համայնքներ, ինչպիսիք են մարանյաոյի ցեղերը, ամբողջությամբ ոչնչացվել են: Ֆիգեյրեդոն զեկույցում մանրամասնում էր, թե ինչպես են պաշտոնյաներն ու հողատերերը ծաղիկ հիվանդության հարուցիչներ ներմուծել մեկուսացված գյուղեր և բնիկներին նվիրաբերել ստրիխնինով[64] խառնված շաքար[65]:

Պարզ է, որ ներկայումս գիտական զարգացման պայմաններում կենսատեխնոլոգիական ձեռքբերումները կարող են չարաշահվել խիստ մահացու և վարակ տարածող կենսաբանական զենքեր ստեղծելու համար: Այդ զենքերը հնարավորություն են տալիս թիրախավորելու բնակչության որոշակի խմբերի կամ կարող են օգտագործվել առավել մեծ մասշտաբով՝ համատարած վնաս պատճառելու համար, որը կարող է ներառել նաև ցեղասպանության իրագործման սցենարներ: Ավելի նպատակային և չարաբաստիկ սցենարի դեպքում նորագույն կենսատեխնոլոգիաները կարող են օգտագործվել հատուկ կենսաբանական նյութեր մշակելու համար, որոնք նախագծված են որոշակի էթնիկ կամ գենետիկ խմբերի թիրախավորման միտումով: Սա կարող է հանգեցնել բնակչության որոշակի հատվածի վրա համակարգված հարձակումների՝ նրան ոչնչացնելու կամ վնասելու նպատակով:

Քեմբրիջի համալսարանի էկզիստենցիալ ռիսկի ուսումնասիրության կենտրոնի (CSER) հետազոտողներն իրենց զեկույցում նշում են, որ ապագայում կարող ենք գործ

---

62 Patrick J. Kiger, “Did Colonists Give Infected Blankets to Native Americans as Biological Warfare?,” https://www.history.com/news/colonists-native-americans-smallpox-blankets, դիտվել է՝ 10.04.2023:

63 Norbert Finzsch, “[...] Extirpate or remove that vermine”: 1 genocide, biological warfare, and settler imperialism in the eighteenth and early nineteenth century,” *Journal of Genocide Research* 10, no. 2 (2008): 224; Norbert Finzsch, “Biological Warfare in North America and Australia Smallpox and Colonial Violence,” *Australian Studies Journal* 35, (2021): 55-57; “Sydney’s smallpox outbreak of 1789 - Biological warfare against Aboriginal tribes,” http://nationalunitygovernment.org/node/964, դիտվել է՝ 02.12.2023:

64 Ստրիխնինը արևադարձային չիլիբուխա կոչվող բույսի սերմերից ստացվող ուժեղ թույն է:

65 Jonathan Watts, Jan Rocha, “Brazil’s ‘lost report’ into genocide surfaces after 40 years,” *The Guardian*, 29 May 2013, https://www.theguardian.com/world/2013/may/29/brazil-figueiredo-genocide-report.

ունենալ այնպիսի կենսաբանական զենքի հետ, որը կարող է թիրախավորել որոշակի էթնիկ խմբի անդամներին՝ ելնելով նրանց ԴՆԹ կազմից[66]:

Դեռևս 2017 թ. հրապարակվեց Չինաստանի ժողովրդական-ազատագրական բանակի ազգային պաշտպանության համալսարանի հրատարակած դասագիրքը՝ «Ռազմական ռազմավարության գիտություն», որում առաջին անգամ ներկայացվում էր կենսաբանական պատերազմի պոտենցիալը՝ ներառելով «հատուկ էթնիկ ուղղվածության գենետիկական հարձակումները»[67]: 2021 թ. ամերիկյան ռազմական փորձագետները եկան այն եզրակացության, որ Պեկինի հետաքրքրությունը գենետիկ զենքի նկատմամբ մասամբ պայմանավորված է այն ընկալմամբ, որ Չինաստանը հատկապես խոցելի կլինի, եթե իր հակառակորդները նախ զարգացնեն այդպիսի տեխնոլոգիա: Համեմատած այլ երկրների և հատկապես ԱՄՆ-ի հետ՝ Չինաստանի բնակչությունն առավելապես միատարր է, որի ավելի քան 90 տոկոսը էթնիկ հան չինացիներ են[68]:

Հարկ է նաև նկատել, որ գենային ինժեներիայի առաջընթացը ևս կարող է օգտագործվել օրգանիզմների կամ կենսատեխնոլոգիական գործիքների մշակման համար, որոնք կարող են խաթարել էկոհամակարգերի բնականոն վիճակը, ոչնչացնել մշակաբույսերը կամ առաջացնել հիվանդություններ, որոնք անուղղակիորեն ազդում են որոշ խմբերի կենսագործունեության վրա՝ դառնալով սովի և հիվանդությունների պատճառ:

Հատկապես լուրջ անհանգստություններ կան Clustered Regularly Interspersed Short Palindromic Repeats (կարճ՝ CRISPR) գենոմի խմբագրման տեխնոլոգիայի[69] առնչությամբ, որը կտրում է ԴՆԹ հաջորդականությունը՝ հեռացնելով հին գենը կամ տեղադրելով նորը: Տեխնոլոգիան կարող է օգտագործվել նաև գեները «միացնելու» կամ «անջատելու» համար՝ առանց դրանց հաջորդականությունը խախտելու: Իսկ CRISPR/Cas9-ը, որն այլ կերպ անվանում են նաև «գենետիկական մկրատ», կենսաբանների համար դարձել է գենետիկ խմբագրման ամենատարածված մեթոդը: Օգտագործելով այդ գործիքը՝ հետազոտողները կարող են չափազանց բարձր ճշգրտությամբ փոխել

66 Sarah Knapton, "World must prepare for biological weapons that target ethnic groups based on genetics, says Cambridge University," *The Telegraph*, August 13, 2019, https://www.telegraph.co.uk/science/2019/08/12/world-must-prepare-biological-weapons-target-ethnic-groups-based/.

67 Elsa B. Kania and Wilson Vorndick, "Weaponizing Biotech: How China's Military Is Preparing for a 'New Domain of Warfare'," *Defense One*, August 14, 2019, https://www.defenseone.com/ideas/2019/08/chinas-military-pursuing-biotech/159167/.

68 Joby Warrick, Cate Brown, "China's quest for human genetic data spurs fears of a DNA arms race," *The Washington Post*, September 21, 2023, https://www.washingtonpost.com/world/interactive/2023/china-dna-sequencing-bgi-covid/.

69 CRISPR-ի մասին ավելի մանրամասն տե՛ս "What is CRISPR? A technology that can be used to edit genes," *New Scientist*, https://www.newscientist.com/definition/what-is-crispr/#:~:text=The%20essence%20of%20CRISPR%20is,off%20without%20altering%20their%20sequence; Rodolphe Barrangou, "The roles of CRISPR-Cas systems in adaptive immunity and beyond," *Current Opinion in Immunology* 32, (2015): 36-41; Javier Zarracina, "A simple guide to CRISPR, one of the biggest science stories of the decade," *Vox*, December 27, 2018, https://www.vox.com/2018/7/23/17594864/crispr-cas9-gene-editing:

կենդանիների, բույսերի և միկրոօրգանիզմների ԴՆԹ-ն[70]: Ուստի CRISPR/Cas9-ի միջոցով մարդու բակտերիաների փոփոխությունը մտահոգություններ է առաջ բերում մարդու անվտանգության և արժանապատվության, ինչպես նաև ցեղասպանության հնարավորության առնչությամբ[71]:

**Արհեստական բանականության օգտագործումն** առանց համապատասխան կարգավորումների ստեղծում է բռնությունների, ատելության քարոզի, սպանություն-ների և տարբեր հանցագործությունների իրականացման վտանգ: Հատկապես խիստ մտահոգիչ է ինքնավար զենքերի կիրառման հարցը[72]: Արհեստական բանականու-թյան օգտագործմամբ կարող են նաև այնպիսի պայմաններ ստեղծվել, որ մարդն ընդհանրապես մասնակցություն չունենա ցեղասպանության իրագործման բուն գոր-ծընթացին: Առանձին անհատներ, իշխանության ներկայացուցիչներ կամ ահաբեկ-չական խմբեր, տիրապետելով այդպիսի տեխնոլոգիաների, կարող են հեռակառա-վարման կամ համապատասխան ծրագրի ներմուծման միջոցով և առանց մարդկային ռեսուրսի օգտագործման թիրախավորել տարբեր խմբերի և կարճ ժամանակամիջ-ցում ոչնչացնել նրանց[73]: Որոշակի խմբերի թիրախավորման համար առանձնապես վտանգավոր կարող է լինել արհեստական բանականությամբ օժտված ինքնավար դրոնների կիրառումը[74]:

Մեկ այլ վտանգ է այն, որ արհեստական բանականության մոդելները կարող են օգտագործել հանցագործներն ու ահաբեկիչները՝ կենսաբանական և քիմիական զենք ստեղծելու համար անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով[75]:

---

70 “The Nobel Prize in Chemistry 2020,” https://www.nobelprize.org/prizes/chemistry/2020/summary/, դիտվել է՝ 05.05.2024; Jon Cohen, “CRISPR, the revolutionary genetic ‘scissors,’ honored by Chemistry Nobel,” *Science*, October 7, 2020, https://www.science.org/content/article/crispr-revolutionary-genetic-scissors-honored-chemistry-nobel; Melody Redman, Andrew King, Caroline Watson, David King, “What is CRISPR/Cas9?,” *Archives of Disease in Childhood - Education & Practice Edition* 101, no. 4 (2016): 213-215; «Էմանուել Շարպենտիեն Երևանում պատմել է «գենետիկական մկրատի» մասին», https://mediamax.am/am/news/science/48560/, դիտվել է՝ 10.02.2024:

71 Mohammed Fatih Rasul et. al., “Strategies to overcome the main challenges of the use of CRISPR/Cas9 as a replacement for cancer therapy,” *Molecular Cancer* 21, no. 64 (2022): 22.

72 Future of Life Institute, “10 Reasons Why Autonomous Weapons Must be Stopped,” https://futureoflife.org/aws/10-reasons-why-autonomous-weapons-must-be-stopped/, դիտվել է՝ 08.03.2024:

73 Ավելի մանրամասն տե՛ս Նարեկ Պողոսյան, «Ցեղասպանության և զանգվածային սպանություն-ների իրագործման հնարավոր վտանգը արհեստական բանականության զարգացման համատեքս-տում», *Ցեղասպանագիտական հանդես* 8, no. 1 (2020), 120:

74 Sydney J. Freedberg, “Genocide Swarms & Assassin Drones: The Case for Banning Lethal AI,” *Breaking Defense*, March 08, 2019, https://breakingdefense.com/2019/03/genocide-swarms-assassin-drones-the-case-for-banning-lethal-ai/.

75 Justine Calma, “AI suggested 40,000 new possible chemical weapons in just six hours,” *The Verge*, March 17, 2022, https://www.theverge.com/2022/3/17/22983197/ai-new-possible-chemical-weapons-generative-models-vx; Jamie Durrani, “Drug discovery AI that developed new nerve agents raises difficult questions,” *Chemistry World*, March 31, 2022, https://www.chemistryworld.com/news/drug-discovery-ai-that-developed-new-nerve-agents-raises-difficult-questions/4015462.article, դիտվել է՝ 04.05.2024; Jonas Sandbrink, “ChatGPT could make bioterrorism horrifyingly easy,” *Vox*, August 7, 2023, https://www.vox.com/future-perfect/23820331/chatgpt-bioterrorism-bioweapons-artificial-inteligence-openai-terrorism;

«Google»-ի նախկին գործադիր տնօրեն Էրիկ Շմիդտը մտահոգություն է հայտնում արհեստական բանականության՝ կենսաբանական ոլորտում կիրառության առնչությամբ, քանի որ վատ մտադրություններ ունեցող դերակատարներն այդպիսով կարող են հասանելիություն ստանալ մեծ տվյալների բազաներ, որոնք ներառում են տեղեկատվություն, թե ինչպես է աշխատում կենսաբանությունը: Նա հատկապես ընդգծում է արհեստական բանականության միջոցով նոր վիրուսների ստեղծման հավանականությունը[76]:

«Rand» ամերիկյան հետազոտական կազմակերպության զեկույցում նշվում է, որ մեծ լեզվական մոդելները (LLM) կարող են օգտագործվել կենսաբանական հարձակումների պլանավորման համար, թեև դրանք չեն կարող կոնկրետ հրահանգներ տալ իրականում կենսաբանական զենք ստեղծելու համար[77]: Իսկ կենսաբանական զենքին առնչվող խնդիրների շուրջ «OpenAI» ընկերության իրականացրած հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ «ChatGPT-4»-ն ընդամենը որոշակի առավելություն է տալիս սովորական համացանցի նկատմամբ[78]: Այնուամենայնիվ, «ChatGPT»-ն ստեղծող «OpenAI»-ն որոշել է կառուցել վաղ նախազգուշացման համակարգ, որը կզգուշացնի մարդկանց, եթե արհեստական բանականությունը կարողանա կենսաբանական զենք ստեղծել[79]: Քանի որ արհեստական բանականության մոդելներն ավելի ու ավելի են կատարելագործվում ու կիրառվում՝ օժանդակելու հետազոտությունների իրականացմանն այնպիսի ոլորտներում, որոնց թիրախում պաթոգենները և քաղցկեղն են, ուստի դրանք համանման կերպով կարող են օգտագործվել նոր և ավելի վնասակար պաթոգեններ նախագծելու համար[80]:

Արհեստական բանականության տեղեկատվական գործիքները կարող են օգտագործվել նաև ցեղասպանական հանցագործություններն արդարացնելու և ժխտողա-

---

Dan Milmo, "AI chatbots could help plan bioweapon attacks, report finds," *The Guardian*, October 17, 2023, https://www.theguardian.com/technology/2023/oct/16/ai-chatbots-could-help-plan-bioweapon-attacks-report-finds; Thomas Gaulkin, "What happened when WMD experts tried to make the GPT-4 AI do bad things," *Bulletin of the Atomic Scientists*', March 30, 2023, https://thebulletin.org/2023/03/what-happened-when-wmd-experts-tried-to-make-the-gpt-4-ai-do-bad-things/:

76 Amanda Miller, "Bioweapons Designed by AI: a 'Very Near-Term Concern,' Schmidt Says," *Air & Space Forces Magazine*, September 12, 2022, https://www.airandspaceforces.com/bioweapons-designed-by-ai-a-very-near-term-concern-schmidt-says/?fbclid=IwAR1VUBtBr9NGrBkjSbW6HePVdC92-PEXpFLC1H2glWFazgnJLtwD3kVuy_c.

77 Christopher A. Mouton, Caleb Lucas, Ella Guest, "The Operational Risks of AI in Large-Scale Biological Attacks: A Red-Team Approach," *Research Report*, https://www.rand.org/pubs/research_reports/RRA2977-1.html, դիտվել է՝ 05.05.2024:

78 Amrita Khalid, "OpenAI says there's only a small chance ChatGPT will help create bioweapons," *The Verge*, February 2, 2024, https://www.theverge.com/2024/2/1/24058095/open-ai-bioweapon-study-preparedness-team.

79 Andrew Griffin, "ChatGPT creator building 'early warning system' for AI biological weapon – but says it probably won't happen," *The Independent*, February 1, 2024, https://www.independent.co.uk/tech/chatgpt-openai-chemical-weapon-ai-b2489030.html.

80 Janet Egan, Eric Rosenbach, "Biosecurity in the Age of AI: What's the Risk?," Policy Brief, November 6, 2023, https://www.belfercenter.org/publication/biosecurity-age-ai-whats-risk#_edn15.

կանությունը խրախուսելու համար: Օրինակ՝ երբ «Google» ընկերությունը փորձեց համատեղել արհեստական բանականության և որոնման համակարգերը, արհեստական բանականությունը սկսեց ստրկությունն ու ցեղասպանությունն արդարացնող պատասխաններ ներկայացնել[81]:

Մյուս կողմից՝ արհեստական բանականության՝ մարդկանց խմբերի նկատմամբ հսկողական գործիքները կարող են կիրառվել այդ խմբերի ներկայացուցիչներին մշտադիտարկման ենթարկելու և անհրաժեշտության դեպքում հետապնդումներ իրականացնելու նպատակով[82]: Ավելին՝ «Google»-ին պատկանող՝ արհեստական բանականությամբ զբաղվող «DeepMind» բրիտանական ընկերության և Օքսֆորդի համալսարանի հետազոտողները եկել են այն եզրակացության, որ արհեստական բանականության տեխնոլոգիաների զարգացումն անգամ կարող է գոյաբանական սպառնալիք ստեղծել ողջ մարդկության համար[83]:

**Կիբերհարձակումներ և տեղեկատվական մանիպուլյացիա**: Թվային դարաշրջանում տեղեկատվական զենքերը և կիբերպատերազմի տեխնիկան կարող են օգտագործվել բռնություն և պառակտումներ հրահրելու համար: Ներկայիս պայմաններում հնարավորություններ են ստեղծվել կիբերզենքերի միջոցով թիրախավորելու առանձին խմբերի կենսագործունեության համար առանցքային նշանակություն ունեցող ենթակառուցվածքներ, ինչպիսիք են, օրինակ, էներգետիկ ցանցերը, ջրամատակարարման, տրանսպորտային, առողջապահական համակարգերը և այլն:

Կիբերհարձակումների հնարավորությունները կարող են օգտագործվել հաղորդակցությունը և արձագանքման կամ վաղ նախազգուշացման համակարգերի գործունեությունը խաթարելու նպատակով: Եվ հատկապես խոցելի են բնակչության համար այն կարևոր ենթակառուցվածքները, որոնք ֆիզիկական և թվային միացյալ համակարգեր են[84]: Ի տարբերություն ավանդական կիբերհարձակման՝ կիբերֆիզիկական հարձակման (Cyber-Physical Attacks) նպատակը ոչ միայն տվյալների բազաներ կամ համակարգեր չարտոնված մուտք ունենալն է, այլև ֆիզիկական վնաս պատճառելը

---

81 Mehul Reuben Das, “Unintelligent Beyond Belief: Google’s AI search justifies genocide, lists out reasons why slavery was good,” Firstpost, August 22, 2023, https://www.firstpost.com/tech/news-analysis/googles-ai-search-justifies-genocide-lists-out-reasons-why-slavery-was-good-13026762.html; Avram Piltch, “Google’s AI Bots Tout ‘Benefits’ of Genocide, Slavery, Fascism, Other Evils,” *Tom’s Hardware*, August 22, 2023, https://www.tomshardware.com/news/google-bots-tout-slavery-genocide.

82 Budapest Centre within the Initiative, “How AI can either exacerbate or prevent genocides: Reflection based on the 10 Stages of Genocide,” February 2021, https://www.genocideprevention.eu/files/10_stages__AI.pdf, դիտվել է՝ 08.03.2024:

83 Michael K. Cohen, Marcus Hutter, Michael A. Osborne, “Advanced artificial agents intervene in the provision of reward,” *AI Magazine* 43, no 3 (2022): 282 - 293.

84 “How critical infrastructure across the globe is targeted by cyber attacks,” *Financial Times*, November 6, 2023, https://www.ft.com/partnercontent/yubico/how-critical-infrastructure-across-the-globe-is-targeted-by-cyber-attacks.html?twclid=21cfxzwcksjpdwr0qo3nr6vxiw#:~:text=These%20cyber%20attacks%20increasingly%20blur,transportation%20systems%20and%20financial%20networks; Paul Rostick, “Top 6 critical infrastructure cyber-risks,” *TechTarget*, February 22, 2022, https://www.techtarget.com/searchsecurity/tip/Top-6-critical-infrastructure-cyber-risks, դիտվել է՝ 02.03.2024:

կամ այդ համակարգերի գործունեությունը խափանելը[85]: Իսկ իրերի համացանցի[86] (IoT) զարգացումը, որը պետք է ապահովի առարկաների փոխազդեցության ցանցը, նոր հնարավորություններ է ստեղծում կիբերֆիզիկական հարձակումների համար[87]:

Կիբերգործիքները կարող են օգտագործվել նաև լրտեսական նպատակներով, մասնավորապես՝ որոշակի խմբերի հետապնդումների ենթարկելու համար հետևելու և նրանց մասին տեղեկատվությունը վերլուծելու նպատակով: Օրինակ՝ կիբերանվտանգության հետազոտողները բացահայտեցին, որ 2020 թ. մարտից շուրջ մեկ տարի բջջային լրտեսության հատուկ արշավ է իրականացվել քրդական էթնիկ խմբի դեմ՝ նրան դարձնելով հաքերային հարձակումների թիրախ[88]: Տվյալներ կան, որ տիբեթցիները ևս կիբերլրտեսության և հաքերային այլ հարձակումների թիրախ են դարձել[89]:

Նկատենք, որ կիբերհարձակումների թիրախ կարող են դառնալ նաև այն դատարանները, որոնք քննում են պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները: Այսպես՝ 2023 թ. սեպտեմբերին Միջազգային քրեական դատարանը հայտարարեց, որ իր համակարգչային համակարգը կոտրվել է, ինչը խաթարում է աշխարհի ամենահայտնի միջազգային հաստատություններից մեկի աշխատանքը, որը մշակում է ռազմական հանցագործությունների մասին խիստ զգայուն տեղեկատվություն[90]:

Բացի այդ՝ կիբերհարձակումների ենթարկվելու տեսանկյունից խոցելի են դառնում այն անձինք ու կազմակերպությունները, որոնք քայլեր են ձեռնարկում ցեղասպանության ճանաչման, կանխարգելման կամ ժխտողականության դեմ պայքարի ուղղությամբ: Օրինակ՝ «1923 թուրքական խումբ» անվանումով հաքերները 2011 թ. կոտրեցին արտասահմանյան 6713 կայքէջեր, որոնցում տեղ էին գտել Հայոց ցեղասպանու-

---

85 “Cyber-physical attack,” https://nordvpn.com/cybersecurity/glossary/cyber-physical-attack/#:~:text=Cyber%2Dphysical%20attack%20definition&text=Unlike%20in%20a%20traditional%20cyber,the%20operations%20of%20these%20systems, դիտվել է՝ 01.03.2024:

86 Իրերի համացանցը մի համակարգ է, որը կազմված է միմյանց խելացիորեն կապակցված սարքերից՝ ներկառուցված սենսորներով և մեքենաներով, որոնք էլ իրենց հերթին համացանցի միջոցով բազմաթիվ վայրերից հավաքագրում, մշակում և փոխանակում են անհրաժեշտ տվյալները:

87 George Loukas, *Cyber-Physical Attacks: A Growing Invisible Threat* (New York/Oxford: Elsevier, 2015), 9-11.

88 Ravie Lakshmanan, “Experts Uncover Mobile Spyware Attacks Targeting Kurdish Ethnic Group,” September 08, 2021, https://thehackernews.com/2021/09/experts-uncover-mobile-spyware-attacks.html, դիտվել է՝ 20.02.2024:

89 Tenzin Dalha, “The Cyber War Against Tibet,” *The Diplomat*, February 20, 2019, https://thediplomat.com/2019/02/the-cyber-war-against-tibet/; Jeff Stone, “A cyber-espionage effort against Tibetan leaders leveraged known Android, iOS vulnerabilities,” *CyberScoop*, September 24, 2019, https://cyberscoop.com/tibet-citizen-lab-spyware-espionage/; Thomas Brewster, “Tibetans Under Cyber Attack - And The Security Industry Isn’t Helping,” https://www.silicon.co.uk/workspace/tibetans-exploited-cyber-attacks-every-day-124988, դիտվել է՝ 11.03.2024:

90 Toby Sterling and Stephanie van den Berg, “War crimes tribunal ICC says it has been hacked,” *Reuters*, September 20, 2023, https://www.reuters.com/world/international-criminal-court-reports-cybersecurity-incident-2023-09-19/; “International Criminal Court attacked by cyber criminals,” https://www.cybertalk.org/2023/09/20/international-criminal-court-attacked-by-cyber-criminals/, դիտվել է՝ 10.03.2024:

թյան մասին հիշատակումներ: Կայքէջերը կոտրելուց հետո հաքերները թուրքերենով ու անգլերենով թողել էին հետևյալ հաղորդագրությունը. «Հայկական ստերին մի՛ հավատա, ամենամեծ ցեղասպանությունը դու ես արել, Ամերիկա՛»[91]: Եվ պատահական չէ նաև, որ թուրք հաքերներն ակտիվանում են հատկապես Հայոց ցեղասպանության տարելիցի նախաշեմին[92]:

**Միջազգային միջամտությունների ձախողում:** Որոշ դեպքերում հակամարտություններին արդյունավետորեն միջամտելու և խոցելի բնակչությանը պաշտպանելու հարցում միջազգային հանրության ձախողումը կարող է մեծացնել ցեղասպանության վտանգը: Վաղ նախազգուշացման նշաններին թույլ կամ ոչ համարժեք արձագանքները և վճռական գործողություններ ձեռնարկելու դժկամությունը կարող են քաջալերել հանցագործներին և հետագա բռնության հնարավորություն տալ: Ընդ որում, քաղաքական նկատառումները, ռազմավարական շահերը և մրցակցային առաջնահերթությունները կարող են խոչընդոտել ցեղասպանությունը կանխելուն կամ մեղմելուն ուղղված ժամանակին և արդյունավետ գործողությունները: Օրինակ՝ միջազգային մարդասիրական միջամտության ձախողումը Ռուանդայում պայմաններ ստեղծեց ցեղասպանության համար[93]:

**Իրավունքի գերակայության բացակայությունը և անպատժելիությունը**: Երբ չի գործում մարդու իրավունքների ոտնահարման համար պատասխանատվության նորմը, բռնություն գործադրողները կարող են անպատիժ գործել: Արդարադատության մեխանիզմների բացակայությունը և անհատներին ու խմբերին իրենց արարքների համար պատասխանատվության ենթարկելու անկարողությունը կարող են նպաստել ցեղասպանական մթնոլորտի ստեղծմանը: Իսկ փոքրամասնությունների իրավական պաշտպանության բացակայությունը կարող է նրանց խոցելի դարձնել բռնության և հալածանքների համատեքստում:

Այսպես՝ Կարմիր քմերների վարչակազմը Կամբոջայում (1975-1979) համակարգված թիրախավորում և սպանում էր նրանց, ովքեր ընկալվում էին որպես սպառնալիք իր գաղափարախոսությանը: Օրենքի գերակայության բացակայությունը նպաստեց այդ գործողություններին: Բրիտանացի լրագրող և մի շարք կենսագրականների հեղինակ Մեթյու Վելթինգն իր «Պոլ Պոտի Կամբոջան» գրքում խորությամբ վերլուծում և ներկայացնում է Կարմիր քմերների վարչակազմի իշխանության գալը, նրա վարած քաղաքականությունը և դրա կործանարար ազդեցությունը: Այս համատեքստում դիտարկվում է նաև օրենքի գերակայության և հաշվետվողականության բացակայությունը[94]:

---

91 «Թուրք հաքերները կոտրել են 6 հազար կայք, որոնք գրել են Հայոց ցեղասպանության մասին», https://news.am/arm/news/46492.html, դիտվել է՝ 20.03.2024:

92 «Թուրք հաքերներն ակտիվանում են ապրիլին՝ Ցեղասպանության տարելիցի նախաշեմին», https://armenpress.am/arm/news/706702/tureckie-khakeriy-aktivizirovalis-v-preddverii-ocherednoiy.html, դիտվել է՝ 20.03.2024:

93 Fred Aja Agwu, “The Challenge of Humanitarian Intervention Since Rwanda,” Council on Foreign Relations, https://www.cfr.org/councilofcouncils/global-memos/challenge-humanitarian-intervention-rwanda, դիտվել է՝ 20.03.2024:

94 Matthew Weltig, *Pol Pot’s Cambodia* (Minneapolis: Twenty-First Century Books, 2009).

**«Ցեղասպանություն» հասկացության արժեզրկումը**: Ընթացիկ միջազգային գործընթացներում շատ են դեպքերը, երբ առանց համապատասխան հիմքերի առկայության՝ տարբեր միջադեպեր միջազգային դերակատարների կողմից որակվում են որպես ցեղասպանություն, կամ ռազմական գործողությունների ընթացքում ցեղասպանության իրագործման մասին հնչում են տարբեր մեղադրանքներ, որոնք հետո չեն հաստատվում:

Օրինակ՝ Ուկրաինայում սկսված պատերազմի համատեքստում Ռուսաստանի գործողությունները ուկրաինական իշխանությունները որակում են որպես ցեղասպանություն[95]: Իր հերթին էլ Ռուսաստանն Ուկրաինային է մեղադրում ռուսախոս բնակչության նկատմամբ ցեղասպանություն իրագործելու մեջ[96], որի պատճառաբանությամբ էլ նախաձեռնվեց Ուկրաինայում հատուկ ռազմական օպերացիան: Հաագայում ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը սկսել է ՌԴ-ի դեմ Ուկրաինայի հայցի լսումները: Կիևը հայցը ներկայացրել էր ռուսական զորքերի՝ Ուկրաինա ներխուժումից մի քանի օր անց: Ընդ որում, Կիևը պնդում է, որ Ռուսաստանը չարաշահում է միջազգային իրավունքը՝ ասելով, որ ներխուժումն արդարացված է, քանի որ նախաձեռնվել է Արևելյան Ուկրաինայում ենթադրյալ ցեղասպանությունը կանխելու համար[97]:

Ցեղասպանություն հանցագործության իրավական սահմանումը տրված է «Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և պատժելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով[98]: Սակայն շատ հաճախ ցեղասպանություն որակումը տրվում է տարբեր հանցագործությունների՝ պայմանավորված դրանց հուզական ընկալմամբ: Իսկ որոշ դեպքերում էլ մարդկության դեմ ուղղված հանցագործություններն են որակվում որպես ցեղասպանություն: Սակայն, ի տարբերություն մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, ցեղասպանությունը ենթադրում է ազգային, էթնիկ, ռասայական, կրոնական խմբին մասամբ կամ ամբողջությամբ ոչնչացնելու մտադրություն: Իսկ իրավական չափանիշների թուլացումը, աշխարհաքաղաքական շահերի գերադասումը և «ցեղասպանություն» հասկացության անտեղի կիրառումը տարբեր միջադեպեր կամ գործընթացներ բնորոշելու համար արժեզրկում են այդ հանցագործության յուրահատկությունն ու ճանապարհ բացում ժխտողականության համար: Այդ է պատճառը, որ քննարկվում է անգամ «ցեղասպանություն» եզրույթը «թոշակի ուղարկելու» հարցը[99]:

---

95 "“Это не война, это геноцид”. Полный текст интервью Владимира Зеленского Би-би-си," *BBC News*, 14 апреля 2022, https://www.bbc.com/russian/features-61100748.

96 "Путин назвал геноцидом происходящие на Донбассе события," *Интерфакс*, 15 февраля 2022, https://www.interfax.ru/russia/822253.

97 Stephanie van den Berg, "World Court to hear Russian objections to Ukraine genocide case," *Reuters*, September 17, 2023, https://www.reuters.com/world/europe/world-court-hear-russian-objections-ukraine-genocide-case-2023-09-17/.

98 "Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide," https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocity-crimes/Doc.1_Convention%20on%20the%20Prevention%20and%20Punishment%20of%20the%20Crime%20of%20Genocide.pdf, դիտվել է՝ 02.02.2024:

99 Adam Kirsch, "Is It Time to Retire the Term ‘Genocide’?," *The Wall Street Journal*, December 8, 2023, https://www.wsj.com/politics/is-it-time-to-retire-the-term-genocide-8ae11ca2.

**Ժխտողականությունը** ևս կարող է դիտարկվել ցեղասպանության իրագործման սպառնալիք, քանի որ այն կարող է ստեղծել հանցագործության արդարացման, հետևաբար նաև դրա շարունակության և կրկնության պայմաններ: Օրինակ՝ Թուրքիան ոչ միայն հրաժարվում է առերեսվել սեփական պատմությանն, այլև մեծ ռեսուրսներ է ներդնում Հայոց ցեղասպանության պատմական իրողությունը հերքելու համար:

Ժխտողականությունը կարող է ինչպես ուղեկցել ցեղասպանական գործողություններին, այնպես էլ հետևել դրանց: Այս երևույթի նպատակը ցեղասպանություններին կամ զանգվածային վայրագություններին առնչվող պատմական փաստերի և ապացույցների մերժումը կամ խեղաթյուրումն է:

Ժխտման միջոցով ցեղասպանական հանցագործության հեղինակները ձգտում են թաքցնելու այն, նվազեցնելու դրա ազդեցությունը և կատարվածի մեղքը բարդելու զոհերի վրա: Եվ պատահական չէ, որ ցեղասպանության ժխտումը նույնիսկ դիտարկվում է որպես ցեղասպանության իրագործման առանձին փուլ[100]:

Ժխտումը կարող է նաև դժվարացնել ցեղասպանության կանխարգելումը: Եթե մարդիկ չեն հավատում, որ ցեղասպանություն է տեղի ունենում, ապա ավելի քիչ հավանական է, որ քայլեր կձեռնարկեն այն դադարեցնելու համար: Ահա թե ինչու են կարևոր ժխտողականության դեմ պայքարն ու մարդկանց ցեղասպանության վտանգների մասին իրազեկելը: Հայաստանը կարևոր դերակատարություն է ստանձնել ինչպես ժխտողականության դեմ պայքարում, այնպես էլ ցեղասպանություն հանցագործության մասին իրազեկվածությունը բարձրացնելու գործում:

## Ցեղասպանությունների կանխարգելման օրակարգը և Հայաստանի առաջարկությունները

Ընդհանուր առմամբ նշված սպառնալիքներին արձագանքելու տեսանկյունից կարևոր է ցեղասպանության և այլ ոճրագործությունների կանխարգելման միջազգային օրակարգը: 1990-ական թթ. Ռուանդայում և բալկանյան երկրներում ծավալված ցեղասպանական գործընթացները և ՄԱԿ-ի գործողությունների անկախ հետաքննությունը ցույց տվեցին, որ այս միջազգային կազմակերպությունը չի կարողացել պաշտպանել բնակչությանը: Եվ ժամանակի ընթացքում պարբերաբար բարձրացվում է այն հարցը, որ 1948 թ. ընդունված «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան համապատասխան մեխանիզմներ չի ապահովում ցեղասպանություն հանցագործության իրագործումը կանխելու համար: Ուստի ՄԱԿ-ի կողմից ցեղասպանությունների կրկնությունը կանխելու ուղղությամբ ավելի մեծ ջանքեր գործադրելու անհրաժեշտություն առաջացավ: 2004 թ.՝ Ռուանդայի ցեղասպանության տասներորդ տարելիցին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը հայտարարեց ցեղասպանության կանխարգելման հարցերով հատուկ խորհրդականի պաշտոնում իր ապագա նշանակման մասին և մշակեց ցեղասպանությունը կանխելու գործողությունների ծրագիր: Հինգ կետից բաղկացած այդ ծրագիրը ներառում էր՝

100 Gregory H. Stanton, “The Ten Stages of Genocide,” https://www.genocidewatch.com/tenstages, դիտվել է՝ 13.02.2024:

1) զինված հակամարտությունների կանխարգելում, որոնք սովորաբար ցեղասպանության համատեքստ են ստեղծում,
2) քաղաքացիական անձանց պաշտպանություն զինված հակամարտությունների ժամանակ,
3) անպատժելիության վերացում ազգային և միջազգային դատարաններում դատական գործընթացների միջոցով,
4) տեղեկատվության հավաքում և վաղ նախազգուշացում ՄԱԿ-ի ցեղասպանության կանխարգելման հարցերով հատուկ խորհրդականի միջոցով, որն առաջարկություններ է անում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ցեղասպանությունը կանխելու կամ դադարեցնելու գործողությունների վերաբերյալ,
5) շարունակաբար արագ և վճռական գործողությունների ձեռնարկում՝ ներառյալ ռազմական գործողությունները[101]:

2004 թ. հուլիսի 12-ին Քոֆի Անանը արգենտինացի իրավաբան Խուան Մենդեսին նշանակեց ցեղասպանության կանխարգելման հարցերով առաջին հատուկ խորհրդական[102]: Սակայն ՄԱԿ-ի գործադրած մեխանիզմները թերի են, և այս կառույցն ի վիճակի չէ ապահովելու ցեղասպանության կանխարգելման համաշխարհային օրակարգի առաջընթացը: Այդ իսկ պատճառով էլ աշխարհի տարբեր մասերում ցեղասպանական գործընթացները շարունակվում են: Ուստի ցեղասպանության կանխարգելման օրակարգն առաջ մղելու խնդիրը մնում է խիստ արդիական: Այդ իսկ պատճառով էլ առանձնահատուկ կարևորություն է ստանում նաև այս հարցում ՄԱԿ-ի անդամ առանձին պետությունների նախաձեռնողականությունը: Ուստի պատահական չէ, որ ցեղասպանության կանխարգելման ուղղությամբ Հայաստանի կողմից իրականացվող կարևոր աշխատանքներից է ՄԱԿ-ի շրջանակում ցեղասպանության կանխարգելման բանաձևերի ներկայացումը:

Ցեղասպանության խնդրին վերաբերող առաջին բանաձևը Հայաստանը ներկայացրել է դեռևս 1998 թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովում: Իսկ նույն թվականի դեկտեմբերի 2-ին այս բանաձևը, որի հիմնական նպատակն էր միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի ընդունման փաստի վրա, ինչպես նաև կոչ անել անդամ երկրներին ապահովելու կոնվենցիայի ուսումնասիրումն ու տարածումը, առանց քվեարկության ընդունվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում[103]:

Ժնևում գումարված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 28-րդ նստաշրջանում՝ 2015 թ. մարտի 27-ին, կոնսենսուսով ընդունվեց ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ Հայաստանի մշակած բանաձևը («Prevention of genocide»), որում

101“UN Secretary-General Kofi Annan’s Action Plan to Prevent Genocide,” http://www.preventgenocide.org/prevent/UNdocs/KofiAnnansActionPlantoPreventGenocide7Apr2004.htm, դիտվել է՝ 04.05.2024:

102 “Juan E. Méndez appointed first Special Adviser on the Prevention of Genocide. Genocide by UN Secretary-General Kofi Annan,” http://www.preventgenocide.org/prevent/UNSpecialAdvisorOnGenocide/JuanEMendezAppointedUNSpecialAdvisorOnGenocide12July2004.htm, դիտվել է՝ 04.05.2024:

103 «Ցեղասպանության կանխարգելման օրակարգ», https://www.genocideprevention.am/prevention/?lang=hy, դիտվել է՝ 02.04.2024:

ընդգծվում է, որ ցեղասպանություն հանցագործության ժխտման և արդարացման փորձերը վտանգում են անպատժելիության դեմ պայքարը, խոչընդոտում ցեղասպանության կանխարգելմանն ուղղված ջանքերի գործադրումը: Բանաձևով Մարդու իրավունքների խորհուրդն առաջարկում էր ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային դեկտեմբերի 9-ը՝ «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի ընդունման օրը, սահմանել ցեղասպանության զոհերի հիշատակի օր[104]:

Հատկապես ուշագրավ է, որ 2015 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան իր 69-րդ նստաշրջանում կոնսենսուսով ընդունեց Հայաստանի առաջարկած՝ դեկտեմբերի 9-ը ցեղասպանության զոհերի հիշատակի ու արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր հռչակելու վերաբերյալ բանաձևը[105]: Ըստ այդմ պատրաստվեց և գործարկվեց միջազգային օրվա կայքէջը[106]:

Օրվա ընտրությունը պատահական չէր. 1948 թ. դեկտեմբերի 9-ին է ընդունվել «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան: Հայաստանը նախաձեռնել և կազմակերպել է «Ընդդեմ ցեղասպանություն հանցագործության» գլոբալ փորումները, որոնք տեղի են ունեցել 2015, 2016, 2018 և 2022 թվականներին: Այս քայլերն առանցքային նշանակություն ունեն, քանի որ հայ ժողովուրդը դեռևս կրում է ցեղասպանություն դաժան հանցագործության վերքերը: Եվ այս տեսանկյունից կանխարգելման օրակարգում առանձնահատուկ կարևորություն ունի նախ իրագործման արդի սպառնալիքների հասցեագրումը, ապա դրանց չեզոքացման կամ կանխման ուղղությամբ միջազգային ջանքերի համատեղումը: Ընդ որում, կարևոր են այս ուղղությամբ պատկերացումների ու համապատասխան քաղաքականության ձևավորումը և գործողությունների պլանավորումը ոչ միայն պետական մակարդակով, այլև անհատական: Ինչպես «Genocide» եզրույթի հեղինակ Ռաֆայել Լեմկինն է նշում. «Եթե դուք գործում եք հանուն խղճի, դուք ավելի ուժեղ եք, քան աշխարհի ցանկացած կառավարություն»[107]:

## MODERN THREATS OF GENOCIDE

---

104 «Ցեղասպանության ժխտումը վտանգում է անպատժելիության դեմ պայքարը. ՄԱԿ-ն ընդունել է ՀՀ-ի ներկայացրած Ցեղասպանության…», https://www.tert.am/am/news/2015/03/28/UN-genocide-resolution/1630726, դիտվել է՝ 02.04.2024:

105 «Ցեղասպանության զոհերի հիշատակի և արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օրվան նվիրված միջոցառում ՄԱԿ-ում», https://www.mfa.am/hy/press-releases/2016/12/09/un-gen-com/6763, դիտվել է՝ 05.05.2024:

106 “International Day of Commemoration and Dignity of the Victims of the Crime of Genocide and of the Prevention of this Crime, 9 December,” https://www.un.org/en/observances/genocide-prevention-day, դիտվել է՝ 02.02.2024:

107 “Raphael Lemkin Quotes”, https://quotefancy.com/quote/1767191/Raphael-Lemkin-If-you-act-in-the-name-of-conscience-you-are-stronger-than-any-government, դիտվել է՝ 02.09.2024:

*Narek M. Poghosyan*
*Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia*

## SUMMARY

The article discusses the persistent and evolving threat of genocide throughout history and into modern times. Despite significant human progress, the danger of targeting ethnic, religious, and racial groups remains, with new threats emerging.

Among the contemporary threats to the realization of genocide, the article considers the exacerbation of ethnic and religious conflicts, political instability, disinformation and propaganda to influence public perceptions, dehumanization and hate speech, the emergence and spread of extremist ideologies, climate, environmental change and the issue of resource scarcity, forced displacements and refugee crises, economic inequality and marginalization, the proliferation of arms and militarization of society, development of biotechnology, use of artificial intelligence, cyber-attacks, and information manipulation. Additionally, the lack of rule of law, impunity, and the devaluation and denial of the concept of genocide create new threats.

The article emphasizes the importance of a proactive international agenda for the prevention of genocide and other crimes, highlighting the crucial role of individual UN member states. Armenia's active engagement in presenting resolutions on genocide prevention within the UN framework is cited as a significant example of such proactiveness.

**Keywords**: genocide, ethnic, religious and racial groups, contemporary threats, targeting, hatred, violence, international prevention agenda.

## СОВРЕМЕННЫЕ УГРОЗЫ ГЕНОЦИДА

*Нарек М. Погосян*
*Фонд "Музей-институт Геноцида армян," Армения*

## РЕЗЮМЕ

В статье рассматривается постоянная и развивающаяся угроза геноцида на протяжении истории и в современных условиях. Несмотря на значительный прогресс человечества, опасность уничтожения этнических, религиозных и расовых групп остается, и появляются новые угрозы.

Среди современных угроз реализации геноцида в статье рассматриваются обострение этнических и религиозных конфликтов, политическая нестабильность, дезинформация и пропаганда для влияния на общественное мнение, дегуманизация и язык вражды, возникновение и распространение экстремистских идеологий, изменение климата и проблема дефицита ресурсов, вынужденные переселения и кризисы беженцев,

экономическое неравенство и маргинализация, распространение оружия и милитаризация общества, развитие биотехнологий, использование искусственного интеллекта, кибератаки и манипуляция информацией. Кроме того, отсутствие верховенства закона, безнаказанность, девальвация и отрицание концепции геноцида создают новые угрозы.

В статье подчеркивается важность проактивной международной повестки для предотвращения геноцида и других преступлений, отмечая решающую роль отдельных государств-членов ООН. Активное участие Армении в представлении резолюций по предотвращению геноцида в рамках ООН приводится как значительный пример такой проактивности.

**Ключевые слова**: геноцид, этнические, религиозные и расовые группы, современные угрозы, преследование, ненависть, насилие, международная повестка дня по предотвращению.

## REFERENCES

Poghosyan, Narek. *Ցեղասպանության և զանգվածային սպանությունների իրագործման հնարավոր վտանգը արհեստական բանականության զարգացման համատեքստում* [The possible threat of genocide and mass murder in the context of the development of artificial intelligence]. *Ts'eghaspanagitakan handes* 8, no. 1 (2020): 120.

Manukyan, Suren. *Ապամարդկայնացման երևույթը ցեղասպանությունների իրականացման գործընթացում* [The phenomenon of dehumanization in the process of carrying out genocides]. *Ts'eghaspanagitakan handes* 5, no. 2 (2017): 18-34.

«Ադրբեջանի ագրեսիայից հետո Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածը ցեղասպանության տեսակ է. Լուիս Մորենո Օկամպոյի հարցազրույցը» [What happened in Nagorno-Karabakh after Azerbaijan's aggression is a type of genocide. Interview of Luis Moreno Ocampo]. https://armenpress.am/arm/news/1123809.html.

«Էմանուել Շարպենտիեն Երևանում պատմել է «գենետիկական մկրատի» մասին» [Emmanuel Charpentier told about "genetic scissors" in Yerevan]. https://mediamax.am/am/news/science/48560/.

«ԼՂ հայերը մոտ ապագայում կարող են լուրջ ֆիզիկական կամ հոգեկան վնասներ կրել. Խուան Մենդես» [Nagorno-Karabakh Armenians may suffer serious physical or mental damage in the near future. Juan Mendez]. https://armenpress.am/arm/news/1118120/.

«Թուրք հաքերները կոտրել են 6 հազար կայք, որոնք գրել են Հայոց ցեղասպանության մասին» [Turkish hackers hacked 6,000 websites that wrote about the Armenian Genocide]. https://news.am/arm/news/46492.html.

«Թուրք հաքերներն ակտիվանում են ապրիլին՝ Ցեղասպանության տարելիցի նախաշեմին» [Turkish hackers are active in April, on the eve of the Genocide anniversary]. https://armenpress.am/arm/news/706702/tureckie-khakeriy-aktivizirovalis-v-preddverii-ocherednoiy.html.

«Ցեղասպանության կանխարգելման օրակարգ» [Genocide prevention agenda]. https://www.genocideprevention.am/prevention/?lang=hy.

«Ցեղասպանության ժխտումը վտանգում է անպատժելիության դեմ պայքարը. ՄԱԿ-ն ընդունել է ՀՀ-ի ներկայացրած Ցեղասպանության...» [Genocide denial endangers the fight against impunity. The UN accepted the Genocide introduced by Armenia…]. https://www.tert.am/am/news/2015/03/28/UN-genocide-resolution/1630726.

«Ցեղասպանության զոհերի հիշատակի և արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օրվան նվիրված միջոցառում ՄԱԿ-ում» [An event at the United Nations dedicated to the International Day of Commemoration and Dignity of Genocide Victims and the Prevention of that Crime]. https://www.mfa.am/hy/press-releases/2016/12/09/un-gen-com/6763.

## Հեղինակի մասին
## About the Author
## Об авторе

**Նարեկ Մ. Պողոսյան**, պատմական գիտությունների թեկնածու, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի կողմից, տեխնոլոգիական առաջընթացը և ցեղասպանության իրագործման ռիսկերը, ցեղասպանությունների առանձին օրինակներ (Բանգլադեշ, Կամբոջա, Թիմոր, Անֆալ և այլն), համեմատական ցեղասպանագիտություն, էլիտիցիդ:

Էլ. փոստի հասցե՝ poghosyan.narek@genocide-museum.am

Narek M. Poghosyan, PhD in History, Researcher at the Comparative Genocide Studies Department, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields: the study of the Armenian genocide by Raphael Lemkin, technological progress and the risks of committing Genocide, other Genocides (Bangladesh, Cambodia, Timor, Anfal campaign, etc.), comparative genocide studies, eliticide.

E-mail: poghosyan.narek@genocide-museum.am

**Нарек М. Погосян**, кандидат исторических наук, научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований – изучение проблемы Геноцида армян Рафаэлем Лемкиным, технологический прогресс и риски совершения геноцида, отдельные примеры геноцидов (Бангладеш, Камбоджа, Тимор, Анфаль и др.), сравнительное изучение геноцидов, элитицид.

Эл. почта: poghosyan.narek@genocide-museum.am

# ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

*Հեղինակների համար*

- Հոդվածը պետք է ներկայացնել «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(եթե գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարեխղճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Ցեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորույթ և արդիականություն:
- Հոդվածում (հիման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

*Գրախոսների համար*

«Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առվազն մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝
- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Ցեղասպանագիտական հանդեսի»արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

*Խմբագրակազմի համար*

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

*Հեղինակային իրավունք*

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը (©) պատկանում է «Ցեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

*Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր*

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ում պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Ցեղասպանագիտական հանդեսի»խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

## ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

*Ցեղասպանագիտական հանդեսում* հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

*Ցեղասպանագիտական հանդեսում* հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, որակական և տեխնիկական պահանջների բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

*Ցեղասպանագիտական հանդեսին* ներկայացված հոդվածները գրախոսվում են առնվազն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ Ցեղասպանագիտական հանդեսի տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

*Ցեղասպանագիտական հանդեսում* հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

## *ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ*

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր — » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 150-200 բառ:
7. Անհրաժեշտության պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո (եթե կա երախտագիտության խոսք, ապա դրանից հետո) գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
   Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի անուն, ազգանուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝

Marutyan, Harutyun. *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

*Սուրիական պարեցոյց* [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'rpe'rean, 1924;

*Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ* [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Sahakyan, Vera. «Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթ-ը Մախսուսե) ձևավորման նախադրյալները», *Հայոց ցեղասպանություն – 100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու* ["Prerequisites of the Formation of Special Organization (Teşkilât-i Mahsusa)"

in Armenian Genocide -100. Collection of Papers of the International Conference]. Yerevan: Gitut'yun, 2016, 198-212.

Marutyan, Harutyun. «Ինքնութեան «ամրացման» երկու հնարաւորութիւններ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնների համատեքստում», *Սփիւռք եւ ինքնութիւն* (խմբ.՝ Շահան Գանտահարեան) ["Two 'possibilities' of strengthening Identity in the Context of Armenia-Diaspora Relations," in Diaspora and Identity (ed. Shahan Kandaharian)]. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018, 219-233.

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire's State Orphanages (1915-1918)]. *Ts'eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Antonyan, Aram. «Տոքտ. Ալթունյան» [Dr. Alt'unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12.

10. Ներկայացնել նաև հեղինակի մասին տվյալներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ գրել նաև պաշտոնը և աշխատավայրը, ուսումնասիրությունների ոլորտը, էլ. փոստի հասցեն:

*ՀՂՈՒՄՆԵՐ*

11. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition*-ի:
Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)
Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

*Ա. Գրքեր* (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:
2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Ереван: Музей-институт Геноцида армян, 1998), 55.
3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը,

գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին*, 55:
Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.
Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», "и др.", "et. al.", որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

*Բ. Թարգմանված գրքեր*

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:
1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146.

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը: Օր.՝
1. Lahiri, *In Other Words*, 184.

*Գ. Թվային գրքերի (ebook)*

Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, Moby-Dick; or, The Whale (New York: Harper & Brothers, 1851), 627, http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html, դիտվել է 17.07.2019:
2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, http://press-pubs.uchicago.edu/founders/, դիտվել է 17.07.2019:
3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.
4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle.

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը: Օր.՝
1. Melville, *Moby-Dick*, 722–723.
2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.
3. Borel, *Fact-Checking*, 104–105.
4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

*Դ. Ժողովածուներ*

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական, հոդվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Օր.՝

1. Vahakn Dadrian, "Ottoman Archives and Denial of the Armenian Genocide," in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin's Press, 1992), 280.
2. Վերժինե Սվազլյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90*, հոդվածների ժողովածու (Երևան, ԵՊՀ հրատ., 2005), 471:
3. Сурен Манукян, "Наказание за верность." От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения," *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и выступления участников V Международной научно-практической конференции* (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.

2) Բազմակի ոչ շարունակական հղումներրի դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը:
Օր.՝
1. Dadrian, "*Ottoman Archives,*" 471.
2. Սվազլյան, «*Հայոց ցեղասպանությունը*», 471:
3. Манукян, "*Наказание за верность,*" 648.

*Ե. Հոդվածներ*

1) Հոդվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև ՝ DOI-ն (Digital Object Identifier): Օր.՝

1. Rouben P. Adalian, "Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire," *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.
Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, "Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality," *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, https://doi.org/10.1086/690235
3. Peter LaSalle, "Conundrum: A Story about Reading," *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.
4.Շուշան Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը. հռովարտակներ, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Adalian, "Comparative Policy and Differential Practice," 35.
2. Keng, Lin, and Orazem, "Expanding College Access," 23.
6. Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

*Զ. Համահեղինակությամբ հոդվածներ*

Երեքից ավել համահեղինակ ունեցող հոդվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

*Է. Մամուլ*

Մամուլի հոդվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսաննա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ* օրաթերթ (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html.
4. Խմբագրական, *Ազատամարտ* օրաթերթ (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝
1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

*Ը. Թեզեր և ատենախոսություններ*

Թեզերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեզի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝
1. Cynthia Lillian Rutz, “King Lear and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի կողմից» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեզի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը:
1. Rutz, “King Lear,” 158.
2. Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը», 77:

*Թ. Համացանց*

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html, դիտվել է 17.07.2019:
2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php, դիտվել է 17.07.2019:
3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը(երկար վերնագրերի դեպքում՝ կրճատ): Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”
2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:
3. Bouman, “Black Hole.”

12. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային նամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան նամակ հեղինակին, 1 օգոստոսի 2017 թ.:
2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 մարտի 2017 թ.:

13. Ամսաթվերի գրելաձև

1. Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ.կամ 2019 թ. փետրվարի 1:
2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ 25.01.2019:
3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

14. Տառադարձություն

*Հայերեն*

Ա ա - A a
Բ բ - B b
Գ գ - G g
Դ դ - D d
Ե ե - E e
Զ զ - Z z
Է է - E′ e′
Ը ը - Ë ë
Թ թ - T’ t’
Ժ ժ - Zh zh
Ի ի - I i
Լ լ - L l
Խ խ - Kh kh
Ծ ծ - Ts ts
Կ կ - K k
Հ հ - H h
Ձ ձ - Dz dz
Ղ ղ - Gh gh
Ճ ճ - Ch ch
Մ մ - M m
Յ յ - Y y
Ն ն - N n
Շ շ - Sh sh
Ո ո - Vo vo (բառամիջում գրել o ձևով)
Չ չ - Ch’ ch’
Պ պ - P p
Ջ ջ - J j
Ռ ռ - R’ r’
Ս ս - S s
Վ վ - V v
Տ տ - T t
Ր ր - R r
Ց ց - Ts’ ts’
ՈՒ ու - U u
Փ փ - P’p’
Ք ք - Q q
ԵՎ և Ev ev
Օ օ - O′ o′
Ֆ ֆ - F f

*Ռուսերեն*

А а - A a
Б б - B b
В в - V v
Г г - G g
Д д - D d
Е е - E e
Ё ё - Io io
Ж ж - Zh zh
З з - Z z
И и - I i
Й й - Ï ï
К к - K k
Л л - L l
М м - M m
Н н - N n
О о - O o
П п - P p
Р р - R r
С с - S s
Т т - T t
У у - U u
Ф ф - F f
Х х - Kh kh
Ц ц - Ts ts
Ч ч - Ch ch
Ш ш - Sh sh
Щ щ - Shch shch
Ъ ъ - “
Ы ы - Y y
Ь ь - ‘
Э э - E′ e′
Ю ю - Iu iu
Я я - Ia ia

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթը՝ օֆսեթ,
տպաքանակը՝ 100:

Կազմի ձևավորումը՝ Քրիստինե Վարդանյանի
Համակարգչային ձևավորումը՝ Արաքս Ալեքսանյանի

Տպագրությունը՝ «ՀՈՎՍԵՓՅԱՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վ. Վաղարշյան 24/3
Հեռ.՝ +374 43 10-70-90
hovsepyanprint@gmail.com